ԷՌՆԵՍՏ ՄՈԴԵՐԶՈՆ

ՄԱՏՆԱԳԻՏ ԵՎ ԹԱՆԵՐՈՒՄ

երկրորդ հրատարակություն

(ոգիները, դևերը և չար
ուժերը հոգևոր տեսանկյունից
ու դրանցից ազատվելու միջոցները)

ԵՐԵՎԱՆ - 2004

Ռուսերենից թարգմանեց՝
Անահիտ Մաղոյան-Խուդավերդյանը
Խմբագիր՝ Մեհրուժան Բաբաջանյան
Համակարգչային շարվածքը՝ Էդիկ Վերդյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4
Խոսք հեղինակի 14
Ինչո՞ւ անդրադարձա այս նյութին 15
Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ 21
- Երեխաների զոհաբերություն 22
- Գուշակություն 24
- Նշանների մեկնաբանում 27
- Կախարդություն 31
- Ոգիների հմայություն 37
ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱ ԿԱՏԱՐՎՈՒՄ 43
- Գորտնուկների «բուժում» 43
- Ատամնացավի հմայում 47
- Երկնային և հրե գրեր 53
- Մովսեսի 6-րդ և 7-րդ գրքերը 54
ԿԱԽԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 56
- Աղոթելու ուժ չկա 57
- Խաղաղության կորուստ 58
- Մտքեր ինքնասպանության մասին 58

- Սրբապիղծ մտքեր 59
- Աստծո խոսքի ընկալման բացակայություն 60
- Մտքեր սպանության մասին..... 61
- Խաղաթղթերով գուշակություն..... 65
- Ոգեկանչության զոհերը 73
- Գավաթ պտտելը 75
- Մագնետիզմ 78
- Վտանգավոր փորձեր 79
- Հիպնոս 81
- Աստվածիմացություն 87
- Սպիրիտուալիզմ 89
- Աստղագուշակություն..... 93
ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ ՍԱՏԱՆԱՅԻ
ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ..... 94
- Մեղքի գիտակցում 94
- Զղջում 97
- Հույս և աղոթք 99
- Նեցուկ աղոթքներով 100
- Պահք 101
- Գոհություն 102
- Կանչել Հիսուսի անունը 102
- Սրբապիղծ մտքեր մի արտաբերիր..... 103
- Ոչնչացրեք կախարդության հետ
կապված առարկաներն ու թղթերը 103
- Մշտապես Աստվածաշունչ կարդա 104
- Անդադար աղոթք 105
- Շփում Աստծո զավակների հետ 106
- Դաշինք Աստծո հետ..... 107
- Վերջաբանի փոխարեն..... 108

ՆԱԽԱԲԱՆ

Այս մասին ստիպված ենք գրում հայորդիներին, քանի որ կախարդության չարահնար մեղքը բազում հոգիներ է կործանել ու շատ ընտանիքների քայքայման պատճառ հանդիսացել: Եվ այս գրքի նպատակն է հնարավորին չափ հոգևոր լույս սփռել չար ուժերի մութ գործերի վրա, որպեսզի իմանանք, թե ինչ կործանարար զորություններով է շրջապատված մարդը. և ամենակարևորը՝ դրանցից ազատագրվելու միջոցները: Ներկայացվող նյութերի մեջ կլինեն ոմանց համար դեռևս անհայտ մոլորությունների տեսակներ, բայց ուշադիր ընթերցողը կհամոզվի, որ դրանց բոլորի արմատը մեկն է՝ ճշմարտության թշնամին ու ստության հայրը՝ այսինքն սատանան, որը սկսած դեռ Ադամից ու Եվայից, դրանք մեզ փորձում է ներկայացնել որպես աստվածային ճշմարտություններ: Իսկ ոմանք նույնիսկ չեն էլ հավատում սատանայի գոյությանը, որն է ամենամեծ մոլորությունն ու սկիզբը բոլոր չարիքների: Այդ պատճառով Պողոս առաքյալը հույժ ծանոթ լինելով դիվային այդ զորություններին՝ զգուշացնում է. «Զլինի թե զրկանք կրենք սատանայից» *(Բ. Կորնթ. Բ, 11):*

Հիմա կարդանք Հին Կտակարանից, երբ Աստված Իր ընտրյալ ծառա՝ Մովսես մարգարեի

միջոցով հրեա ժողովրդին զգուշացրեց. «Ձեր մեջ թող չգտնվի այնպիսի մեկը, որ զբաղվի դյուցազությամբ, գուշակությամբ, կախարդությամբ կամ էլ վհուկ ու սուտ մարգարե լինի, մեռելահարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար գարշելի է նա, ով այդպիսի բաներով է զբաղվում» (Բ. Օրենք ԺԸ. 10-12)։

Դժբախտաբար այն ինչ Աստված գարշելի է համարում, այսօր այդ ախտերի մեծ մասը առկա են մեր ժողովրդի մեջ, մանավանդ կախարդության մեղքը, այսինքն՝ մարդկանց կողմից սատանայական չար ուժերի միջոցով իբր ապագան կանխագուշակելով, իրենց նպատակին հասնելու ցանկությունը: Օրինակ, շատ անմիտ կանայք (գրում եմ կանայք, որովհետև կախարդանքներով զբաղվողներն ու նրանց «ծառայություններից» օգտվողները մեծամասամբ կինարմատներն են լինում), իրենց կյանքի կամ ընտանեկան անախորժությունները հարթելու նպատակով դիմում են գրբացների, կախարդների և այլ վհուկների, որոնք զանազան ձևերով իբր «օգնում են» թակարդ ընկած այդ խեղճ զոհերին, որոնք չեն էլ պատկերացնում, որ նման ձևով երջանկության հասնելու համար, կապվել են չար սատանային, որն իր ծառաների՝ կախարդների միջոցով իշխանություն է ստանում այդ մոլորյալների ու նրանց ընտանիքների անդամների վրա, որոնց կյանքը դրանից հետո դառնում է ավելի դժնդակ, լի զանազան փորձանքներով և դժբախտություններով: Իսկ շատերն էլ փուչ հետաքրքրությունից դրդված՝ զբաղվում են ըստ իրենց, «անմեղ» թվացող ոգեհարցությամբ (спиритизм)*, որին Սուրբ Գիրքը կոչում է մեռելահարցուկություն: Նմանները չեն հասկանում, որ այդ ձևով նրանք հարաբերվում են անձամբ դևերի հետ, որոնք ինչ որ մեռածի անունով նրանց մի քանի հարցերին պատասխանելով՝ մտնում են այդ անձանց ներաշխարհը ու հետզհետե իշխանություն բանեցնելով, դրդում են զանազան անցանկալի մեղքերի, իսկ վերջում էլ արդեն անօգնական ու կամազուրկ դարձաց այդ հոգիներին կարող են մինչև անգամ ինքնասպանության դուռը հասցնել:*

Այս բոլորի պատճառը այն է, որ տասնյակ տարիներ ազգովի կտրված լինելով մեր նախնիների սուրբ հավատքից ու ճշմարտության խոսքից՝ Աստվածաշնչից, կամա թե ակամա հաղորդակից ենք դարձել սատանայի մոլորեցուցիչ գործերին: Եվ չունենալով տարրական հոգևոր կրթություն ու շփվելով ոգեղեն բնույթի այդ ուժերի հետ, դրանք մանկամտորեն ընդունել ենք որպես թե աստվածային զորություն ու ընկել դևերի ճանկը:

Ընթերցողներից շատերը ծանոթանալով շարադրված նյութերին, պիտի զարմանան, որ իրենք նույնպես տարիներ շարունակ անգիտակցաբար

օգտվելով նման «ծառայություններից» հայտնվել են չարի ճիրաններում: Ահա այդ հոգևոր անգիտության պատճառով է, որ զանազան ***«Երազահաններ», «Բախտագուշակության աղյուսակներ», «Ոսկե բարեկամ», «Սողոմոնի գրեր», «Երկնքի յոթ բանալիներ.*** *(նետեր)»*, *կամ էլ շատերին հայտնի* ***«Եփրեմվերդի»*** *մոլորեցուցիչ գրքերը անգիտօրեն ընդունել ենք որպես թե աստվածային ճշմարտություններ և խճճվել դրանցով լարած սատանայի որոգայթներում: Օրինակ, «Եփրեմվերդին» հունարեն «էֆեմերիտե» բառից է, որ նշանակում է աստղագուշակություն: Իսկ մեզանից շատերն էլ անձամբ շփվել են այսպես կոչված* ***«պայծառատեսների», «ոգեկանչների», «մոմ թափողների», «վախ չափողների», «թուղթ ու գիր անողների», «գիրկապ քանդողների», «թալիսմաններով զորացնողների», «նետ արձակողների», «մաղ պտտողների», «եղունգ նայողների», «սուրճի բաժակի մրուրով գուշակողների», «խաղաթղթերով բախտ բացողների»*** *և այլոց հետ: Շատերը այցելելով նրանց «աշխատավայր», զարդարված զանազան սրբապատկերներով, մոմերով ու խաչերով, որ միամիտ այցելուների համար ստեղծում է բարեպաշտության կեղծ մթնոլորտ, պարզամտորեն հավատալով, խաբվել են: Իսկ ոմանք էլ իրենց հոգեկան անխաղաղության պատճառով դիմել են բազմաթիվ «էքստրասենսների», որոնք Աստծու անունը հոլովելով, իբր տկարություններ են «բուժում»: Շատերս դեռ լավ հիշում ենք դրանցից մեկին՝ Կաշպիրովսկուն, որը հեռուստաէկրանի դիմաց նստած հիվանդներին էր «բժշկում»: Բայց շատերը այդ սեանսների ժամանակ ստանալով թվացյալ ցավազրկում՝ հետագայում ընկել են ավելի վատթար հոգեվիճակների մեջ: Միայն հետո, լրագրային տվյալներից իմացանք նրա բազմաթիվ զոհերի մասին՝ նույնիսկ մանկահասակների, որոնք այդ «հանդիպումներից» հետո հոգեկան խանգարումներ են ստացել ու փորձել են ինքնասպան լինել: Այս տողերի հեղինակը 1992 թ. այն ցուրտ ու խավար տարիներին այդպիսի մի «հանդիպման» մասնակցեց Երևանի մարզահամերգային դահլիճում: Տեղյակ լինելով այդ սեանսների բնույթին ու հետևանքներին, մի քանի հավատացյալների ու եկեղեցու քահանայի հետ, զինված Խաչով ու Ավետարանով, հատուկ գնացինք ու հարց տվեցինք Կաշպիրովսկուն. «Ո՞ւմ անունով կամ ի՞նչ զորությունով ես գործում»: Նա պատասխանեց. «Ես եկել եմ Հորս անունով»: Մենք հարցրինք. «Իսկ ո՞վ է քո Հայրը»: Նա լռեց: Բայց մեզ արդեն ամեն բան պարզ էր. նա մեջբերում արեց անձամբ Հիսուսի խոսքերը, քանզի միայն Հիսուսն էր եկել մեզ բոլորիս սիրող Երկնավոր Հոր Անունով, Նրա կամքը կատարելու, իսկ մենք գիտենք, որ Կաշպիրովսկին եկել էր իր Հոր՝ սատանայի կամքը գործադրելու,*

ինչպես որ Տերն ասաց. «Դուք ձեր հորից՝ սատանայից եք ու ձեր հոր բաղձանքն եք ուզում կատարել»: *Այդ պատճառով, երբ Կաշպիրովսկուն բազմաթիվ անգամներ հարցրել են, թե ինչու նա չի ուզում մկրտվել, նա միշտ խուսափողական պատասխաններ էր տալիս: Իսկ մի անգամ խոստովանել է, որ եթե ինքը մկրտվի, ապա կզրկվի իր ունեցած զորությունից: Բայց քրիստոնյաներս լավ գիտենք, թե դա ինչ զորություն է, որովհետև մկրտվողը քահանայի հետ, բոլորի առաջ պետք է հայտարարի.*

«Հրաժարվում ենք սատանայից և նրա խաբեություններից, նրա պատրանքներից, նրա խորհուրդներից, նրա ընթացքներից, նրա չար կամքից, նրա չար հրեշտակներից, նրա չար ծառաներից, նրա չար կամարարներից և նրա ողջ չար զորությունից. հրաժարվելով հրաժարվում ենք»:

Մի հոգևոր ախտ էլ կա տարածված մարդոց որդիների ու նաև հայոց ազգի մեջ. դա անեծքն է, որը առաջին հայացքից կարծես թե կախարդության հետ կապ չունի, բայց իրականում անիծողը իր սրտի չարությունից առաջնորդված, այդ պահին օգնության է կանչում սատանային, որ դիմացինին վնասի: Զգուշանալով, զգուշանա՛նք այդ չարությունից ևս, մանավանդ կանայք, որոնց լեզուները ճկուն են այս մեղքի համար, մինչդեռ Դավիթ մարգարեն զգուշացնում է. «Անեծք սիրողների վրա անեծք է գալու: Որով-

հետև օրհնություն չուզեց, անեծքը պիտի մտնի իրենց փորը» (Սաղմոս ՃԹ, 18):

Իսկ շատերն էլ լինելով սնոտիապաշտ, որ կախարդության դուստրն է, իրենց անձնական մեքենաներում, կամ ավելի վատ՝ նորածինների օրորոցներում, «աչքի ուլունքներ», ոմանք էլ տան շեմին կենդանիների պայտեր, կամ դաշտային փշի խրձեր են կախում, իբր դրանցով պաշտպանվում են չար աչքից: Ասենք միանգամից. դրանով դուք միայն սատանայի չարախինդ ծիծաղն եք հարուցում, քանզի նա ոչնչից չի վախենում, այլ միայն ***Հիսուս Քրիստոսի Ամենազոր Անունից, Նրա սուրբ Խաչից, սուրբ Տիրամոր բարեխոսությունից*** *(այդ պատճառով է, որ Մարիամ Աստվածածնի անունով շատ եկեղեցիներ կոչել են չարխափան), և այն ամենից, ինչ կապված է ճշմարիտ Աստծո հետ:*

Իսկ վերջին ժամանակներում մեր հայազգի մտավորականների ու մշակութային ոլորտի ծառայողների մեջ, թերթերի, ռադիո-հեռուստատեսային հաղորդումների միջոցով, չարորակ քաղցկեղի պես տարածվում է մոլորակների կամ երկնային կենդանակերպերի՝ համաստեղությունների միջոցով աստղագուշակության ախտը (гороскоп): *Մինչդեռ լուրջ մարդիկ քննելով դրանց հետ կապված զանազան դիպվածները, իմաստնաբար հրաժարվել են այդ ախտից, քանի որ երջանիկ բախտ և հաջողություն խոստացված*

բազում մարդկանց հանկարծահաս ու աղետալի մահերը ապացույց են դարձել, որ այդ մոլորությունը միայն հիմարների համար է:

Իսկ այժմ կարդանք, թե ինչ են ասում եկեղեցու մեր սուրբ հայրերը այս ամենի մասին, որոնց նրանք կոչեցին Նեռի նախակարապետներ.

ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ. ***«Բազում գայլեր են շրջում գառների հանդերձներով, խաբելով միամիտներին: Մեզ պետք է հոգևոր շնորհներ ու զգաստ միտք, որ գայլին՝ այսինքն սատանային հրեշտակ չհամարենք ու նրա կողմից կորստյան չմատնվենք»:***

ԿԻՊՐԻԱՆՈՍ *եպիսկոպոս (նախկինում հայտնի կախարդ, որը դարձի եկավ Տիրոջ Խաչի զորությունը ճանաչելով).* ***«Եթե Խաչի նշանը սատանայի դեմ այդչափ զորություն ունի, ապա Խաչյալը որչա՛փ ևս առավել»:***

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ. ***«Սատանայի հպարտությունն է, որ ուզեց աստվածանալ, և այժմ էլ ջանում է բոլոր մարդկանց զանազան կախարդություններով մոլորեցնելով երկրպագվել»:***

«Աստղագետներից ոմանք պնդում են, թե մոլորակներից այս կամ մյուսի տակ ծնվողները բարի կամ չար են լինում, ըստ նրանց ազդեցության, որը սուտ է, քանի որ բազում անգամներ տեսնում ենք՝ մեկ աստղի տակ, նույն պահի ծնվածներից մեկը բարի է լինում, մյուսը՝ չար»:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ. ***«Դիվահարները փախչում են եկեղեցուց, Խաչից, Ավետարանից, քահանայից, աղոթքից, պահքից, որն Աստված որպես դեղ հրամայեց մեր հոգու և մարմնի բազմաթիվ ախտերի դեմ»:***

Այսքանը բավական համարենք ու այսուհետև իմանանք, թե ով է մեր թշնամին և թե ում ենք վստահում մեր անմահ հոգիները, քանի որ այդ մութ ուժերի հետ շփվելիս նախ խաթարվում են մեր հոգիները, հետո դրա հետևանքներն ենք կրում մարմնապես, ապա և՝ հավիտենապես: Այդ պատճառով Տիրոջ առաքյալը զգուշացնում է. «Սիրելիներ, ամեն հոգու մի հավատացեք, հապա հոգիները փորձեցեք, թե արդյո՞ք Աստծուց է, քանի որ աշխարհի մեջ շատ սուտ մարգարեներ են հայտնվել» *(Ա. Հովհ.Դ. 1):*

Իսկ Եսայի մարգարեն ասում է. «Երբ ձեզ ասեն թե՝ վհուկներին ու նշանագետներին հարցրեք», դուք պատասխանեք. «Մի՞թե ժողովուրդը իր Աստծուն պետք է չհարցնի. կենդանիների համար մեռածնե՞ր պիտի հարցնի» *(Եսայի 8.19): Եվ Հովհաննեսի Հայտնության մեջ հստակ ասվում է.* «Վախկոտների, անհավատների, պիղծերի, մարդասպանների, կախարդների, կռապաշտների ու բոլոր ստախոսների բաժինը կրակով ու ծծումբով վառված լճի մեջ պիտի լինի, որ է երկրորդ մահը» *(Հայտնություն ԻԱ.8):*

Սիրելի բարեկամ, քանի որ այս ամենը արդեն իմացար, ուրեմն Աստծո գալիք դատապարտությունից փրկվելու համար, քեզ մնում է կամովի հրաժարվել սատանայի հետ կապող այդ բոլոր հնարքներից. այսինքն գնա եկեղեցի ու Աստծո առաջ, Իր քահանային զղջումով խոստովանիր անգիտությամբ կատարած այդ մեղքերդ, որպեսզի ապաշխարությամբ թողություն ստանաս: Իսկ եթե դեռևս կախարդության հետ կապված գրքեր, թալիսմաններ, աչքի ուլունքներ, պայտեր, փշեր, թուղթ ու գրեր, կամ նման այլ բաներ կան տանդ, ապա առանց ափսոսալու, ինչպես հնում արեցին նորադարձ քրիստոնյաները՝ նախ քո, հետո դրանց վրա Տիրոջ Խաչի նշանը արա և Հայր մեր աղոթքը ասելով, տար ու մի առանձին տեղ այրիր, որ հետքն իսկ չմնա: Այնուհետև զորացի՛ր Տիրոջ հուսադրող այս խոսքերով. «Քաջասիրտ եղե՛ք, ես աշխարհին հաղթեցի», որովհետև.

«Ապրծո Որդին հայտնվեց, որպեսզի քանդի սատանայի գործերը».

(Ա. Հովհ. Գ, 8)

ՄԵՀՐՈՒԺԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
Երուսաղեմի սուրբ Հակոբյանց
վարժարանի կրոնի ուսուցիչ

ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ

Այս գրքում ես չեմ պատրաստվում օկուլտիզմի խավար աշխարհի գիտական ուսումնասիրությունը կատարել: Նպատակս է օգնել հոգիներին, որոնք տարբեր հմայությունների պատճառով սատանայի կապանքներում են հայտնվել ու չգիտեն ինչպես ազատվել: Հաճույքով ցանկանում եմ օգնել նրանց, խորհուրդ տալ ու ազատվելու ուղին մատնանշել: Ուզում եմ օգնել նաև նրանց, ովքեր չեն գիտակցում, որ սատանայի շղթաներում են գտնվում: Վերջիններին կուզեի բացատրել, որ գուշակությունը, հիպնոսը, ոգեհեսությունը վատ հետևանքներ են ունենում: Կցանկանայի, որ նման մարդկանց մեջ խավարի իշխանությունից ազատվելու ձգտում առաջանա: Կցանկանայի նաև ծառայել և նրանց, որոնք կոչված են Աստծո խոսքը քարոզելու: Դժբախտաբար, քիչ է խոսվում այսօր այդքան շատ տարածված մեղքի՝ կախարդության ու գուշակության մասին, և այդ պատճառով շատ շատերը չեն կարողանում ուղի գտնել առ Աստված:

Ես կցանկանայի խոսք տալ ականատեսներին: Վկայությունները հաճախ քարոզներից ավելի համոզիչ են: Երբ մի շաբաթաթերթում հոդվածներ էի տպագրում այդ հարցերի մասին, շատ նամակներ ստացա: Հեղինակները գրում էին, որ միայն հիմա են հասկանում, թե ինչու իրենց կյանքում առաջընթաց չի եղել: Կցանկանայի որ այս գիրքը օրհնություն բերի ու լույս լինի խավարի մեջ, որպեսզի շատ-շատերը ազատվելով վայելեն խաղաղությունն Աստծո հետ: *Է. ՄՈԴԵՐԶՈՆ*

ԻՆՉՈՒ ԱՆԴՐԱԴԱՐՁԱ ԱՅՍ ՆՅՈՒԹԻՆ

Սկզբում պատմեմ, թե ինչու որոշեցի գրել այս գիրքը:

Տարիներ առաջ, երբ քարոզությունների ժամանակ լսում էի քահանա Շրենկին, որը հաճախ էր խոսում կախարդության մեղքի ու Տիրոջ անունը շահարկելու մասին, մտածեցի. «Ինչո՞ւ է դրանց մասին նա այդքան շատ խոսում: Չէ՞ որ մեր օրերում նման գործերով այլևս չեն զբաղվում: Մի՞թե այսօր ինչ որ մեկը դեռ հավատում է կախարդներին: Մեր լուսավորյալ դարում սնոտիապաշտությունը այլևս տեղ չունի»:

Բայց, շուտով հակառակ համոզման եկա: Մարդիկ գալիս էին ու բողոքում, որ իրենց տանջում է Աստծուն նվաստացնող մտքերը, որոնք բոլորովին իրենց սրտից չեն բխում: Սակայն, դրանց մղողը, ինչ-որ օտար ուժ է: Ու այդ չար մտքերը, հատկապես Սուրբ Հոգու դեմ, գալիս են այն ժամանակ, երբ ցանկանում են աղոթել, Աստվածաշունչ կարդալ կամ՝ եկեղեցի գնալ:

Երբ մանրամասը քննում էի այդ մարդկանց խոսքերը, պարզվում էր, որ մանկության տարիներին նրանք դիմել էին կախարդներին: Հասկացա, որ դա հենց այն հարցն է, որի մասին շատ էր խոսում ծեր քահանան: Ես նկատեցի, որ կախարդների հետ շփմանը հաջորդում է Աստծու նկատմամբ անվայել վերաբերմունք թե՛ մտքով, թե՛ գործով: Ինձ համար ամեն ինչ այնքան պարզ էր, որ նման մարդկանց այլևս չէի հարցնում, այլ հաստատ համոզմամբ ասում էի. «Դո՛ւք կապ եք ունեցել կախարդների հետ»: Ու հաջորդում էր վախեցած հարցը. «Որտեղի՞ց գիտեք»: Նրան պատասխանում էի, որ քահանայական հոգացողությամբ զբաղվելիս, համոզվել եմ, որ անարգանք առ Աստված՝ կախարդության ծանր մեղքի հետևանքն է: Պատահում էր, որ ոմանք կարկամում էին, ասելով, թե իրենք ոչինչ չգիտեն: Այդ ժամանակ ուղարկում էի իրենց մոր մոտ, որ հարցնեն, թե արդյոք նա դիմե՞լ է կախարդի օգնության: Եվ պատասխանը միշտ նույնն էր՝ «Այո՛»:

Այն դեպքում, երբ ծնողներն արդեն կենդանի չէին, անհնար էր այդ բանը պարզել: Պատահել է, որ երբ մայրը ժխտել է կախարդների հետ ունեցած կապը, բայց սովորաբար, այդ հաստատել են, տատը, սպասուհին կամ մերձավորներից որևէ մեկը, որոնք փորձել էին այդ ձևով օգնել տանջվող երեխային:

Ժամանակի ընթացքում նոր դիտարկումներ էլ ավելացան: Զրուցել եմ մարդկանց հետ, որոնք ցանկանում էին հոգեկան անդորր գտնել: Ես մատնացույց էի անում Փրկչին, սակայն, աղոթքներն ու ջանքերը զուր էին անցնում, նրանք չէին կարողանում հավատալ, ու ինչ որ մի բան խոչնդոտում էր:

Ես պատճառն էի փնտրում, թե ինչո՞ւ որոշ մարդիկ չեն կարողանում հավատալ ու հոգեկան խաղաղություն գտնել: Եվ հասկացա, որ այդ դեպքում նրանք իրենք են տրամադրված խավարի գործերին: Բազմիցս եմ նկատել ու համոզվել, ով կապ է ունեցել կախարդների հետ, դժվարությամբ է հավատացյալ դառնում:

Նույն է կատարվում նաև այն մարդկանց հետ,

որոնք անկախ նրանից հավատացել են, թե ոչ, դուշակների միջոցով փորձել են ապագան կանխատեսել, նույնիսկ, եթե կատակով են այդ արել: Երբեք չեմ մոռանա մի դեպք, որ պատահեց աստվածաշնչյան դասընթացների ժամանակ, և որի մասին ուզում եմ ձեզ պատմել:

Մի երիտասարդ ամենայն լրջությամբ ուզում էր ապաշխարել: Ցանկանում էր հավատացյալ դառնալ, որովհետև ծնողները լավ օրինակ էին հանդիսացել, և ինքն էլ էր հասկանում, որ դա անհրաժեշտ է իր հոգու փրկության համար: Ցույց տվեցի նրան հավատի ուղին, սկսեցինք միասին աղոթել Աստծուն, բայց ապարդյուն: Մենք կրկնում էինք մեր գրույցները, բայց՝ իզուր: Ես դասընթացին մասնակցող փորձառու մի եղբոր օգնության դիմեցի: Սակայն այդ գրույցն էլ մնաց անօգուտ: Ոչինչ չփոխվեց նաև երրորդ եղբոր կանչելուց հետո: Ի վերջո, երիտասարդին հարցրեցի, թե կախարդների հետ գործ չի՞ ունեցել արդյոք: Պատասխանեց, որ դա անհնար է, քանի որ ծնողները ճշմարիտ հավատացյալներ են եղել ու այդ բանը չէին կարող թույլ տալ: Այն հարցին, թե արդյո՞ք ինքը կախարդությամբ չի զբաղվել, պատասխանեց, որ ուսանողական տարիներին, մեկ անգամ կատակով դիմել է խաղաթղթով գուշակություն անողին: Ասացի. «Դա է պատճառը, որ չեք կարողանում հավատի ուղին բռնել: Ձեր կատակի չնորհիվ չար ուժի ազդեցության տակ եք գտնվում»: Երիտասարդը ժպտալով պատասխանեց, որ այդ բացառվում է, և մեկ ուրիշ պատճառ պետք է լինի, և առանց խորհուրդս լսելու ու հոգեկան բա-

վարարվածություն գտնելու տուն գնաց:

Այս հարցի հետ կապված շատ օրինակներ են ինձ հայտնի: Ուստի դասախոսություններիս ժամանակ սկսեցի ավելի հաճախ անդրադառնալ դրանց: Եվ ստիպված էի խոսել հենց այնպես, ինչպես նախկինում ծեր քահանա Շրենկն էր անում: Հետևանքն այն եղավ, որ դասախոսություններիս շատ մարդիկ էին գալիս, որոնք դժգոհում էին, թե մեղքի կապանքներում են գտնվում: Եվ որքան հաճախ էի հանդիպում մարդկանց, այնքան ավելի էի իմ հրատարակած թերթերում դրա մասին գրելու կարիք զգում: Ու նորից հետևանքն այն էր լինում, որ մարդիկ նամակներում խոստովանում էին իրենց մեղքերը: Հիմա, գրեթե ամեն օր, ստիպված եմ լինում բանավոր կամ գրավոր լուսաբանելու այդ հարցը:

Իմ փորձով արդեն կարող եմ ասել, թե կախարդության սարսափելի մեղքը ինչ բացասական հետևանքներ է ունենում, ու դեռ որքան շատ մարդիկ են տառապում այդ լծի տակ, ապրելով սատանայի շղթաներում:

Զարմանում եմ, թե հովիվները իրենց քարոզներում ինչո՞ւ են այդքան քիչ խոսում այդ մասին: Հսկայական տարածություններ կան, որոնք կախարդության սարսափելի մեղքի ազդեցության տակ են գտնվում, ուր վհուկները ժողովրդական բժշկի դեր են կատարում: Օրինակ, դեպքեր են հայտնի, երբ գորտնուկներից ազատվելու համար ոչ թե բժշկին են դիմում, այլ, փորձում են որևէ պառավ գտնել, որը իրեն բժշկի: Ու եթե պառավը կարողանում է օգնել, իսկույն այն տպավորությունն

է ստեղծվում, որ այդտեղ ոչ մի վատ բան չկա. հատկապես այն դեպքերում, երբ միաժամանակ Աստծու խոսքն է օգտագործվում: Շատերի կարծիքով դա բարի ու սուրբ գործ է:

Այդպես են կարծում ոչ միայն կախարդների օգնությամբ դիմողները, այլև այդ արհեստի մարդիկ: Վերջիններս համարձակ պնդում են, որ սա բուժման հենց այն միջոցն է, որ գալիս է դեռ Քրիստոսի ժամանակներից: Եվ ով որ պայքարում է, ապացուցում, որ դա մեղք է, հարկավոր է զղջալ: «Հմայության դեմ պայքարելը մեծ մեղք է»,ասում են դրանով զբաղվողները: Բայց նորից եմ ցանկանում ընդգծել, որ հատկապես մեծ է մեղքը, երբ գիտակցաբար են դրանով զբաղվում:

Այո՛, իսկապես, ստության վարպետ-սատանան մեծ գործ է արել, եթե կարողացել է մեղքը որպես աստվածային ու անմեղ միջոց ներկայացնել: Սակայն չմոռանանք, որ այդ մեղքի համար Աստծու խոսքը ահեղ դատաստանով է սպառնում:

Վերը շարադրվածը հանգեցրեց այն բանի, որ տվյալ ասպարեզում փորձս կիսելու ներքին պահանջ զգացի: Քանի որ շատերն այն մեղք չեն համարում, ու չեն կարողանում հասկանալ, թե իրենց կյանքում ինչու են այդքան տարօրինակ բաներ պատահում և ինչու չեն կարողանում հոգեկան անդորը և ուրախություն գտնել: Այդպիսիներին ցանկանում եմ ասել. «Տեսեք, պատճառը սա է. եթե չզղջաք ու ձեր այդ զբաղմունքը մեղք չհամարեք, սատանայի կապանքներից չեք ազատվի»:

Կցանկանայի նաև օգտակար լինել նրանց, ովքեր որպես հովիվ խնամք են տանում հոգիներին՝

իր հոտի անդամներին: Շատերը նույնիսկ չեն էլ կասկածում, թե այդ մեղքերի ետևում ինչ որ մութ ուժ է թաքնված. նրանք խուսափում են խոսել այդ մասին: Դա է պատճառը, որ շատերը չեն հասկանում, թե որտեղից են ծագում նզովքն ու լուծը, որոնց տակ այդքան տառապում են նրանք:

Այս դեպքերն ու դիտարկումները ես տհաճությամբ էի ներկայացնում, որովհետև գիտեի, որ սատանայի թագավորությունն եմ ներխուժում: Նա աշխատում է թույլ չտալ, որ այդ զբաղմունքը որոշակի ու պարզ լուսաբանվի:

Իմ փորձից գիտեմ, որ սատանան աշխատում է խոչընդոտել Աստծու խոսքի քարոզչությանը: Հաճախ է պատահում, որ ես կամ մերձավորներից մեկը հիվանդանում ենք հատկապես այն ժամանակ, երբ պատրաստվում եմ քարոզչության մեկնել: Որքան շատ են այս անհիմ խոչընդոտները, այնքան շատ աշխատանք է արվում Տիրոջ անդաստանում, որից թշնամին ցանկանում է ետ պահել: Ավետարանի քարոզչությունը զինված արշավանք է ընդդեմ սատանայի թագավորության: Այդ ժամանակ նա փորձում է ամեն բան անել, միայն թե խանգարի, որ իր զոհերին չկորցնի:

Մի անգամ, Հոգեգալստյան օրը, հավաք ունեինք, որտեղ երեք հոգով քարոզում էինք «Սուրբ Հոգին կգա ու կապաքինի աշխարհը» թեմայով: Առաջին եղբայրը խոսում էր «Ինձ չհավատալու մեղքի մասին», երկրորդը՝ «Ճշմարտության մասին, որ Հորս մոտ եմ գնում ու այլևս չեք տեսնի ինձ», իսկ ես խոսեցի պատժի մասին, որին դատապարտված է այս աշխարհի իշխանը: Այս գործը ես

առանձնակի ուրախությամբ արեցի, որովհետև Գողգոթայում մեր Փրկիչը խլեց սատանայի ղեկը, ու հենց դրանով էլ այս աշխարհի իշխանը պարտվեց ու դատապարտվեց հավիտյան: Սակայն, ցավոք, եթե միայն իմանայիք, թե հաջորդ շաբաթ որքան սարսափելի եղավ ինձ համար և ես ինչ փորձություններով ենթարկվեցի: Շնորհակալ եմ Աստծուց, որ իր ողորմածությամբ օգնեց ինձ: Ինչ միջոցների ասես չդիմեց սատանան: Այդ ժամանակ ես հասկացա, որ երբ խոսում ենք սատանայի պախարակելու ու նրա դեմ տարած հաղթանակի մասին, գործ ենք ունենում հենց նրա հետ:

Այդ մասին եմ ուզում վկայել ու դրա համար նախապես գիտեմ, որ սատանան բոլոր ուժերը կլարի իմ դեմ: Բոլոր նրանց, ովքեր չփվում են կենդանի Աստծու հետ, խնդրում են նեցուկ լինեն ինձ, ու Աստծուց ողորմություն հայցեն, որ թշնամին չկարողանա վրեժ լուծել այս գրքի համար, որտեղ ես փորձում եմ բացահայտել կախարդության մեղքն ու խորհուրդ տալ մարդկանց, թե ինչպես կարող են ազատվել սատանայից ու նրա շղթաներից: Եվ թող Աստված օրհնի այս գիրքը, և թող չարի կապանքներում բոլոր տառապողները Աստծո ուրախությունը վայելեն:

Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Այս հարցը Սուրբ Գրքում լուսաբանվում է մի քանի անգամ: Հատկապես պետք է նշել Հին Կտակարանից Բ Օրինաց գրքի ԺԸ գլխի 9-14 համարները, որտեղ Աստված Մովսեսի միջոցով, Իսրայելի

ժողովրդին Տիրոջ կողմից հատուկ իրենց համար խոստացված երկիրը մտնելուց առաջ պատվիրաններ է տալիս: Այնտեղ գրված է. «Երբ կմտնես Տեր Աստծու քեզ տված երկիրը, չյուրացնես այնտեղ ապրող մարդկանց գարշելի սովորությունները: Ձեր մեջ թող չգտնվի այնպեսի մեկը, որն իր տղային կամ աղջկան կրակից անցկացնի, դյութությամբ կամ գուշակությամբ զբաղվի, վհուկ կամ սուտ մարգարե լինի, մեռելահարցությամբ զբաղվի, որովհետև Տիրոջ համար գարշելի է նա, ով զբաղվում է այդպիսի բաներով. այդպիսի գարշելի բաների համար է, որ Տերը նրանց վերացնում է քո միջից: Քո Տեր Աստծու առջև կատարյալ պետք է լինես: Քո ստանալիք երկրի մարդիկ հավատում են հմայություններին, բայց քո Տեր Աստվածը քեզ այդպես վարվելու հրաման չի տվել»:

Կարդալով այս հատվածը, մեղքերի մի ցուցակ ենք գտնում, որոնք գարշելի են Աստծո առջև: Մենք տեսնում ենք կախարդության, գուշակության ու հմայությունների մի սարսափելի աշխարհ և իմանում ենք, որ Աստված որոշակի ու պարզ արգելում է մեզ զբաղվել այդպիսի գործերով:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախ ասված էր, որ հրեաների մեջ չպետք է լինի այնպիսի մեկը, որ իր երեխաներին կստիպի անցնել կրակի միջով: Այդ երկրի բնակիչները երեխաներին Մողոք կուռքին զոհաբերելու զարհուրելի սովորություն ունեին: Այդ աստծու արձանը սնամեջ էր, որպեսզի հնարավոր լիներ մեջը

կրակ վառել: Նրա շիկացած ձեռքերի մեջ էին դնում նորածին երեխաներին, որոնք չարաչար տանջվելով մեռնում էին:

Մարդիկ, որ երեխաներին զոհաբերում էին այդ կուռքին, սարսափելի մեղք էին գործում: Ու, թեև այդպիսի մեղքը զարհուրելի էր ու սթափ մարդու համար եղկելի, այն եզակի երևույթ չէր Իսրայելում: Այդ մասին կարդում ենք Դ Թագավորաց գրքի ԺԷ, 17 համարում, որտեղից պարզ է դառնում թե ինչու է Իսրայելը գերիվարվում Ասորիք: Այնտեղ կարդում ենք. «Եվ իրենց տղաներին ու աղջիկներին անցկացրեցին կրակի միջով, կախարդություններ ու հմայություններ արեցին, և իրենց ծախեցին, որ չարություն անեն Տիրոջ առջև՝ Նրան բարկացնելու համար»: *Նույն գրքում կարդում ենք, որ Ովսիան* «Ավերեց Տոփեթը, որ Ենոմի որդու ձորում է, որպեսզի որևէ մարդ իր տղային կամ աղջկան կրակի միջով չանցկացնեն» *(ԻԳ, 10): ԺԸ-րդ գլխի 13-րդ համարում ասվում է, որ Հուդայի արքա Աքազը* «Իր որդուն անցկացրեց կրակի միջով, այն ազգերի գարշելի սովորության պես, որոնց Տերը քշեց Իսրայելի որդիների առջևից...»: *Նույն բանն ենք կարդում նաև աստվածավախ արքա Եզեկիայի որդի Մանասեի մասին. «Եվ իր որդուն կրակի միջով անցկացրեց, և գուշակություն, հմայություն էր անում: Մեռելահարցուկներ ու նշանագետներ պահեց: Նա շատ չարություն արեց Տիրոջ աչքի առջև ու Նրան բարկացրեց»: (Դ Թագավորներ ԻԱ, 6):*

Այսպիսով Աստված արգելում է երեխաների զոհաբերումը: Բայց կան նաև հնից եկող այլ սովո-

րություններ, որոնք տարածվում են մինչև այսօր և մեզ ակամա հեթանոսության ժամանակներն են վերադարձնում:

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկրոդ Օրինաց գրքի ԺԸ գլխում կարդում ենք այն ժամանակվա գուշակության մեղքի մասին, որտեղ խոսվում է գուշակների և պայծառատեսների մասին:

Նրանք ի՞նչ են իրենցից ներկայացնում:

Հելլերի Աստվածաշնչի բառարանում կարդում ենք. «Գուշակները տարբեր միջոցներով ձգտում են ներխուժել իրենց համար փակ հոգիների աշխարհը ու փակ դուռը թակելով նրանք շփման մեջ են մտնում չար, սատանայական ուժերի հետ»:

Մարդիկ ինչպե՞ս կարող էին գուշակել ապագան:

Մարդկանց սրտի խորքում անհայտ ապագայի շղարշը բացելու անհագ ցանկություն կա: Ճիշտ քայլը կատարելու համար շատերը ձգտում են ապագան ու Աստծո կամքը իմանալ: Այդ հետաքրքրասիրության պատասխանը Աստված տալիս է Իր խոսքի միջոցով՝ Սուրբ Հոգու օգնությամբ:

Աստծու խոսքը մեր առջև բացում է այն ամենն, ինչ անհրաժեշտ է իմանալ հավերժության և ապագայի մասին: Կարծում եմ, որ ինչի մասին որ խոսվում է Աստվածաշնչում, ամենահրաշալին է ու կարող է լիովին բավարարել մեզ: Մենք կարդում ենք այնտեղ, որ Աստծո որդիներ լինելով, Նրա ժառանգներն ենք հանդիսանում, ու մեզ համար Նոր երկիր

պիտի լինի, որտեղ իշխելու է արդարությունը:

Այն ինչ ասում է Աստված, հաճախ չի բավարարում մարդկանց և նրանք ուզում են ավելին իմանալ: Ու երբ ձգտումը չի բավարարում, մարդը Աստծու կամքին հակառակ, աշխատում է խորանալ ապագայի գաղտնիքների մեջ և ամեն կերպ աշխատում է իմանալ, թե գալիքը ի՞նչ է բերելու իրենց: Եթե մարդ ցանկանում է իմանալ, թե կյանքի ճանապարհն ինչպես պետք է ճիշտ անցնել, ապա Ինքը՝ Աստված կսովորեցնի այդ Սուրբ Հոգու միջոցով: Վերջինիս միջոցով Նա մեզ պատվիրաններ ու կյանքի դժվար հարցերի պատասխաններ է տալիս ու սովորեցնում, թե ինչպես պետք է վարվենք կյանքի վճռորոշ պահերին: Աստված մեզ ղեկավարում է Սուրբ Հոգու միջոցով, բայց Աստծու աջակցությունը այն ժամանակ ենք միայն ստանում, երբ դառնում ենք Նրա զավակները: Պողոս Առաքյալն ասել է, որ նրանք, ում Սուրբ Հոգին է ղեկավարում Աստծու զավակներ են: Վերջիններիս իրավունքներն ու Սուրբ Հոգու ղեկավարությունը համընկնում են:

Երբ մարդը իր քմահաճույքների ու հետաքրքրասիրության պատասխանները Աստծուց չի ստանում, դիմում է գուշակներին. այն ինչ չի ուզում ասել Տերը, գուշակությունների միջոցով «ասում» է սատանան:

Տարբեր ժողովուրդներ կանխագուշակությունը տարբեր ձևերով են զարգացրել: Գուշակության հիմքում ընկած է այն գաղափարը, որ աստվածները գիտեն ապագան ու բացում են այն մարդկանց առջև, ովքեր գիտեն հարցնելու ճիշտ ձևն ու հաս-

կանում են պատասխանների նշանակությունը: Քանի որ հեթանոսության ողջ շրջանը մութ ուժերի ազդեցության տակ է եղել, ապա առանց դևերի հետ կապվելու կանխատեսությունը անհնար էր:

Մեր օրերում կատարվող կանխագուշակության մասին ճիշտ եզրահանգում կատարելու համար անհրաժեշտ է իմանալ, թե առաջ դա ինչպես էր արվում: Պարզվում է, որ բոլոր հին միջոցները կիրառվում են նաև այսօր: Նախկինում գուշակում էին խոսքի ու մարդու, ինչպես նաև տարբեր նշանների մեկնաբանության միջոցով: Խոսքի միջոցով կանխագուշակությամբ զբաղվում էին նրանք, ովքեր ինչ-որ կերպ կարողանում էին թափանցել անհայտ աշխարհն ու այդպես իմանալ ապագայի մասին «Աստծու կամքը»:

Գուշակները պնդում են, թե իրենք մեկ այլ՝ բարձր աշխարհում են գտնվում: Իսկապես արբունք ոգիների կամ մեկ այլ ճանապարհով նրանք կարող էին մարդկանց մոտ զմայլանքի վիճակ ստեղծել:

Ասենք, որ սովորաբար կանայք էին զբաղվում գուշակությամբ: Մեր օրերում էլ շատ կանայք օժտված են այդ «ունակությամբ»: Գուշակներին դիմելիս մենք գործ ենք ունենում մարդկանց հետ, որոնք Աստծո ու Նրա Հոգու ղեկավարության տակ չեն գտնվում, կարդում ենք Գործք Առաքելոցի ԺԶ գլխում: Փիլիպպեում Պողոս առաքյալը հանդիպեց մի սպասուհու, որը տառապում էր գուշակության ոգու շղթաներում: Պողոսը սրտնեղած դիմեց ոգուն ու ասաց. «Հանուն Հիսուս Քրիստոսի հրամայում եմ դուրս արի նրա միջից»: Թեև կինը ընդամենը

ասել էր. «Այս մարդիկ Բարձրյալ Աստծո որդիներ են, որոնք փրկության ուղին են մատնացույց անում», բայց այնուամենայնիվ, Պողոսը իմացավ որ նա դիվահար է, թեև կնոջ ասածը զուտ ճշմարտություն էր: Նա հասկացավ, որ նրան ղեկավարում է ստության հայրը՝ սատանան: Ուստի նա քշեց պիղծ ոգուն, որը խոսում էր այդ կնոջ շուրթերով: Եվ սատանան շուտով վրեժ լուծեց Պողոսից: Նրան փայտերով ծեծեցին՝ արյունոտվելու աստիճան, ու բանտ նետեցին:

Կանխագուշակության առաջին միջոցն այն է, որ իր գիտակցությունը մութ ուժերի տնօրինությանն են հանձնում, որոնց միջոցով անմիջականորեն սատանան է գործում: Երկրորդ, լայն տարածված միջոցն է.

ՆՇԱՆՆԵՐԻ ՈՒ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Աստծու կամքն իմանալու համար հրեաները նշաններ էին պահանջում: Ովսեի մարգարեության Դ,12 համարում ասված է. «Իմ ժողովուրդը իր փայտին է հարցնում և իր ցուպը պիտի հասկացնի նրան»: Այդպես էր դա կատարվում. փայտե մականը գետին էին գցում ու այդ ընկած դիրքով եզրակացություններ անում: Սա նման է խաղաքարտով գուշակության և կամ կարող է համեմատվել դրամ գցելու հետ, որ ժամանակ որոշիչ է դառնում, թե այն որ կողմով կընկնի:

Նույնն է նաև սուրճի բաժակով գուշակությունը: Դրան հանդիպում ենք ոչ միայն Եգիպտո-

սում, Հովսեփի օրերին (Ծննդոց, ԽԴ, 5), այլև նաև մեր ժամանակներում: Հիշենք ամանորի նախօրյակին և այլ առիթներով կատարվող գուշակությունները:

Հին ժամանակներում շատ լավ կարողանում էին հարցում կատարել տնային ոգիներին: Սակայն, մեզ հայտնի չէ, թե ինչպես էր դա արվում: Այսօր որոշ հավատացյալներ գուշակության համար Աստվածաշունչ են օգտագործում: Այսպես, նախ որոշում են, թե աջ կամ ձախ երեսի որ համարը կարող է տալ իրենց հուզող հարցի պատասխանը, ապա բացում են Աստվածաշնչի համապատասխան հատվածն ու փորձում գուշակել Աստծո կամքը:

Հետագայում ապագայի կանխագուշակման համար սկսեցին հետևել ու քննել տարբեր այլ երևույթներ:

Առաջին հերթին դրանք արևի, լուսնի ու աստղերի խավարումներն էին: Կարևորություն էին տալիս ամպրոպին ու կայծակին, հատկապես պարզ երկնքի դեպքում: Գուշակների կարծիքով ամպերի ձևը նույնպես իր իմաստն ու նշանակությունն ունի: Այսօր էլ է աստղագուշակությունը շատ տարածված: Շատերը աստղերի դիրքով գուշակություններ են անում ու բախտացույցեր կազմում:

Իբրև վերջիններով կարելի է իմանալ երջանիկ, ինչպես նաև չար օրերի մասին, որոնցից պետք է զգուշանալ: Լիովին կանոնավոր ու ուսյալ մարդկանց մեջ էլ կարելի է հանդիպել այնպիսիներին, որոնք, օրինակ, ուրբաթ և երկուշաբթի օրերին խուսափում են ինչ-ինչ գործ սկսել: Նրանց համոզմամբ՝ դրանք դժբախտ օրեր են: Եվ հակառակը,

երեքշաբթի և հինգշաբթի օրերին սկսած աշխատանքը լավ է ընթանում:

Նախկինում թռչունները Աստծու պատգամաբերներն էին համարվում, քանի որ թռչում էին երկրի ու երկնքի միջև: Նրանց թռիչքով ու ճիչերով նույնպես գուշակություններ էին անում: Երբ դեռ մարդիկ զոհ էին մատուցում աստվածներին, ուշադրություն էին դարձնում, թե կրակի մեջ ինչ գույն ու ձև են ընդունում թռչունի արյունը ու լյարդը, կամ այրվելուց հետո ինչ տեսք ունի մոխիրը: Եվ այս ամենին կարևորություն էր տրվում: Նույնիսկ մարդու հետ անսպասելի հանդիպումն ու փոխտոցը ինչ-որ նշան էր համարվում: Նապալեոնի ու Վոլտերի մասին պատմում են, որ նրանք վախենում էին որոշ թռչունների կռնչոցից:

Եթե հիմա հարց տանք մեզ, թե արդյո՞ք մենք ազատ ենք այդ զանազան սնոտի բաներից, ապա կխոստովանանք, որ մենք դեռ ապրում ենք սնոտապաշտության ու զանազան խորհրդանշանների դարում և սատանան ու սատանայությունները իրոք որ ամուր հիմքեր ունեն նաև մեր օրերում: Ահա մի քանի օրինակ. մինչև հիմա բվի կռնչոցից մարդիկ վախենում են, կարծելով, որ դա մահվան կամ դժբախտության նշան է: Երբ որսորդը, կամ ճանապարհորդը, տնից դուրս են գալիս, և առաջինը տարեց կնոջ է հանդիպում, ապա անհաջող օր է գուշակվում: Տղամարդու հանդիպելը, հակառակն է նշանակում, հաջողություն է: Եթե նապաստակ կամ կատու հանդիպի, հատկապես սև, դա ևս ինչ-որ բան է նշանակում, իսկ եթե զրուցակիցդ փռշտում է, ուրեմն ճիշտ է ասում:

Շատ է տարածված նաև երազների մեկնությունը: Այս դեպքում, պետք է զգույշ լինել, որովհետև կարող է նաև հայտնություն լինի, երբ Աստված Ինքն է ինչ-որ բան հաղորդում մարդուն: Դրա վերաբերյալ Աստվածաշնչում մի շարք օրինակներ կան: Հովսեփը բանտում մեկնում է մատռվակի և հացթուխի երազները: Նա մեկնում է յոթ պարարտ ու յոթ նվազ կովերի մասին երազները: Իսկ Դանիելը մեկնում է Նաբուգոդոնոսոր արքայի երազները: Որոշ դեպքում էլ Աստված երազի միջոցով կամենում է պատվիրաններ տալ, կամ ինչ որ բան հաղորդել: Սակայն, կարող են լինել նաև երազներ, որոնց իմաստը մեզ հայտնի չէ: Եվ այստեղ շտապում գուշակները: Քիչ մարդկանց կհանդիպես, որոնք երազահան չեն տեսել: Կարելի է ասել, որ հազվադեպ մարդիկ չեն կարդացել այդ գրքերը, որոնց հեղինակները առանց բացառության մեկնում են բոլոր երազները:

Նախկինում երազները Աստծո կամքը իմանալու ամենահուսալի միջոցն էին համարվում: Դրա համար էլ մարդիկ ուզում էին երազ տեսնել: Օրինակ, գիշերում էին գերեզմանատանը, ու այնտեղ տեսած երազը համարում իրենց նախնու ցանկությունը: Տարբեր արբեցնող բույսեր էին օգտագործում, որպեսզի երազ տեսնեն ու բացատրություն ստանան:

Այդպիսի գուշակությունների մասին, կարելի է մի քանի գիրք գրել: Ինչպես նշեցինք Բ Օրինաց գրքի ԺԸ, 9-11 համարներում խոսվում է վհուկների, կախարդների ու գուշակների մասին: Դրանց թվին են պատկանում նաև աստղագուշակները:

Հին հռոմեացիները շաբաթը բաժանում էին սև՝ դժբախտ, սպիտակ՝ երջանիկ ու անտարբեր օրերի: Հրեաները նույնպես ունեին իրենց լավ ու վատ օրերը:

Ինչպես վերևում նշվեց, նույնիսկ այսօր մարդիկ վախենում են վատ՝ երկուշաբթի ու ուրբաթ օրերից: Հատկապես անհաջող է համարվում, վերջինը, որովհետև ուրբաթը Քրիստոսի խաչվելու օրն է: Մենք՝ հավատացյալներս, արդյոք պարտավոր չե՞նք այդ օրը երջանիկ համարել: Չէ՞ որ հենց այդ օրը մարդկության փրկության մեծ գործը կատարվեց ու Քրիստոսի մահով, մեղքերի թողություն ու հավիտենական կյանք ստացանք: Տասներեքը ամենուր դժբախտ թիվ է համարվում և որքան շատ են այդ թվից վախեցողները: Հաճախ փողոցներում 13-ի փոխարեն 12՝՝ են գրում:

Այդ սնոտիապաշտությունը արդյոք նրանից չէ՞, որ Հիսուսը տասներկու առաքյալների հետ սեղան էր նստել, իսկ խաչվելուց հետո Հուդան կախվեց: Բայց նորից եմ կրկնում, մի՞թե Քրիստոսի խաչելությունը չէր մարդկության փրկությունը: Ակնհայտ է, որ Հիսուսը երբեք չէր վախենում 13 թվից: Երեք երկար ու ձիգ տարիներ նա ուսուցանում էր իր 12 առաքյալներին: Միշտ ամենուր Նա 13-րդն էր: Մենք հավատացյալներս, արդյո՞ք իրավունք ունենք խուսափելու այդ թվից:

ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Նշեցինք որ, Բ Օրինաց գրքում խոսվում է կախարդության մասին: Իսկ ի՞նչ է նկատի առնվում:

Գուշակի ու կախարդի նմանությունն այն է, որ երկու դեպքում էլ Աստծուց հեռացած մարդը, Նրա կողմից արգելված ճանապարհներով փորձում է իմանալ այն, ինչ անհասանելի է մարդ արարածին: Կախարդության միջոցով մարդը փորձում է ներխուժել գաղտնիքների թագավորություն ու իմանալ այն, ինչ արգելել է Աստված: Գուշակները ավելի հաճախ ցանկանում են իմանալ, թե ինչ կբերի ապագան, ինչպես կավարտվի այս կամ այն գործը: Իսկ կախարդը ինչ-որ գործողություններով աշխատում է որոշակի իշխանություն ձեռք բերել: Այնպես որ, կախարդությունը Աստծո կամքին հակառակ է, և ձգտում է իր նողկալի հետաքրքրությունների բավարարմանը: Այն երբեք չի կարելի Աստծո զորությունը լինել, ավելին, այն խավարի ու սատանայի զորությունն է: Ինչպես և գրված է. «Անօրենի գալը սատանայի ազդեցությունով է, բոլոր զորությունով ու նշաններով ու սուտ հրաշքներով» *(Բ Թեսաղ. Բ, 9)*:

Սատանայական ուժերը սիրով թույլ են տալիս օգտվելու իրենցից: Նրանք իսկույն պատրաստ են ծառայելու իրենց փնտրողներին: Զար ոգիները, հրեշտակների նման ծառայող ոգիներ են, բայց այն տարբերությամբ, որ հրեշտակները ուղարկվում են նրանց մոտ, ովքեր Աստծու ուխտի մեջ են մտել և հավիտենական կյանքի ժառանգորդներն են, իսկ սատանայի ոգիները ծառայում են կորստյան մատնվածներին: Պողոս առաքյալը ասում է. «Նրանց պատիժը պիտի լինի հավիտենական կործանումը՝ մերժված Տիրոջ ներկայությունից և նրա զորության փառքից...» *(Բ Թեսաղոն., Ա, 10)*:

Ուստի ոչ միայն հնարքները, այլ հենց կախարդությունը ու դրա միջոցով ձեռք բերված ամեն մի հաջողություն չարիք է ու գարշելի Աստծո առջև, քանի որ Նրա համար տհաճ նպատակներով է օգտագործվում: Նույնիսկ այն դեպքում, երբ կարծես ոչ մի չարիք չի գործվել, այլ ինչ-որ լավ գործ է արվել, օրինակ ապաքինվել է մեկը, միևնույն է կախարդությունը խավարի գործ է: Չարիքի դեմ նախազգուշական միջոց կարող է լինել այն, ինչը համապատասխանում է Աստծո կամքին, որը ձեռք է բերվել հավատի ու աղոթքների միջոցով, երբ Տիրոջ խոսքն ու Անունը արտասանվում է ինչպես կկամենար հենց Ինքը՝ Աստված:

Երբեմն Աստված ինքն է մարդուն խաչ տալիս կրելու: Օրինակ՝ հիվանդություն է թույլ տալիս, որ դրա միջոցով մոտեցնի մեզ Իրեն: Սակայն, մարդը հաճախ չի ցանկանում տանջանքներով փրկության արժանանալ և ազատվելու ուղիներ է որոնում: Ու քանի որ Աստված չի աջակցում այդ հարցում, մարդը սատանայի օգնությանն է դիմում: Նույնն է կատարվում, երբ Աստված, Իրեն հայտնի պատճառներով, ինչ-որ բան մերժում է ու մարդը փորձում է այն կախարդության միջոցով ստանալ:

Ասվածից հետևում է՝ որ կախարդության նպատակն է, ձեռք բերել այն, ինչ Աստված, կանխապես իմանալով մարդու ապագան, Իր սիրուց դրդված արգելում է: Մարդուն թվում է, թե ավելի հեշտ ու ձեռնտու է դիմել կախարդության միջոցներին, քան ապավինել Աստծուն: Սատանայի համար ավելի մեծ ուրախություն չկա, քան թույլ տալ, որ Աստծո փոխարեն Իրեն դիմեն, որովհետև

այդպես մարդիկ շրջանցում են Տիրոջ ճանապարհը: Սատանան երբեք իզուր չի առաջարկում իր ծառայությունները: Ու շատերը կարծում են, թե կախարդությունն է ստիպում սատանային անել այն, ինչ կամենում են, բայց իրականում, սատանան պատրաստակամ լսում և ուրախանում է, երբ իր օգնությանն են դիմում:

Կախարդությամբ սատանայի նպատակը մեկն է՝ վնասել ու չարիք պատճառել մարդկանց հոգիներին: Դա կոչվում է «սև մոգություն»:

Արդյոք մենք պետք է վախենա՞նք դրանից: Փառք Աստծո՝ ո՛չ: Եթե մենք, որպես Քրիստոսի արյամբ լվացվածներ, ամուր կանգնենք, ոչ մի ուժ մեզ չի կարող չարիք պատճառել: Եթե հնազանդորեն, ինչպես գառները հովվին, հետևենք Տիրոջը, ապա մեզ հանդիսավոր երդում է տրված. «Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են և Ես ճանաչում եմ նրանց ու նրանք հավիտյան չեն կորչի, ու ոչ ոք չի հափշտակի նրանց Իմ ձեռքից» (Հովհ. Ժ,7-28): Ողորմության վեմին, հավերժական Աստծո ձեռքի տակ ապավինած, Հիսուս Քրիստոսի արյամբ լվացվածները իրավունք չունեն վախենալու ոչ կախարդությունից, ոչ էլ սատանայի չար ոգիներից:

Դևերի հետ կապ ունենալու համար, կախարդները տարբեր երդումներ ու խոստումներ են տալիս: Սատանան հաճախ հայտնվում է հրեշտակի կերպարանքով ու լավ տիրապետելով կախարդության «արվեստին», այնպես է ցույց տալիս, թե իբր Աստծո կողմից է ուղարկված: Ուստի՝ նա, ով դիմել է վհուկներին ու կախարդներին, թող լավ իմանա, որ սատանայի հետ է գործ ունեցել: Ցավոք, այդ

մասին քչերը ճիշտ պատկերացում ունեն: Երբեմն հենց ինքը՝ կախարդը, չի գիտակցում, որ դիվային ուժի միջոցով է գործում ու սատանայից ստացածը Աստծուն է վերագրում, թեև այդ դեպքում Նրան չեն դիմում: Նա հաջողությունը համարում է տարբեր հմայական խոսքերի ու միջոցների հետևանք:

Ցանկացած հմայություն, կանխագուշակում՝ կախարդության մի ձև է, որով ձգտում են լավ արդյունքի հասնել, բայց ոչ Աստծո միջոցով, ապավինելով ու աղոթելով Նրան, այլ ինքնագլուխ ճանապարհով: Ցանկանում են չարիքը վերացնել, բայց ոչ թե Աստծո, այլ դևերի ուժերով: Բարձրյալը ինչ մերժում է մարդուն, վերջինս ձեռք է բերում սատանայի միջոցով: Ու նշանակություն չունի, որ հմայության ժամանակ Աստվածաշնչից հատվածներ ասվում, կամ աղոթքներ են արվում: Այդ ամենը շղարշված կախարդություն է: Որքան աստվածաշնչյան խոսքեր օգտագործվի, միևնույն է, սատանան սատանա է մնում: Նա այդ ապացուցեց անապատում, փորձելով Քրիստոսին գայթակղել, նույնիսկ Աստծո խոսքից օգտվելով: Ինչպես արդեն նշեցինք, փիլիպեցի գուշակող կինը աստվածավախ խոսքեր էր ասում, սակայն, նրա միջոցով գործում էր չար ոգին (Գործք, ԺԶ, 16-18):

Որ հմայությունը կապված է մութ ուժերի հետ, երևում է թեկուզ այն բանից, որ կախարդության միջոցով ապաքինվածը, երբ դիմում է Աստծուն, նորից հիվանդանում է:

Հին ժամանակների կախարդության մասին շատ բաներ կարելի է ասել: Աստվածաշնչում այդ մասին բազում օրինակներ են բերված: Կախարդու-

թյունը ծաղկում էր Եգիպտոսում, Բաբելոնում, Հունաստանում, Քաղդեացիների երկրում: Թեև Իսրայելի ժողովուրդը ճանաչում է կենդանի Աստծուն, սակայն զերծ չէր նաև կախարդանքներից: Փիլիպպոսը, քարոզության ժամանակ, հանդիպեց Սիմոն մոգին, որը գուշակություն էր անում ու զարմացնում մարդկանց (Գործք, Ը, 9): Պողոս առաքյալը Գաղատացիներին ուղղված թղթում (Ե, 21) ասում է, որ կախարդությունը անմաքուր ուժերի գործերից է ու «այդպեսի բաներ գործողները Աստծո արքայությունը չեն ժառանգի»: Հովհաննեսի Հայտնության վերջին գլխում ասվում է, որ կախարդների ու կռապաշտների վերջը կրակե լիճն է լինելու, ու որ նրանք Երկնային քաղաքի դռներով ներս չեն մտնի (Հայտնություն ԻԲ, 15):

Այնուամենայնիվ, չնայած Աստծու խոսքի լուրջ նախազգուշացումներին քրիստոնյաների մեջ ևս հանդիպում ենք կախարդություններով զբաղվողների: Այդ մասին վկայում են բազմաթիվ քարոզիչներ: Օրինակ Հովհաննես Ոսկեբերանն ասել է. ***«Դու ոչ միայն հուռութներից ես օգտվում, այլ նաև զբաղվում ես կախարդությամբ ու չես ամաչում պառավներին դիմել ու բերում ես նրանց քո տուն: Արդարացում չէ, որ այդ կանայք քրիստոնյա են ու Աստծո անունով են գործում: Հենց դրա համար եմ նրանց ատում, որ Տիրոջ անունն են վարկաբեկում ու իրենց քրիստոնյա անվանելով, Աստծո առջև գարշելի գործեր են անում»:***

Թալիսմանների ու այլ «պահպանող» միջոցների դեմ պայքարը օգուտ չտվեց: Մինչև օրս էլ դրանք օգտագործվում են: Զինվորները պատերազ-

մի ժամանակ տարբեր «երկնային գրեր»՝ հմայիլներ էին կրում, կարծելով, որ դրանց շնորհիվ գնդակը կշրջանցի իրենց, կամ թշնամու սուսերը չի խոցի: Շատ շատերը թալիսմաններ, մատանիներ, ականջողներ են կրում, հուսալով դրանց միջոցով պաշպանվել մութ ուժերից, բոլոր վին չկասկածելով, որ այդպիսով կապվում են սատանայի հետ:

Մնում է ամբողջ հոգով հուսալ, որ Ինքը՝ Աստված խելքի կբերի մեզքեր մեջ մոլորված նման մարդկանց:

ՈԳԻՆԵՐԻ ՀՄԱՅՈՒԹՅՈՒՆ

Բ Օրինաց գրքի ԺԸ գլխի 10-11 համարներում մեզքերի թվում նշվում է նաև «ոգի կանչելը»: Սա արդեն կախարդության այլ ոլորտ է: Ոգիներ հմայողը մի մարդ էր, որը տարբեր նշանների միջոցով հրաշքներ էր գործում, ծխեցման և այլ ֆանտաստիկ ծեսերով ապաքինում հիվանդներին, քշում չար ոգիներին և այլն: Ավելի հաճախ նրանք օգնելիս էին հմայում, ինչին որ ականատես ենք լինում նաև այսօր: Կան նաև մեռելահարցուկներ, որոնք կանչում են հանգուցյալների հոգիները, որպեսզի իմանան ապագայի մասին: Սավուղ թագավորը երկրից քշեց բոլոր կախարդներին ու գուշակներին, իսկ հետո ինքը դիմեց նրանց օգնությանը (Ա Թագ., ԻԸ, 3-10): Մանասեն ընդունում ու պատվում էր գուշակներին ու կախարդներին (Դ Թագ., ԻԱ, 6): Ովսեա արքան քշեց կախարդներին, ոչնչացրեց թերափիմներն ու կուռքերը և բոլոր գարշություններ, բայց սատանան նորից ետ բերեց այդ բոլորը (Դ Թագ. ԻԳ, 24):

Քրիստոսի ժամանակ շատերն էին զբաղվում այդ գաղտնի գործով, կախարդությունը օգտագործելով որպես արհեստ: Նրանք սիրում էին կրկնել, որ Սողոմոնը իրենց ուսուցիչն է, իբր նրա գրքերով են սովորել: Բայց իրականում, Սողոմոնն այս հարցում մեղավոր է այնքան, որքան Մովսեսը, որի անվամբ են կոչել նրա հետ կապ չունեցող կախարդության «6-րդ և 7-րդ գրքերը»: Այնտեղ ամփոփված են մարդկանց ու կենդանիների տարբեր հիվանդությունների բուժման դեղատոմսեր, երբ կանչում են չար ոգիներին: Գրքի առաջին մասը կոչվում է «Սև ագռավ», իսկ վերջինը՝ «Ճշմարիտ հրե վիշապ կամ իշխանություն երկնքի ու դժոխքի ոգիների նկատմամբ»:

Մեռելահարցուկների մասին ավելացնեմ նաև, որ սովորաբար հանգուցյալների հոգիները նրանք կանչում են նրանց շիրիմների մոտ: Եսայի ԿԵ, 3-4 համարներում ասվում է. «Այնպիսի մի ժողովրդի, որ ինձ բարկացնում են միշտ, իմ առջև զոհ են անում այգիներում, և խունկ են ծխում աղյուսների վրա: Որոնք նստում են գերեզմաններում, և գիշերը գաղտուկ տեղերում են օթևանում»:

Հոգի կանչողները ցածրախոս են, զրուցում են փսփսալով, կարծես գետնի տակից ձայն է լսվում: Դրա համար և շատերը համոզված են, որ այդ մարդիկ խարդախ են, անարդար ու ստում են, երբ ասում են, թե մեռելները զրուցում են իրենց հետ:

Ցանկանում եմ ավելացնել, որ հոգեհարցությունն ու դյութումը կեղծիք չէ, այն լիովին իրագործելի է, եթե անհնարին բան լիներ, Աստված այն չէր արգելի:

Շատերը կարծում են, որ այդ ամենը խաբեություն է: Հասկանալի է, պատահում են նաև խաբեբաներ: Դրա ապացույցն են բազմաթիվ կախարդների դատավարությունները: Օրինակ պարզվեց, որ շատերին լավ հայտնի Աննա Ռոտեն՝ կեղծարար է: Բայց, դա ամենևին չի նշանակում, որ այն ամենն ինչ վերաբերվում է սպիրիտիզմին՝ այսինքն հոգեհարցությանը, դատարկ բան է: Այստեղ անմիջական կապ կա ոգիների աշխարհի հետ:

Աստվածաշնչում հոգեհարցուկների մի հավաք է ներկայացված: Սավուղ արքան անհանգստացած էր, և ցանկանում էր գալիք մարտի ելքը իմանալ: Նա հարցրեց Տիրոջը, բայց վերջինս ոչ երազով, ոչ արթմնի, ոչ էլ մարգարեների միջոցով չպատասխանեց: Այնժամ Սավուղը գնաց Ենդովրի ձորի վհուկ կնոջ մոտ ու պահանջեց, որ Սամուել մարգարեի ոգին կանչի: Սամուելը ելավ գետնի տակից ու Սավուղին դիմելով ասաց. «Տերը քեզ հետ Իսրայելն էլ է մատնելու փղշտացիների ձեռքը, և վաղը դու ու քո որդիները ինձ մոտ կլինենք» (Ա Թագ., ԻԸ, 19): Եվ այդպես էլ եղավ, Սավուղը իր որդիների հետ հաջորդ օրը սպանվեցին պատերազմի դաշտում:

«Արդյո՞ք Սամուելի ոգին հայտնվեց, թե՝ ոչ» այս հարցում կարծիքները բաժանվում են: Օրինակ Լյութերը գտնում էր, որ Սամուելի ոգու հայտնությունը սատանայական ուժերի խաբեություն էր, ընդամենը տեսիլք: Այս միտքը հիմնավորում էր նրանով, որ Աստված չէր կարող թույլ տալ, որ ինչ-որ վհուկ անհանգստացնել Սամուելի ոգուն: Մյուսները պնդում, որ Սամուելը հայտնվել է ոչ թե կախարդուհու, այլ Ամենակարող Աստծու կամքով, քանի որ «կինը Սամուելին տեսնելով մեծ ձայնով աղաղակեց» (Ա Թագ. ԻԸ, 19): Այդ խոսքերից կարելի է դատել, որ Նա ինքն էլ զարմացած ու ապշած է կատարվածից: Ակնհայտ է, որ նա չէր սպասում, թե Սամուելը կգա: Հավանաբար, այս այցելուին նույնպես ուզում էր խաբել ու ինչ որ բան հնարել, սակայն, Աստված ցանկացավ, որ Սավուղը ճիշտ պատասխանը իմանա:

Այս հարցի վերաբերյալ մինչև օրս էլ տարաձայնություններ կան: Իսկապե՞ս հայտնվել է Սամուելի ոգին, թե՝ ոչ: Այդ խնդիրը այսօր դեռ բարձրացվում է ու քննարկվում: Շատ հոգեհարցուկներ համոզված են, որ զրուցել են Պողոսի, Լյութերի և այլոց ոգիների հետ: Աչք է զարնում մի հանգամանք. նշված ոգիները հոգեհարցուկների հետ զարմանալիորեն ցածր բաների մասին են խոսում: Օրինակ, Պողոս առաքյալը դեռ երկնային կյանքում մեկ միտք էր համակում՝ ազատվել իր մարմնից և Քրիստոսի հետ լինել: Եվ հիմա, երբ նա վայելում է Աստծո որդի լինելու ուրախությունը, մի՞թե նրա հոգին հրաշալի վեհ խոսքեր չէր ասի: Բայց, երբ մեռելահարցողները կանչում են նրա «ոգին», ոչ մի բարձր գաղափարի մասին չի խոսում, այլ հակառակը, հաճախ կոպիտ ու անպարկեշտ խոսքեր է ասում:

Պայծառակերպության լեռան վրա, երբ Մովսեսն ու Եղիան հայտնվեցին Հիսուս Քրիստոսին, խոսեցին Նրա այս աշխարհից ելքի մասին: Բայց ոգիները որոնց կանչում են մեռելահարցուկները, ավելի շուտ իրենց ներկայացնում են որպես թե վե-

բոհիշյալ մարդկանց ոգիներ:

Պետք է խոստովանել, որ մեռելահարցուկների շնորհիվ շատերը սկսեցին հավատալ անդրշիրիմյան կյանքի գոյությանը: Սակայն հավատացյալին անդրշիրիմյան կյանքի գոյության նման ապացույցները պետք չեն: Դրանում պետք համոզված լինենք Սուրբ Գրքի շնորհիվ: Իհարկե Աստված հոգիները արթնացնելու համար տարբեր միջոցներ կարող է կիրառել: Իսկ մենք պետք է վարվենք այնպես, ինչպես թելադրում է Սուրբ Գիրքը. «Երբ Քո Տեր Աստծո քեզ տրված երկիրը մտնես... ձեր մեջ չգտնվի մեռելահարցուկ, որովհետև բոլոր այս բաներն անողը Տիրոջ առաջ գարշելի է» *(Բ Մնաց. ԺԸ, 11):*

Այստեղ չի ասվում, որ դրանով զբաղվողներին համակում է վախն ու սարսափը: Այլ գրված է, թե, ով զբաղվում է դրանով գարշելի է: Այսինքն, ոչ միայն զբաղմունքը այլև այդ գործ անող մարդն է գարշելի Աստծու առաջ: Այս խոսքերը պետք է գրել այն տան պատերին ու դռներին, որտեղ հավաքվում են ոգեկանչության համար. «Այր կամ կին, որ վհուկ կամ հմայող լինի, անպատճառ պիտի մեռցվի, քարերով նրանց քարկոծեն, նրանց արյունը իրենց վրա լինի» *(Ղևտ. Ի, 27):*

Թող լսեն բոլոր նրանք, ովքեր զբաղվում են այդ արգելված գործով: Լսեցեք, ով դո՛ւք, գուշակներ, հմայողներ, ոգեհարցուկներ և այլոք. «Նրանց քարկոծել է պետք, նրանք պետք է մեռցվեն»:

Աստված ավելին է ասում: Նա սպառնում է ոչ միայն կախարդներին, գուշակներին այլ նաև նրանց հետ կապված մարդկանց: «Վհուկներին մի լսեք և հմայողներից մի հարցրեք, որ նրանցով չպղծվեք, ես եմ Տերը՝ ձեր Աստվածը» *(Ղևտ., ԺԹ, 31):*

Ուրեմն, ով դիմում է գուշակին, երես է թեքում Աստծուց և մութ ուժերից է օգնություն հայցում: Աստված ավելի խիստ է ասում է. «Եվ այն անձն էլ, որ վհուկների և հմայողներին դառնա, նրանցով պոռնկանալու համար՝ Իմ երեսը պիտի նրա վրա դարձնեմ և նրան կորցնեմ իր ժողովրդի միջից» *(Ղևտ. Ի, 6):*

Լա՛վ լսիր, թանկագին հոգի: Եթե ցանկանում ես այս գործերով զբաղվել՝ իմացիր, որ Աստված քեզանից երես կթեքի: Արդքո՞ք գիտես, թե ինչ է նշանակում, երբ Աստված դադարում է հոգալ քո մասին, ողորմած լինել, օրհնել ու բարին անել: Նա Իր դեմքը քո դեմ կշրջի իբրև հակառակորդ և իբրև ահեղ դատավոր ու կվերցնի քեզ մարդկանց միջից:

Հիմա ո՞վ կպնդի, թե դա անմեղ զբաղմունք է: Կամ կարո՞ղ ես արդարանալ ասելով, թե քո հավատացյալ մայրը կամ հայրը ոչ մի վատ բան այդտեղ չեն տեսնում: Կարո՞ղ ես արդյոք այժմ ասել, որ հմայությունն ու կախարդությունը մեծ մեղք համարելը չափազանցություն է:

Ո՛չ, այս ճանապարհով բուժումն ամենևին էլ Աստվածաշնչից չէ ընդօրինակված: Դա ժողովրդական բժշկություն չէ, այլ՝ մեղք է, կախարդություն, որը գարշելի է Աստծո առաջ ու կարող է քեզ մահ բերել, եթե ամբողջ սրտով չապաշխարհես:

Տա Աստված, որ ընթերցողի հիշողության մեջ հնչեն հետևյալ խոսքերը.

«Այս գործով զբաղվող յուրաքանչյուր անձ գարշելի է Աստծո առաջ»:

ԻՆՉՊԵՍ Է ԴԱ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Աստծո խոսքը կարդալով ու խորանալով, հասկանում ենք, թե որքան տհաճ է խավարի ուժերի աշխարհն, ու որքան տարածված է այդ մեղքը: Այսօր էլ ցավով պիտի ընդունենք, որ այս հարցում դեռևս շատ մշուշոտ կողմեր կան:

ԳՈՐՏՆՈՒԿՆԵՐԻ «ԲՈՒԺՈՒՄԸ»

Հմայողները ամենից հաճախ օգնում են ազատվել գորտնուկներից:

Մի քանի օրինակ բերեմ, թե աշխարհի տարբեր կողմերում ինչպես է դա արվում:

Համբուրգեցի մի կին իր նամակում գրում է. «Աջ ձեռքիս վրա գորտնուկներ կային: Մեր նախկին սպասուհին ասաց, որ հենց նոր դիակ լինի կօգնի ազատվելու դրանից: Եվ իսկապես, երբ սկսեցի նրա խորհուրդներին հետևել, գորտնուկները անհետացան»: Դարմի շրջանից ստացած նամակում ասված է.* «Երբ դեռ 11-12 տարեկան դպրոցական էի ձախ ձեռքիս շատ գորտնուկներ ունեի: Ամեն կերպ աշխատում էի դրանք վերացնել, բայց չէր հաջողվում: Այդ ժամանակ ինձ խորհուրդ տվեցին դիմել մի պառավի: Քրոջս հետ գնացինք: Նա մի թել վերցրեց, օղակներ արեց, ինչ որ անհասկանալի բաներ շշնջաց և անցկացրեց բոլոր գորտնուկների վրա: Հետո ասաց, եթե որևէ մեկի թաղման ժամանակ այդ թելը գերեզմանի մեջ գցի, ես կազատվեմ: Այդպես էլ եղավ, գորտնուկներս անհետացան»:

Մի նամակ էլ Վեստվֆալից. «12 ամյա տղայի ձեռքին շատ գորտնուկներ կային: Վերջերս նա մոտս եկավ, ու նկատեցի, որ ձեռքերը մաքրվել են: Իմ հարցին, թե ինչպե՞ս է դա կատարվել, պատասխանեց.* «Մեր հարևանուհին ասաց, որ պետք է թել վերցնել, գորտնուկների թվով օղակներ անել ու տանել թաղել ջրհորդանի մոտ: Ես էլ արեցի ու անցան»:

Որքան քիչ են մարդիկ, որ հասկանում են, թե ինչ է նշանակում հրապուրվել դրանով: Այդ մասին կարելի է դատել Շլեզիի մանկատան տնօրինուհու նամակից. «14 ամյա տղայի ձեռքերը ծածկված էին գորտնուկներով: Շատ միջոցներ փորձեցին դրանից ազատվելու համար, բայց ապարդյուն: Ահա մի կին գաղտնի միջոց երեխային սովորեցրել էր. նորալուսնի ժամանակ պետք է տրորել ձեռքերն ու ասել.* «Ինչ-որ տեսնում եմ, թող աճի, ինչ տրորում եմ, թող անհետանա: Հայր Որդի և Սուրբ Հոգի»: *Նա տղային զգուշացրել էր, որ ոչ մեկին չպատմի: Ես երբեք չէի իմանա այդ մասին, եթե չնկատեի, որ գորտնուկներն անհետացել են: Հարցրեցի, թե ի՞նչ է պատահել: Չպատասխանեց: Միայն որոշ ժամանակ անց ամեն ինչ պատմեց»:*

Օբերհաուզիտից ստացված նամակում կարդում ենք. «Միայն Աստված գիտե, թե տատիկս ինչքան բուժման միջոցներ գիտի: Բայց նա չէր հասկանում, թե Աստված ինչու է իրեն տանջում հոգեպես ու ֆիզիկապես: Կախարդության մեղքի պատճառով նա հանգիստ չուներ: Երբ հավատում էի, որ նորալուսնի ժամանակ ինչ-որ բան ասելիս ու անելիս անցնում են աչքացավը, ատամի ցավը,

այդպես էլ լինում էր: Բայց հիմա կարող եմ վկայել, որ ավելի լավ կլիներ չդիմեի այդ հմայությունների օգնությանը, որովհետև չեմ կարողանում ազատվել լուսնի ազդեցությունից: Լիալուսնի ժամանակ միտքս մթագնում է, կորցնում եմ կենսախնդությունս ու ինձ թվում է, թե շուրջս դևեր կան»:

Մի կին գրում է. «Արդեն երկու տարի է գտել եմ Փրկչին: Բայց հավատս չի ավելանում: Կարծում եմ, կախարդության մեղքի հետևանքն է: Երիտասարդ ժամանակ գորտնուկներիս համար հմայողներին ու խաղաթղթերով բախտ բացողներին եմ դիմել»:

Մեկ ուրիշը գրում է. «Ինքս զբաղվում էի կախարդությամբ և ուրիշներին էլ դիմում էի, որ իմ ապագան գուշակեն: Այդ ժամանակ շահարկում էի Սուրբ Երրորդության անունն ու ձեռքով խաչ էի հանում: Ձեռքիս շատ գորտնուկներ կային: Դրանից ազատվելու համար «Հայր մերն» էի ասում: Գորտնուկների թվին համապատասխան քանակով օղակներ էի անում թելով ու կապում, աղոթում էի ու թելը թաղում տան չեմի մոտ: Մի աղջիկ կար, որ գորտնուկներ ուներ:Նրան ասել էին, որ երկար թել է պետք վերցնել, օղակներ անել ու սգո թափոր տեսնելիս, թելը գցել ճանապարհին, որ մարդիկ անցնեն վրայով: Նա հետևել է այդ խորհրդին ու ազատվել դրանցից»:

Այս բոլորից հետո ի՞նչ եզրակացություն կարող ենք հանգել: Առաջին՝ պարզ է դառնում, թե որքան տարածված է այդ մեղքը: Երկրորդ՝ աշխարհի բոլոր կողմերում զբաղվում են դրանով: Երրորդ՝ թե՛ հարուստները, և թե՛ աղքատները հրապուրվում են այդ գործով: Եվ միշտ շահարկվում է «Հայր մերը» կամ Սուրբ Երրորդության անունը: Ընդսմին կախարդությամբ զբաղվողները, և նրանց դիմողները ասում են. «Այստեղ ոչ մի վատ բան չկա, մենք Աստծո անունն ենք տալիս»: Եվ, այնուամենայնիվ, դա աղոթք չէ: «Հայր մեր» սուրբ աղոթքը այս դեպքում որպես կախարդական խոսքեր են օգտագործվում: Աստծո անվան տակ կախարդության մեղքն է քողարկվում: Հմայողների տարօրինակ գործողությունները ապացուցում են, որ բարի ու աստվածային ոչ մի բան չկա այդտեղ: Ստիպում են գորտնուկների թվով օղակներ անել թելով: Հետո ձգում են այն փողոցով մեկ, որ սգո թափորը անցնի վրայով, կամ գերեզմանի մեջ են գցում, կամ թաղում չեմի մոտ: Արդյո՞ք դա կարող է Աստծուց լինել: Երբե՛ք: Հետո այն խիստ գաղտնիությունը, որ պետք է պահպանեն հմայողին դիմելուց հետո, իսկ հմայությունը կատարվում է նորալուսնի ժամանակ: Այս ամենը պարզ ու որոշակի ցույց է տալիս, որ գործ ունենք ոչ թե Աստծո, այլ մութ ուժերի հետ: Այն հանգամանքը, որ այդ միջոցներով մարդիկ գործնականում բուժվում են, ապացուցում է ինչ-որ ուժի գոյությանը: Եթե այդ ամենը դատարկ բաներ լինեին, ապա արդյունքում ոչինչ չէր լինի: Սակայն, գորտնուկներն իսկապես անհետանում են, որովհետև ինչ-որ բան կատարվում է: Պարզ է, որ գործ ունենք դիվային ուժի հետ ու ապաքինմանը հենց դա է նպաստում:

Շատերն, իհարկե, այդ մասին չգիտեն ու չեն գիտակցում: Բայց կան նաև այնպիսիք, որ գիտեն,

ու այնուամենայնիվ, գիտակցաբար մեղք են գործում:

Մի անգամ պատմեցին, թե մեկի երեխան հիվանդացել էր քոսով և ստիպված են եղել դիմելու հեքիմին: Եվ մայրը ասել է. «Կուզի սատանան, կուզի Աստված, միայն թե օգնի»: Երբ այս մասին լսեցի՝ ես ուզեցի բղավել:

Այդ զրույցը Բրանդենբուրգում է տեղի ունեցել: Սիրտս սարսափից նվազում է, երբ հիշում եմ այդ խոսքերը. «Կուզի սատանան, կուզի Աստված, միայն թե օգնեն»:

Բայց ավա՜ղ շատերն են այդ կարծիքին: Ինչ գնով ուզում է լինի, միայն թե օգնի: Աստծուն այսպես վիրավորելու կամ ծանր հանցանքի միջև ոչ մի տարբերություն չկա:

ԱՏԱՄՆԱՑԱՎԻ ՀՄԱՅՈՒՄ

Գրեթե նույն միջոցներով ազատվում են նաև աչքացավից ու ատամնացավից:

Մի աղջկա ատամները անտանելի ցավում էին: Նրան խորհուրդ են տվել լուսնի տակ հմայել այդ ցավը: Աղջիկը հետևել է խորհրդին, ու ցավերը այլևս չեն կրկնվել:

Շպանդաուից մի երիտասարդ գրում է. «Փոքր հասակում աչքերիս հաճախ էին «գարուկներ» (աչքի հիվանդության տեսակ) լինում: Տատիկս խորհուրդ տվեց դիմել հմայողին: Ես լսեցի նրան, ու ամեն ինչ անցավ: Հետո ես ինքս սովորեցի բժշկել «գարուկը»:

Մեկ այլ նամակում գրում են. «15 ամսական երեխային «անգլիական հիվանդություն» էր սպառնում: Ինձ խորհուրդ տվին դիմել հեքիմի, որը շատերին էր բուժել: «Բուժումը» կատարվեց լուսնի նվազելու ժամանակ, ուրբաթ օրը: Երեխայի մազերն ու եղունգները կտրեցին, թղթով փաթաթեցին, խաչ հանեցին ու դրեցին ինչ-որ տեղ: Հետո անհասկանալի խոսքեր շշնջացին, միայն լսում էի, որ Աստծո անունն են տալիս»:

Ջորսամյա որդուս ստիպեցի հմայողի մոտ գնալ: Նա տառապում էր «կարմիր քամի» հիվանդությամբ: Ամեն ինչ շատ պարզ էր արվում: Լիալուսնի ժամանակ ձեռքս պետք է տանեի ու բերեի հիվանդ մասի վրայով»:

Իսկ ինչպիսի՞ն էր արդյունքը:

Այդ մասին կիմանաք շարունակությունից. «Տղաս այնպես դիվոտվեց, որ գիշերը չէինք կարող նրան մենակ թողնել: Նա հաճախ էր հարձակումների ենթարկվում չարի կողմից ու դրանից լրիվ հյուծվել էր: Նրան անհասկանալի վախ էր համակում ու այդ պատճառով բարձր բղավում էր, մարդկանց մեջ փրկություն փնտրում: Նրան հաճախ թվում էր, թե մահն է իր վրա հարձակվել ու ցանկանում է իրեն սպանել: Սարսափելի է մտածել, թե երեխան որքան տանջվեց»:

Կախարդության հետևանքների մասին կխոսենք նաև ստորև:

Բոլոր դեպքերին բնորոշ է այն, որ մարդն ձգտում է ցանկացած գնով առողջ լինել. առանց հարցնելու արդյո՞ք Աստծո կամքով է, թե՝ ոչ, ուզում է ազատվել իր բեռից՝ հիվանդությունից: Եվ եթե Տերը չի ցանկանում անել այն, ինչ մարդը իր

մտքում դրել է, ապա կամա թե ակամա, սատանայի օգնությանն է դիմում:

Շատ հաճախ մարդիկ առավել գնահատում են իրենց ֆիզիկական ամրությունը, քան հոգևորը: Աստված առաջին հերթին զբաղվում է մեր հոգով: Նրա համար մարդկանց հոգին շատ ավելի կարևոր է քան մարմինը: Իր հերթին սատատան մարմինն ու առողջությունը այնքան կարևոր է դարձնում մարդու համար, որ վերջինս հանուն դրա զոհում է հոգին ու խոստացված հավերժական երանությունը: Սա անհեթեթություն է ու խելահեղություն:

Մի՞թե գրված չէ. «Բայց գիտենք, թե Աստծուն սիրողների համար ամեն ինչ գործակից է լինում դեպի բարին, նրանց, որ նրա նախասահմանումով կանչվեցին» *(Հռոմ., Ը, 28)*: Բայց այդ մասին լսել չեն ուզում: Ոչ ոք չի ուզում հիվանդությունը համբերությամբ տանել: Ցանկանում են ամեն գնով ազատվել հիվանդությունից, խտրություն չդնելով միջոցների մեջ: Այո, ցավը դուրս են մղում, բայց դժվարությամբ են տանում մեղքի բեռը:

Ոչ ոք չի կասկածում, որ հեքիմները մեծ հաջողություն են վայելում: Ռուրից մի հավատացյալ կին գրում է. «Լսե՞լ եք, որ կախարդության շնորհիվ կարելի է ազատվել հարբեցողությունից: Ես դրա ականատեսն եմ: Մի անգամ ինձ հավատացյալ մի կնոջ հասցե տվեցին, որի ամուսինը չար ու մոլի հարբեցող էր: Երբ գնացի, կինը տան չէր: Ամուսինը կատաղած էր ու անբարեհամբույր: Չնայած դրան նստեցի ու սկսեցի զննել իրեն: Կարծես համը լիներ, ոչ մի խոսք չասաց: Կինը այդպես էլ չվերադարձավ: Ամուսնուն խնդրեցի, որ հաղորդի, թե սպասում եմ կնոջը իմ տանը: Երբ կինը եկավ, նկատեցի, որ սա նույնպես սիրալիր չէ, կասկածոտ ու վախեցած: Երբ հարցրեցի ամուսնու մասին, պատասխանեց, թե առաջ շատ էր խմում, բայց հիմա մի կում անգամ չի օգտագործում: Ինչ որ բան կասկածեցի ու դրա համար հարցրեցի. «Իսկ ի՞նչ է, Կապույտ Խաչի ընկերության անդա՞մ է դարձել»: «Ո՛չ», - պատասխանեց նա, ու պատմեց, թե ինչպես է ամեն բան եղել: Կնոջը խորհուրդ են տվել մի պառավի դիմել, որը կարողանում է բուժել հարբեցողությունը: Գնացել է: Սկզբում վճարել է: Հետո պառավը կողքի սենյակն է մտել ու մնացել այնտեղ մեկ ժամ: Դուրս գալուց հետո ասել է, որ կարող է հանգիստ տուն վերադառնալ, ամուսին այլև խմիչք չի օգտագործի: Տանը նա ամուսնուն անկողնուն գամված է գտել: Վերջինս տանջալից փսխում էր ու բառիս բուն իմաստով պայքարում սատանայի դեմ: Որոշ ժամանակ անց ամուսինը մի բաժակ գարեջուր է խմել, ու նույնը կրկնվել է: Այդ օրից նա այլևս չի խմում: Ուշադրությամբ լսելուց հետո ասացի, որ անմիջապես պետք է ազատվի դրանից, որովհետև հենց այդ ճանապարհով նա կապվել է սատանայի հետ: Բայց կինը նույնիսկ լսել չուզեց, այլ հակառակը, ուրախ էր, որ ի վերջո կարող է հանգստանալ հարբած ամուսնու քմահաճույքներից: Ի՜նչ սարսափելի ինքնախաբեություն»:

Այո՛ կախարդներին դիմելիս փոփոխությունը ակնհայտ է: Բայդ դա ոչ թե Աստծո ուժի արտահայտությունն է, այլ սատանայի իշխանության: Աստված հարբեցողներին օգնում է Սուրբ Հոգու

զորությամբ, իսկ սատանան՝ կախարդության ու պիղծ ոգու, որպեսզի զոհին պահի իր իշխանության տակ: Օ՜հ, խեղճ, խաբված հոգիներ:

Թուրինգիայից գրում են. «Շատերը կախարդներին խնդրում են իրենց տանը հմայություններ անել, որ խուսափեն հրդեհից: Հատուկ գրություններ կան, որոնք պետք է դնել գերաների տակ կամ վրան, այդ դեպքում բնակարանի հետ ոչինչ չի պատահի: Նույնն անում են նաև ամբարներում, գոմերում, որ իրենց ունեցվածքն ու անասունները անվնաս մնան»:

Վերջերս մի կին մահացավ, որը հաճախ էր գալիս հոգևոր հավաքների: Ծեր էր: Երբ հիվանդացավ, իրեն «ցանեց»: Դրա համար մոխրով լցված կավե ծաղկամանի մեջ սերմեր լցրեց: Այդ ընթացքում ինչ որ բան էր պետք ասել: Եթե սերմերը ծիլ տային կապաքինվեր, հակառակ դեպքում՝ ոչ: Երբ ասացին, որ դա մեղք է, պատասխանեց. «Բայց դա միշտ ինձ օգնել է»: Նրա մահը սարսափելի էր: Մահից առաջ նորից խոսեց կախարդության մասին ու ասաց, որ զզվում է ու ապաշխարհում: Ինձ համար սարսափելի էր այն, որ մինչև վերջին բոպեն նա պայքարեց սատանայի դեմ, թեև խոստովանել էր: Երբ նրան հարցրեցին, թե «հրե գիր» կամ նման մի բան չունի՞, պատասխանեց, որ այդ ամենը այրել է: Մահից հետո, երբ զննեցինք նրա տունը, կախարդության համար գործածված իրեր գտանք և «թուղթ ու գիր» «հրդեհի դեմ»: Դրանց համար էլ այդքան սարսափել չարչարանքներ կրեց հոգին ավանդելիս:

Ծնողները իրենց երեխաներին հաճախ են տանում հմայողների մոտ: Նրանք ձեռքով շոյում են, ինչ - որ սպեղանի քսում, հետո երեխայի աջ ձեռքը բռնած անհասկանալի բաներ մրմնջում: Դրանով նրանց մանուկ հոգիները սատանայի իշխանությանը հանձնում:

Վերջերս մի մարդ էր հիվանդացել, որին խորհուրդ էին տվել պատուհանի գոգին երեք խնձոր դնել: Եվ հենց սրանք չորացան արևի տակ, հիվանդությունը նույնպես «չորացավ»:

Ամենասարսափելին հետևյալն է՝ մարդիկ չեն մտածում, որ այդ «բարի խորհուրդների» միջոցով սատանայի շղթաներում են հայտնվում:

Մի տարիքավոր եղբոր հետ կապված դեպք է ինձ հայտնի: Զրույցի ժամանակ նա ասաց. «Եթե խղճահարությունից դրդված, թեկուզ կախարդությամբ անվճար օգնեն մեկին, մեղք չէ: Մեղք է, երբ դրա համար դրամ են վերցնում»:

Ստացվում է, որ կախարդությունը ընդունելի է Աստծո համար, եթե ձրի է՞ արվում: Սա խոսում է այն մասին, որ այդ «քարոզիչը» քիչ է կողմնորոշվում կախարդության հարցերում:

Մի ծեր մարդ գրում է իր կնոջ մասին. «Նա դեռ երիտասարդ տարիքում դիմել էր մի «հավատացյալ հմայողի», որ բուժի գլխացավը: Այդ մարդը գլուխը կապեց, երեք հանգույց արեց ու Աստծուն նվաստացնող կախարդական խոսքեր ասաց»:

Ահավոր է, երբ մարդիկ նման մութ նպատակներով շահարկում են Աստծո անունը: Ինչ սարսափելի է, որ ընդամենը գլխացավից ազատվելու համար, սատանայի հետ կապի մեջ են մտնում, որպեսզի հետո ամբողջ կյանքում նրանից կախման

մեջ լինենով տառապեն:

Մի նախկին վհուկ գրում է. «Կախարդության միջոցով բուժում էի աչքի հիվանդություններ: Այդ գործողությունը կատարվում էր արևածագից առաջ կամ մայրամուտից հետո, ծառի ստվերում, կամ լուսնի լույսի տակ: Պետք է մատը աչքի շուրջը քսել ու որոշակի խոսքեր արտաբերել երեք անգամ խաչակնքել ու ասել. «Հայր, Որդի ու Սուրբ Հոգի»:

Մոտավորապես նույն կարգի, շատ ուրիշ նամակներ էլ եմ ստացել: Պարզ ու համոզիչ լինելու համար, այս մեջբերումը կանեմ միայն:

«Դիմեցի հմայողներին, բուժեն ատամացավս: Ինձ մի գրություն տվեցին, որ կապեի այտիս: Խստիվ արգելվում էր այն կարդալ: Երրորդը օրը, մայրամուտից հետո, պետք է հանեի ու ուսիս վրայով գցեի կրակի մեջ: Ցավը իսկապես անցավ: Բայց մի քանի օր անց հոգու այնպիսի դեպրեսիայի մեջ ընկա, որ կարծես դժոխքի խորխորատներում եմ գտնվում: Այդ ժամանակ մտածեցի, որ ավելի լավ էր բոլոր ատամներս միասին ցավեին, բայց այս վիճակից ազատվեմ: Հոգու տառապանքը առավել սարսափելի է, քան մարմնի յուրաքանչյուր մասի ցավը»:

ԵՐԿՆԱՅԻՆ ԵՎ ՀՐԵ ԳՐԵՐ

Ահա մի ուրիշ վկայություն. «Ժամանակին «Երկնային թագավորության յոթ բանալի» գրքից վերցրած հրե խոսքեր ու երկնային գրեր էի պահում կրծքիս: Ուրիշներին էլ էի խորհուրդ տալիս

այդպես վարվել: Մի անգամ փորձեցի «երկնային գիր» դնել երեխայիս սնարին, բայց նա մեռավ»:

Իրականում այդ գիրքը «Երկնային թագավորության յոթ բանալիները (կամ նետեր)» այն բանալիներն են, որոնք փակում են երկնքի դռները բոլոր նրանց առջև, ովքեր չեն բաժանվում այդ գրքից և հավատում են այդ. «Երկնային թագավորության յոթ բանալիները» կօգնեն իրենց:

ՄՈՎՍԵՍԻ 6 -ՐԴ ՈՒ 7 -ՐԴ ԳՐՔԵՐԸ

Զարաղետ «Երկնային թագավորության յոթ բանալի» գրքի պես կան նաև այսպես կոչված «Մովսեսի 6-րդ և 7-րդ գրքերը», որոնց մասին արդեն հիշել ենք: Սրանք Մովսեսի հետ ոչ մի կապ չունեն: Ուղղակի դա հակառակորդի խորամանկությունն է: Գրքին Մովսեսի անունն է տրված, շատ հոգիներ հմայելու համար նպատակով:

Պոմերանիայից ստացված նամակում կարդում ենք. «Դեռ աշակերտ եղած ժամանակ նկատեցի, որ մորս տանջում է ինչ-որ անհանգստություն, այնքան, որ, նա վհատվեց: Դեռ չէի հասկանում ու չգիտեի Քրիստոսի արյան ուժը, ու մտածում էի, որ նյութապես օգնելով կհանգստացնեմ մայրիկիս: Մեր տանը «Մովսեսի 6-րդ և 7-րդ գրքերը» կային, որը մի քանի անգամ կարդացել եմ: Շատ բան է արդեն մոռացվել, սակայն մի դեպք ինձ հանգիստ չի տալիս: Օտար, ինձ անծանոթ լեզվով, կախարդական նշաններ արտագրեցի, որը պետք էր օծվեր գրողի արյամբ: Այդ գրությունը պետք էր բարձի տակ դնել, ու քնի մեջ հնարավոր է տեսնել վիճա-

կախաղի երջանիկ տոմսի համարը: Այդ գրքից արտագրեցի նաև մեկ այլ բանաձև, կախեցի մայրիկիս վզից, որ ապաքինվի: Արդյունքը սարսափելի էր: Նա մի քանի անգամ փորձեց ինքնասպան լինել ու մեռավ սարսափների մեջ»:

Մեկլենբուրգցի մի տղամարդ գրում է. «Պատերազմին մասնակցելուս տարիներին կինս հեքիմից խնդրել էր «կարմիր քամին բուժել»: Կինս հավատացյալ էր ու աստվածավախ: Սակայն, այդ դեպքից հետո լրիվ փոխվեց ու հիմա տղայիս հետ միասին թշնամաբար է վերաբերվում հավատացյալներին: Առաջ նա ժողովարան էր գնում, իսկ վերջերս, երբ քահանան մեզ այցելեց, կինս չարությամբ բռնված տան ելքը ցույց տվեց նրան»:

Այստեղ ակնհայտ է կախարդության տխուր հետևանքը: Բոլոր այդ մութ գործերը կապված են սատանայի հետ: Կարծում եմ, որ այս օրինակներից ու վկայություններից շատերին պարզ դարձավ, որ ամենևին էլ անմեղ զբաղմունք չէ այդ ամենը ու աստվածային ոչինչ չկա:

Բերեմ ևս մի քանի օրինակ:

Մի երիտասարդ, որ պատերազմից ներվային հիվանդությամբ էր վերադարձել, խորհուրդ տվեցին կախարդի օգնությանը դիմել: Նա պետք է երեք կիրակի անընդմեջ մոտենար սալորի ծառին, գրկեր ու ասեր. «Քարե ծառ, ինձ տանջող հիվանդության մասին քեզ եմ ասում: Առաջին թռչունը, որ կանցնի այստեղով, թող տանի ցավս: Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»:

Պոմերանիայի մի գյուղից գրում են. «Կախարդության մեղքի պատճառով շատերը այստեղ սա-

տանայի շղթաներում են: Մեր մոտ սարսափելի գործեր են կատարվում: Ծաղկում է կախարդությունը: Մարդիկ հաճախ «սև մոգությամբ» զբաղվողների «մայրերի» մոտ են գնում, կամ երբեմն հրավիրում են իրենց տները: Կարելի է ասել, որ ողջ գյուղը կապված է սատանայի հետ»:

Կարծում եմ այս վկայությունները կարդալիս հասկացաք, թե որքան արտահայտված է սատանայի մութ ուժը:

Նրանց համար, ովքեր դեռ չեն հավատում, որ կախարդությունը մեղք է, հաջորդ բաժինն եմ գրում, ուր նամակներից ու վկայություններից կտեսնեք, թե դրանք ինչ հետևանքներ է թողնում:

ԿԱԽԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Կախարդության հետևանքները կարող են տարբեր լինել:

Ստորև ուզում եմ տեղյակ պահել ընթերցողին, թե ինչ են ասում անձամբ դրանցով զբաղվողները:

ԱՂՈԹԵԼՈՒ ՈՒԺ ՉԿԱ

«Կախարդությամբ սատանայի իշխանության տակ ընկա: Հիմա տանջվում եմ ֆիզիկապես ու հոգեպես: Ինձ միշտ հետապնդում է ինքնասպանության գաղափարը: Որքան եմ ուզում ազատվել: Անսահման դժբախտ եմ: Աղոթելու համար ուժ չունեմ, հոգուս մեջ խավար գիշեր է: Ես սիրով կդիմեի Աստծուն՝ մեր Փրկչին: Առանց Նրա իմ

կյանքը հիմա սարսափելի է և ունայն...»: Հետո այս խեղճ հոգին խնդրում է աղոթել իր համար, որ կարողանա ազատվել այդ «բանտից»:

Մեկ ուրիշ նամակում գրում են. «Աստվածաշնչում ինչ-որ կարդում եմ, անմիջապես մոռանում եմ: Ժողովարանում ասվածն էլ ոչ մի ազդեցություն չի թողնում վրաս, շատ քիչ բան եմ հիշում: Բայց շատ եմ ուզում ամեն ինչ հիշել ու ամրացնել սրտիս մեջ: Օ՜, որքան հաճախ եմ կամենում ետ բերել մանուկ օրերիս հավատը: Ինչո՞ւ չեմ կարողանում: Որովհետև նախկինում դիմել եմ հմայողներին ու ինքս էլ զբաղվել դրանով»:

Պարզ է, որ Աստծու խոսքը չհասկանալու պատճառը դա է: Հոգին այնպես է խճճվել սատանայի գործերով, որ Աստծո խոսքը անհասանելի ու անհասկանալի է դարձել նրա համար: Փշոտ ու տատասկոտ է դարձել նրա սիրտը և կենդանի խոսքի սերմը չի կարողանում աճել այնտեղ:Վեստֆալից ստացված նամակում մեկը բողոքում է. «20 տարի առաջ ծանր հիվանդացա ու ինձ խորհուրդ տվեցին հմայողին դիմել: Այդպես էլ արեցի: Եվ հիմա զգում եմ, որ Աստծո առջև աղոթելիս, դա խոչընդոտում է ինձ: Աղոթելիս հաճախ այն միտքն է պաշարում, որ չարժե անել, միևնույնն է չի օգնի: Ինձ հաճախակի տանջում են նաև սրբապիղծ մտքերը»:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏ

Վյուրտեմբերգից ստացված նամակում, հուսալքության մեջ ընկած մեկը գրում է. «Ոչ մի տեղ անդորր չունեմ: Աստծուն աղոթում եմ, որ ների մեղքերս ու ամեն օր ինքս ինձ ասում եմ, որ

առանց Տիրոջ հետ հաշտվելու քնել չի կարելի: Քանի՜ անքուն, արցունքոտ գիշերներ եմ անցկացրել: Զգում եմ, այն օրի եմ հասել, որ նույնիսկ մտածել չեմ կարողանում: Կուզեի հավատալ, որ Փրկիչը ներել է մեղքերս: Բայց ինչ-որ բեռի անտանելի իշխանություն եմ զգում վրաս:» Հաճախ եմ մտածում, գոնե մեկը գտնվեր, որի հետ կարողանայի կիսվել: Ձեռքերիս ու ոտքերիս մեծ ծանրություն եմ զգում, սարսափելի մտքերը ավելի ու ավելի են ինձ համակում: Այն ժամանակից, ինչ աշխատում եմ Աստծուն մոտ լինել, չար մտքերը ավելի պնդերես են դարձել: Ջրի կողքով անցնելիս ձայն եմ լսում. «Ջո՛ւրը նետվիր, ամեն ինչ կվերջանա ու կխաղաղվես»: Դանակ եմ տեսնում, ու կրկին ինչ-որ մեկը մտքերս ուղղում է այն բանին, որ կոկորդս կտրեմ: Այ այսպես, սատանան ինձ հետապնդում է գիշեր ու զոր: Սաղմոսները լսելիս լացելու ցանկություն է առաջանում և թվում է ինձ չի կարելի ուրախ ու գոհ լինել: Ես պետք է ինքնասպան լինեմ ու խաղաղություն կտիրի»:

Մի ուրիշ վկայություն. «Անցյալ տարի տառապում էի ասթմայով: Խորհուրդ տվին դիմել մի կնոջ, որը կարող էր ինձ բուժել: Մանուկ հասակում էլ մայրս ինձ տարել է հեքիմի մոտ... Իսկ հիմա ինձ հետապնդում է ինքնասպանության գաղափարը»:

ՄՏՔԵՐ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաճախ են այդ ահավոր մտքերը դառնում որպես կախարդության մեղքերի ուղղակի հետևանք: Ինչպես նկատեցինք, դրանք ավելի շատ արտահայ-

տվում են ինքնասպանության կամ սրբապղծության դիմելու ձևով: Ոմանք անտառի կողքով անցնելիս չեն կարող չլսել ցածր կանչը. «Գնա՛ ինքնասպան եղիր ու վե՛րջ ամեն ինչին»: Նրանք չեն կարողանում անցնել երկաթգծի նույնիսկ կողքով, քանի որ ինչ-որ ձայն համոզում է նրանց գնացքի տակ նետվել: Հաճախ սատանան այս սարսափելի գաղափարներով երբեմն հասնում է իր նպատակին: Եվ ահավոր, անբերեն մտքերից խուսափելու համար, մարդն ի վերջո, ինքնասպան է լինում:

ՍՐԲԱՊԻՂԾ ՄՏՔԵՐ

Ոմանց հետապնդում են սրբապիղծ մտքերը, որոնք սովորաբար ուղղված են Աստծո, Փրկչի ու Սուրբ Հոգու դեմ: Օրինակներ չեմ բերի: Չեմ ուզում գայթակղել ոչ ինձ, ոչ էլ ձեզ, որովհետև սատանան հաճույքով օգտագործում է տարբեր վատ խոսքեր, դրանք ամրապնդելով մարդու հիշողության մեջ: Իսկ հետո, դրանցից ազատվելը այնքան էլ հեշտ չի լինում: Ովքեր տառապում են նման մտքերից, ասում են. «Չեմ ցանկանում այդպես մտածել, դա իմ սրտից չի բխում»: Սարսափելի է, երբ վատ մտքերը այնպես են գալիս, կարծես ինչ-որ մեկը դրանք շշնջացել է ականջիդ: Հատկանշական է, որ դրանք ավելի հաճախ գալիս են, երբ մարդը աղոթում է Աստծուն, Աստվածաշունչ է կարդում, կամ եկեղեցում ուշադրությամբ Աստծու խոսքն է լսում: Սատանան չար մտքերով շատ հաճախ է այդ մարդկանց այցելում, և նրանք ստիպված են լինում թողնել եկեղեցին, Աստծո խոսքի ընթերցումը, դա-

դարում են աղոթել, միայն թե սրբապիղծ մտքերը իրենց չտանջեն: Դրանով իսկ թշնամին հասնում է իր նպատակին, քանի որ Աստծո որդիները դադարում են միմյանց, ինչպես նաև Տիրոջ հետ հաղորդակցվել: Զկամենալով կենդանի Աստծու հետ շփվել, նրանք աստիճանաբար իջնում են ներքև ու ներքև և ի վերջո, խաղալիք են դառնում խավար ուժի ձեռքում:

Ահազդու, սրբապիղծ մտքերը դրանք հմայողների հետ շփման ուղիղ հետևանք են: Եթե ինչ-որ մեկին նման մտքեր են համակում, ուրեմն անսխալ կարելի է ասել, որ նրանք դիմել են հեքիմներին ու դրա հետևանքով շղթայված են սատանայի կողմից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հմայողների օգնությանը դիմելուց հետո, մարդկանց մեջ անհետանում է Աստծու խոսքը ընկալելու ընդունակությունը: Վյուրտեմբերգցի մի կին, որը ժամանակին դիմել էր կախարդին, գրում է. «Մոտավորապես մեկ տարի է, ինչ անընդհատ աղոթում եմ Աստծուն ու ցանկանում եմ ազատվել սատանայի շղթաներից, բայց ապարդյուն: Շատ բան կարող եմ գրել այդ մասին, սակայն մի բան կուզեմ ասել, այն օրից ինչ ուզեցի Աստծո խոսքով ապրել, գլուխս հաճախ է ցավում: Սատանան սրբապիղծ մտքեր է ուղարկում, որոնք աշխատում եմ ուժով վանել, բայց՝ անօգուտ: Երբ մորս հարցրեցի, թե ինչո՞ւ են ինձ նման մտքեր հետապնդում, պատասխանեց, որ մանուկ հասակում ինձ հաճախ է

տարել կախարդների մոտ»:

Սաքսոնայից մի կին դժգոհում է. «Ես հաճախ եմ հուսալքության մեջ ընկնում: Անօգուտ պայքարից հոգնած, կորցնում եմ ապրելու ցանկությունս: Երբ հայացքս հավատով խաչված Հիսուսին եմ ուղղում, այնժամ խաչը հիշեցնում է, որ դեռ պարտք ունեմ, և դեռ մեղքերս չեմ քավել: Այն միտքը, որ Հիսուսը հանուն ինձ խաչվել է, ավելի շատ է ինձ տանջում: Նախկինում հաճախ էի զբաղվում գուշակությամբ: Կարծում եմ, այդ պատճառով է, որ անեծք է թափվել երեխայիս վրա, դրա համար շատ ջղային է դարձել: Անցյալ տարի լրիվ հեռացա Աստծուց, և երազումս հայտնվեց Քրիստոսն ու հարցրեց. «Ցանկանո՞ւմ ես արդյոք մոռանալ անցյալդ ու հնազանդությամբ ինձ հանձնվել»: Ես համառորեն պատասխանեցի. «Ո՛չ»: Այդ «ոչը» մինչև օրս ինձ տանջում է, թեև քնի մեջ եմ ասել: Գուցե իմ ընկճվածության պատճառը հենց այդ «ոչն» է: Զգում եմ, որ եթե Աստված ինքը ինձ օգնության չշտապի, կկործանվեմ և ինքնասպան կլինեմ: Պայքարելու ուժ և ցանկություն չունեմ: Հոգնել եմ: Արդեն շատ եմ տառապել»:

ՄՏՔԵՐ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պոմերանիայից գրում են ու խնդրում աղոթել մի կնոջ համար, որին տարիներով հետապնդում է այն միտքը, թե իրեն թունավորել են ուզում: Ամեն շաբաթ դիմում է հոգեբուժարանի տնօրենին, որ իրեն պառկեցնեն հիվանդանոց: Հիվանդին բուժելու ուղղությամբ վերջինիս բոլոր ջանքերը իզուր

անցան: Այդ սևեռուն գաղափարի պատճառով, խեղճ կինը չի կարողանում երևալ մարդկանց մեջ: Մեկ անգամ, երբ այդ կնոջ հետ զրուցում էի իր տարօրինակ հիվանդության մասին, պարզվեց, որ ժամանակին, «կարմիր քամին» բուժելու համար դիմել է հմայողի օգնությանը: Կինը հավատացյալ էր, եկեղեցու անդամ, բայց այնուամենայնիվ, այդտեղ ոչ մի վատ բան չէր տեսնում: Շատ դժվար, նույնիսկ անհնար էր բացատրել նրան, որ հատկապես դա է իր հոգեկան խռովքի պատճառը:

Սատանայի խորամանկությունն է դա, երբ ասում են, թե այստեղ ոչ մի վատ բան չկա: Եթե մարդիկ սա հասկանային, կապաշխարեին ու կապավինեին Աստծուն, ու սատանայի իշխանությունը կվերանար: Սատանան հենց այդ բանին խոչընդոտելու համար է ասում. «Պատճառը բոլորովին այլ է»:

Եվ, այսուհանդերձ, պատճառը հենց դա է: Կարծում եմ շատ մարդկանց հասկանալի կլինի, եթե կարդան այս վկայություններն ու տեսնեն հմայողներին դիմելու հետևանքները, երբ մարդը ինքն իրեն կապում է սատանայի շղթաներով, որոնք բոլորովին էլ հեշտ չէ հետո փշրելը:

Սատանայի հետ կապվողները ծանր տառապանքներ են կրում:

Ահա մի վկայություն այդ մասին. «Թշնամին ներխուժել է սիրտս ու ապականել այն: Սրտիս մեջ կասկած է սողոսկել ու ես լիարժեք հավատ չունեմ: Հիսուսը փորձեց ինձ բուժել, սակայն սատանան բոլոր ջանքերը ներդրեց, որ կործանի ինձ: Իմ սենյակում զգում եմ բոլոր չար ոգիներին, որոնք աշ-

խատում են սպանել մարմինս ու կորցնել հոգիս: Գիշերները երբեմն թվում է, թե չար ոգիները ուզում են ինձ այնտեղ կանչել, ուր հավիտենական կործանումն է: Աստված տառապանքներս տեսնելով, թույլ չի տալիս այդ անել: Օ՜, եթե միայն կարողանայի պատմել տանջանքներս: Դժոխքից ազատվելը միակ ցանկությունս է: Հիշողությանս մեջ Աստծո խոսքերն են. «Արդեն կացինը ծառի արմատի մոտ է դրված, բարի բերք չտվող ամեն ծառ կտրում են ու կրակին մատնում»: Ես հիմա նման մի կրակի մեջ եմ, բայց այնտեղից դուրս պրծնելու մեծագույն ցանկություն ունեմ»:

Կախարդությամբ զբաղվողները եթե միայն իմանային ապագայում ի՜նչ սարսափելի տանջանքներ են սպասվում իրենց, և սատանան ի՜նչ ահավոր ձևով է ձեռք առնում իր զոհին: Մի՞թե այժմ էլ ձեզանից շատերը չեն փորձի ամեն գնով խուսափել այդ կործանարար մեղքից:

Սարսափելի մտքեր կան Վյուրտեմբերգից ստացված մի նամակում: «Ես դժվարին փորձության եմ ենթարկվել, որից ազատվել չեմ կարողանում: Կամենում էի Աստծուց օգնության հայցել, բայց անսպասելիորեն շշնջացի. «սիրելի սատանա, ազատիր ինձ, օգնիր ինձ»: Այդ պահից կյանքս շղթայվեց ծանր կապանքներով ու ես մինչև հիմա դրանց ազդեցության տակ եմ: Կյանքս կործանված է: Օ՜, մութ ուժեր, սրբապիղծ մտքեր: Զնայած թախանձանքներիս, դրանք երբեք չեն լքում ինձ: Այդ մտքերը օր ու գիշեր ինձ հանգիստ չեն տալիս: Մի՞թե Աստծո Զոհի՝ Քրիստոսի Արյունը չի մաքրի ու Սուրբ Հոգին չի կենդանացնի ինձ: Աննպատակ

օրեր եմ անցկացնում, հոգիս լի է անպատմելի տրտմությամբ ու ցավով: Ընդ որում, սրբապղծության ոգին, որի միջոցով հաճախ պղծվում է Աստծո անունը, միշտ ինձ հետ է: Սրտումս մութ ու կեղտոտ գաղափարներ են իշխում: Մի՞թե հնարավոր չէ փշրել այդ ծանր կապանքները: Ես անչափ ուզում եմ մաքուր սիրտ ունենալ ու անմնացորդ նվիրվել Աստծուն, հետևել Նրան: Սա է միակ ցանկությունս»:

Բոլոր նրանք, որ կախարդությունն ու գուշակությունը անմեղ բան են համարում, թող լավ լսեն այս խոսքերը: Թող լսեն նաև նրանք, ովքեր մարմնական ցավից ազատվելու համար սատանային են դիմում: Սատանան սարսափելի տիրակալ է: Նա սկզբում դյուրահավատներին իր ցանցն է գցում, համոզում, որ այդտեղ ինչ-որ աստվածային բան է թաքնված, Զէ՞ որ այդ ժամանակ Աստծո անունն են տալիս ու աղոթքներ մրմնջում: Հետո հեգնանքով ասում է. «Քո մեղքը աններելի է: Ավելի լավ է վերցրու պարանն ու կախվիր»: Եթե ժամանակին դիմել եք սատանային, ապաշխարեցե՛ք, գնացե՛ք խոստովանության քահանաների մոտ, որ Աստված փշրի ձեր մեղքերի կապանքները: Փա՛ռք Տիրոջը, Նա ի զորու է կոտրելու բոլոր շղթաները: Լսո՞ւմ ես՝ բոլոր կապանքները:

Սակայն, մինչև սատանայի շղթաներից ազատվելու միջոցների մասին խոսելը, ծանոթանանք գուշակության, խաղաթղթերով բախտ բացելու, ոգեկանչության և այլ սատանայական հնարքների հետ, ու տեսնենք, թե դրանց շնորհիվ ո՞ւր ենք գնում ու ի՞նչ ենք ժառանգելու:

ԽԱՂԱԹՂԹԵՐՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այս հարցի վերաբերյալ մի քանի օրինակներ բերենք նամակներից. «Հայրս կախարդությամբ էր զբաղվում: Նա ուսումնասիրել էր «Մովսեսի 6-րդ և 7-րդ գրքերը»: Հմայական տարբեր բանաձևեր գիտեր: Մայրս նույնպես սատանայի շղթաներում էր ու տանջանքներով մահացավ: Դրանից հետո ես վհատվեցի: Նույնիսկ արևի լույսով ու Աստծո ստեղծած բնության գեղեցկությունով չէի հրճվում: Միակ ցանկությունս մեռնելն էր: Սակայն, Աստծո գթասրտությունը պահպանում էր ինձ, հակառակ դեպքում վաղուց մեռած կլինի: Այն օրերին հաճախ էի դիմում խաղաթղթերով գուշակություն անողներին, մոտս ինչ-որ «երկնային գրեր» էի պահում: Հետզհետե այդ մեղքի խորքերն էի մտնում:

Մի քանի տարի առաջ որոշեցի Աստծուն ծառայել: Մեղքի ճահճուտից ձգտեցի լույս աշխարհ ելնել: Եվ հիմա, Քրիստոսի ժառանգ լինելով հանդերձ, դեռևս չունեմ լիարժեք հանգիստ և ուրախություն: Մահվան մասին մտածելիս ինչ-որ անհանգստություն է տանջում, համոզված չեմ, որ կփրկվեմ: Հաճախ ինձ հալածված ու հյուծված եմ զգում: Եկեղեցի գնալը, Աստվածաշունչ կարդալը, աղոթք անելը պարտադիր են դարձել, բայց ոչ ներքին անհաղթահարելի պահանջ: Որքան կցանկանայի լրիվ փրկություն գտնել, բայց ուժ չունեմ»:

Պարզ է՝ ինչ-որ ուժ կա, որ կապում ու նորից ուզում է մարդուն ետ քաշել, բայց փառք Աստծո, Հիսուսը քանդում է բոլոր կապանքները:

Բեռլինի մերձակա շրջաններից մեկում բնակվող մի աղջիկ գրում է. «Պետք է խոստովանեմ, որ Աստծո կողմից ինձ ձգողը ոչ թե սերն է, այլ՝ վախը: Մարմնավոր սարսուռ է անցնում, երբ մտածում եմ Նրա դատաստանի մասին: Երբ մի անգամ կարդացի. «Սարսափելի է կենդանի Աստծո ձեռքը ընկնելը» (Եբր. Ժ, 35), հասկացա, որ այդ ճշմարտությունը իմ դեմ է ուղղված: Կարծում եմ, Աստծուն չհավատացողը շատ ավելի լավ վիճակում է, քան ես: Մեկ անգամ նույնիսկ գուշակուհուն դիմեցի, իմանալու համար, թե արդյո՞ք չեմ հիվանդանա ու ե՞րբ կարող եմ անմնացորդ նվիրվել Փրկչին, քանի որ հոգիս հանգստություն է ուզում»:

Մի՞թե սատանայի աշխատանքը չէ դա: Հոգիս ձգտում Աստծուն, իսկ սատանան չշնջում է. «Գնա գուշակի մոտ ու իմացիր, թե ե՞րբ է գալու ժամանակդ»: Այ այսպես, սատանան հափշտակում է Աստծուն տրվելու հնարավորությունը, և մարդու կյանքը հայտնվում է դևի ձեռքում: Որքա՜ն խորամանկ է սատանան:

Մեկ այլ նամակում կարդում ենք:

«Ամուսնուս ծնողները առաջ հաճախ էին շփվում մի հավատացյալ ընտանիքի հետ: Անսպասելիորեն այդ հանդիպումներին վերջ տվեցին: Որոշ ժամանակ անց, ինչ-որ պառավ սկսեցին սովորեցրել էր խաղաթղթերով գուշակություն անել և նա հաճախ էր կանխագուշակում իր ու ծանոթների ապագան: Երբ ուսանող ամուսինս, Աստծո բարեգթության շնորհիվ, քրիստոնյա ուսանողների ընկերության միջոցով Տիրոջ կողմը շրջվեց՝ սկեսուրս կարծես խենթացած լիներ այդ քայլից: Նա մեղադ-

րում էր որդուն, որ դրա շնորհիվ կփչացնի իր ապագան: Երբ ամուսինս չենթարկվեց նրա խիստ հրամանին ու դուրս չեկավ հոգևոր ընկերակցությունից, սկեսուրս նրան սկսեց վերաբերվել որպես չար ու անհնազանդ որդու: Բայց հետո տեղի տալով, զավակի խնդրանքով սկսեսուրս երբեմն Աստվածաշունչ էր կարդում և խոստացել էր այլևս գուշակությամբ չզբաղվել, բայց որոշ ժամանակ անց, ամեն ինչ մոռացած շարունակեց իր չարագործությունը: Նա հիմա լրիվ շրջվել է ուղիղ հավատից ու հանդիպում է ոգեհեսների հետ: Մեկ անգամ նույնիսկ ինքնասպանության փորձ է արել: Երբեմն նա մեզ հուզումնալից նամակներ է գրում, երբեմն էլ առանց պատճառի, չարությամբ լի գրություններ ենք ստանում: Բնորոշ է, որ վատ նամակներ ստանում ենք հատկապես այն ժամանակ, երբ Աստված առավել բարեգութ է մեր նկատմամբ ու առատապես օրհնում մեզ: Այդ մասին սկեսուրս թեև չգիտի, բայց կարծես զգում է, նա մեկ անգամ նույնիսկ անիծել է մեզ ու մեր երեխաներին: Հետո խոսքերը ետ է վերցրել: Առանց մեր գիտության, ոգեհեսներին խնդրել է մեր ապագան գուշակել: Չնայած ամուսինս արգելել էր, բայց նա այժմ այդ զբաղմունքին վերջ է տվել, թե ոչ, չգիտենք»:

Տեսնո՞ւմ եք, սատանան ուր է հասցնում, մայրը կարող է անիծել իր երեխային: Մի՞թե սարսափելի չէ: Փոխանակ ուրախանա, որ տղան հավատացյալ աղջկա հետ է ամուսնացել ու ապաշխարել, խելագարվում է այդ քայլից:

Դժբախտաբար, օրինաչափություն է, որ

նրանք, ովքեր դիմում են խաղաթղթերով գուշակողներին, հոգեկան անդորր այլևս չեն գտնում: Սաքսոնիայից մի կին գրում է. «Ինչ-որ իմաստով վերածնվեցի, բայց իսկական, լիարժեք հանգստություն չունեմ ու համոզված չեմ, որ կփրկվեմ: Նախկինում դիմել եմ հմայողի և հաճախ եմ խաղաթղթերով գուշակել ապագաս: Կարդացել եմ «Ինչպես դառնալ ազատ ու երջանիկ» գիրքը, բայց չի օգնում: Օ՜, որքան կցանկանայի Աստծո երջանիկ զավակը լինել: Արցունքներս ու աղոթքներս ոչ մի օգուտ չտվին: Որքան կցանկանայի ազատ լինել ու այդ ուրախությունը փոխանցել ուրիշներին»:

Ինչ սարսափելի է, երբ հոգին ուզում է հետևել Հիսուսին, մեղքերի թողություն է աղերսում, բայց հանգիստ չունի: Կարծես սատանան ասում է. «Դու ցանկանում ես ապաշխարել ու Աստծո զավա՞կ դառնալ՝ թույլ չե՛մ տա: Ես իմ իրավունքներն ունեմ, դու ինձ ես պատկանում»: Պետք է շատ աղոթել, որ կապանքները քանդվեն, ու ազատվի դեպի հոգեկան հանգստություն տանող ճանապարհը: Սատանան իրեն ենթարկվածների ոչ միայն հոգիները, այլ նաև մարմիններն է պահում է ամուր շղթաների մեջ: Հենց այստեղ բացահայտվում է նրա գաղտնիքը, սկզբում սարեր է խոստանում, իսկ հետո՝ խաբում է անգթորեն:

Մի խեղճ այրի գրում է. «27 տարի սարսափելի հիվանդությամբ եմ տառապում: Որքան հասկանում եմ, կախարդության հետևանքն է: 26 տարեկանում հիվանդացել եմ, հիմա 53 տարեկան եմ: Ամբողջ 27 տարի սատանան տանջում է մամինս ու հոգիս: Դպրոցում շատ էի սիրում կրոնի դասերն

ու մանկուց հակված էի առ Աստված: Շատ բանաստեղծություններ ու աստվածաշնչյան պատմություններ եմ հիշում: Հետո, երբ մի կախարդի դիմեցի ինչ - որ հարցով, ընկա նրա ծուղակը: Ինձ երկար ժամանակ տանջում էր սատանան: Որտեղ էլ լինի, վախեցնում ու չարչարում էր: Բոլոր այդ տարիների ընթացքում ինձ ճնշում է վախն ու տրտմությունը: Երբեմն թվում է, թե խելագարվում եմ: Ընդ որում մարմինս սարսափելի հիվանդ է: Մահու չափ ինձ տանջում է սրբապիրծ մտքերը: Պայքարել եմ, պաշպանվել աստվածաշնչյան ոտանավորներով, որոնք անգիր գիտեմ: Ուրիշներին եմ թախանձել աղոթել ինձ համար: Բայց հիմա ոչինչ չի օգնում: Հրաշալի գիտեմ, որ ինձ կապող շղթաներից միայն Աստված կարող է փրկել: Նա ունի այդ իշխանությունը, միայն թե ե՞րբ կլինի դա»:

Ինչ ահավոր է, երբ ողջ կյանքը սատանայի շղթաներով կապված ես անցկացնում: Մեր կյանքը այլ հունով է գնում, երբ վստահում ենք Աստծուն ու Նա մեր բարի հովիվն է դառնում: Այդ դեպքում ապրում ենք այն, ինչ բացականչում է 23-րդ սաղմոսը. «Տերն է իմ հովիվը և ես կարոտության չեմ ունենա: Նա խոտավետ տեղերում է ինձ հանգստացնում ու հանդարտ ջրերի մոտ է տանում: Հոգիս է նորոգում: Առաջնորդում է արդարության շավիղներով Իր անվան համար»: Սաղմոսում ասված, որ Նա հանգստացնում ու նորոգում է իմ հոգին, իսկ այդ կնոջ նամակում կարդում ենք. «Նա տանջում ու վախեցնում է հոգիս»: Տեսնո՞ւմ եք, թե ինչ մեծ տարբերություն է: Թող լսեն բոլոր նրանք, ովքեր զբաղվում են գուշակությամբ, կամ

դիմում են նմաններին:

Մերձբալթիկայից մի եղբայր գրում է. «Այստեղ շատերը թաղված են կախարդության մեղքի մեջ ու չեն գիտակցում, որ դա գարշելի է Աստծո առաջ: Վերջերս մի կնոջ հետ էի զրուցում, որն իրեն ճշմարիտ հավատացյալ էր համարում: Նրան կարելի էի հանդիպել ամենուրեք, որտեղ Աստծո խոսքն էր քարոզվում, բայց այնուամենայնիվ, Աստծո առաջ նա բոլորովին էլ առանձնահատուկ դիրք չուներ: Երբ նրա հետ զրուցեցինք, պարզվեց, որ նախկինում դիմել է հմայողներին»:

Կախարդության մեղքը ընկնում է ոչ միայն դրանով զբաղվողների, այլ նաև նրանց հարազատների վրա: «Զոքանչս հմայում էր ու տարբեր «երկնային» նամակներ գրում: Նա շատ տխուր ու սարսափելի օրեր անցկացրեց: Անեծքից տառապում էին ոչ միայն նա, այլև նրա որդին, դուստրը՝ կինս ու այլ մերձավորներ: Սոսկալի է, որ Աստծո մասին պարզ պատկերացում չունեն, մի տեղից մյուս են նետվում, սկսած ավետարանականների երեկոներից, վերջացրած շաբաթապահ գալստականներով»:

Ինչ սարսափելի անեծք: Նրանք, թեև ամողջ հոգով կամենում են, բայց չեն կարողանում գտնել ճշմարտությունը: Եթե մարդիկ կախարդությունը մեղք չեն համարում, այն մթնեցնում ու կապանքում է հոգին: «Մորաքույրս տարբեր մութ գործերի ստրկուհի է: Առանց օղու և ծխախոտի չի կարող դիմանալ: Որդին ու հարսը նույնպես սատանայի իշխանության տակ են գտնվում: Ինչ ասես, որ չի անում կախարդությունը: Եղբայրս «մագնե-

տոպատ» է եղել: Չգիտեմ, այդ բառը հստակ ի՞նչ է նշանակում, բայց երբ կարդացի «աղոթքները չեն օգնում» խոսքերը, արդեն հասկացա, որ նա Աստծո մասին ոչինչ չի ուզում իմանալ: Այն արտահայտվում է նաև նրա գրած բոլոր նամակներում»:

Բաղենից ստացված նամակում կարդում ենք. «Հարևանուհիս պառավ կին է: Վաղուց կախարդությամբ է զբաղվում: Ասում են, կարողանում է գուշակել ապագան: Մայրս, առանց խորհրդակցելու, տատիկիս հետ, որը ճշմարիտ հավատացյալ էր և երբեք այդ թույլ չէր տա նման բան, խնդրեց նրան գուշակել ապագան: Այդ կինը, չնայած տատիկս դեմ էր, հաճախ էր մեր տուն գալիս: Չէի կարողանում աղոթել, որովհետև տունը լցվում էր չար ոգիներով: Ես երեխաներից կրտսերն էի, 6 տարեկանում հիվանդացա ասթմայով: Երբ հասունացա, մայրս կախարդի մոտ գնաց, որ իմանա, կամուսնանամ թե՝ ոչ: 15 տարեկան էի, երբ տատս մեռավ ու նրա հետ աղոթքների բարի հոգին անհետացավ և սատանան լրիվ ազատություն ստացավ մեր տանը»: Ի վերջո ինձ համոզեցին դիմել գուշակին: Մտածեցի, որ այլևս նշանակություն չունի՝ մի մեղք ավել, կամ պակաս ու գնացի: Գուշակը պատմեց անցյալս, ապագայից որոշ հատվածներ, ապա անսպասելիորեն ընդհատեց խոսքն ու ասաց. «Այնպիսի վիճակում եմ, կարծես ինչ-որ մեկը աչքերիս առաջ թուղթ է բռնում ու այլս ոչինչ չեմ տեսնում: Ուրիշ ոչինչ չեմ կարող պատմել»: Հետո համոզվեցի, որ մինչև ապաշխարանքիս օրվա ապագան ճիշտ էր գուշակել: Հասկացա, որ մինչև այդ սատանայի շղթաներում եմ գտնվել: Գուշակին այցելելուց

մի քան օր անց իմացա, որ նա ընկել է աստիճանից ու վիզը կոտրել: Ինձ սոսկալի վախ պատեց: Հաճախ այնքան էի վհատվում, որ վախենում էի, թե կխելագարվեմ: Թվում էր, հողը փախչում է ոտքերիս տակից: Մեր ընտանիքը ցրվեց. մայրս ու եղբարներիցս մեկը Ամերիկա մեկնեցին: Ես նույնպես մեկնեցի, բայց շուտով վերադարձա: Հետս ինչ-որ սարսափելի բան է կատարվում: Հենց սկսում եմ աղոթել, անմիջապես վատանում եմ, ջերմությունս բարձրանում ու կարծես օդը չի բավարարում: Հաճախ մահամերձ եմ դառնում: Շատ եմ վախենում այդ ահավոր հիվանդությունից, որ արագ ծանրանում է ու վայրկենապես հեռանում: Քրոջս հետ էլ անհասկանալի բան է կատարվում: Այն վիճակի է հասել, որ քայլում է ու ոչինչ չի տեսնում ու զգում: Ինչ որ բան կպատահի նրա հետ...»:

Տեսնում եք, թե այդ մեղքը ուր է հասցնում շատ ընտանիքների ու նրանց սերունդների: Վախով ու հիասթափությամբ լի մի նամակ ևս ներկայացնենք ու այս թեման ավարտենք: Կարծում եմ բոլորի համար արդեն պարզ է, որ գուշակության, կախարդության ու այլ միջոցներով մարդը սատանայի հետ կապի մեջ է մտնում:

«Ներվային համակարգիս ցնցումն այնքան ծանր է, որ ինձ թվում է, թե կխելագարվեմ: Մանուկ հասակում հաճախ էի հիվանդանում, մայրս տանում էր հմայողների մոտ: Նա միայն արտաքնապես է ավելի «ջերմ» դարձել: Տանջանքներս տեսնելով իրեն հանցավոր է զգում: Լալիս է ու աղոթում, սակայն հենց ապաքինվում եմ, նորից տարօրինակ անտարբերություն է հայտ գալիս իմ հանդեպ...»:

Ձեմ ուզում շարունակել նամակի ընթերցումը: Ինքնասպանության փորձեր, հուսալքություն, հիպնոս ու ներվային համակարգի ավերում. սա է նամակի բովանդակությունը: Կարելի է արագորեն կարդալ, բայց խորհում ես, որ մարդը ծանր ապրումների մեջ է, վատ ես զգում: Մենք կարող ենք ուրախանալ մեր Փրկչի համար: Կարող ենք ուրախանալ, որ ապրում ենք Նրա համար ու ծառայում ենք միայն Տիրոջը, կարող ենք համոզվել, որ լսում է մեր աղոթքները, որ Նա մեր բարի հովիվն է: Բայց չէ՞ որ կան մարդիկ, որոնց սատանան ամուր շղթայել է մռայլ մտքերով ու ինքնասպանության գաղափարներով: Դրանից սիրտս շատ է ցավում: Պետք է ավելի ու ավելի շատ աղոթել նրանց համար, ովքեր հաճախ իրենց կամքին հակառակ ընկել են այդ շղթաների մեջ: Օրինակ երբ ծնողը ինքնակամ երեխային տարել է հմայողի մոտ, դրանով իսկ սատանային հանձնել: Աստծո զավակներ, որ Տիրոջ ուրախությունն ու ուժն եք հանդիսանում, հիշե՛ք այդ խեղճ զոհերին, որոնք շղթայված են չարի ծանր կապանքներով, բայց շատ են ցանկանում ազատվել դրանցից: Ձեր աղոթքներում մի մոռացեք նրանց: Ձեզ վրա վերցրեք այդ սուրբ պարտականությունը, աղոթեք, որպեսզի նրանց համար նույնպես Աստված Փրկիչ ու Մխիթարիչ դառնա:

ՈԳԵԿԱՆՉՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԸ

Այս գլխում կներկայացնեմ նրանց, ովքեր զբաղվում են ոգեկանչությամբ: Դա ըստ Աստծո խոսքի կոչվում է նաև մեռելահարցուկ:

Մի կին գրում է. «20 տարի զբաղվել եմ գուշակությամբ ու մեռելահարցուկով: Մարդիկ, մեկը մյուսի ետևից, ինձ էին դիմում: Կանխագուշակությունները իրականացան: Աղքատ էի, մինչև այժմ էլ դրամի կարիք ունեմ, կարծում էի, թե այդ ձևով վաստակելու մեջ ոչ մի վատ բան չկա: Սակայն, մի անգամ հավատացյալ մի քույր այցելեց ինձ ու խնդրեց, որ թողնեմ այդ չար ու մեղավոր զբաղմունքը: Վերցրեց նաև այն գիրքը, որի միջոցով ոգեհարցում ու գուշակություն էի անում: Դրանից հետո շաբաթներով չէի կարողանում հանգստանալ: Լաց ու կոծով Աստծուն սուրբ երդում տվի, որ այլևս երբեք պիտի չկրկնեմ: Շուտով Եկեղեցու անդամ դարձա: Ամուսինս դեմ էր, բայց դա առանձնապես ինձ չէր հետաքրքրում: Մահից առաջ նրան մի անգամ հարցրեցի. «Հետս եկեղեցի կգա՞ս»: Նա սարսափելի սրբապիղծ խոսքերով պատասխանեց: Ինչ-որ տեղ գնաց ու տուն վերադարձավ սոսկալի վիճակում: Կորցրել էր խոսելու ընդունակությունը, բայց մինչև վերջին րոպեն գիտակցությունը տեղն էր: Ծնկի իջա ու աղոթեցի Աստծուն, որ ների նրա մեղքերը: Աղոթքս լսելով ամուսինս լացեց ու այդ վիճակում գնաց հավերժություն: Նրա մահից հետո, բազմոցիս տակից հաճախ էի ոռնոցներ լսում, բայց բոլորովին չէի վախենում, որովհետև սովորել էի վստահել Աստծուն: Ավելացնեմ նաև, որ գուշակությամբ ու մեռելահարցուկով զբաղվելու տարիներին, իմ սենյակում, փակ դռների հետևում, հաճախ ինչ-որ մութ կերպարանքներ էի տեսնում ու անհասկանալի ձայներ լսում»:

Այդ կինը բողոքում է, որ մինչև հիմա չի ազատվել սատանայի շղթաներից: Մի քույր, որն այցելում էր, նրան, հարցնում էր, թե նա կապված չէ արդյոք պիղծ ուժերի հետ:

Իհարկե, նա սատանայի ազդեցության տակ է գտնվում: Ահա Սուրբ Գրքի վկայությունը. «Դրանով զբաղվող ամեն ոք գարշելի է Աստծո առաջ» *(Բ. Օրենք ԺԸ. 12):*

ԳԱՎԱԹ ՊՏՏԵԼԸ

Բեռլինից ստացված նամակում կարդում ենք գավաթ պտտելու և դրա հետևանքների մասին. «Ես ու կինս ծանոթներից լսել ենք գավաթ պտտելու մասին: Մենք գիտենք, որ ոգեկանչությունը սատանայից է գալիս և դրանով չզբաղվեցինք: Բայց այս մեզ համար ինչ-որ նոր բան էր: Թղթի վրա այբուբենն էր գրված, ու գավաթը շարժվում էր մի տառից մյուսը: Այն հարցին թե ով է մեզ հետ խոսում, տրվում էր մեռածների հոգիների անուններ: Ու այդպես ովքեր սենյակում էին, բոլորը ստացան իրենց հարցերի պատասխանները:

Երկուսս էլ ցանկացանք պարզել, թե ինչ ուժ է այդտեղ թաքնված: Մենք արդեն գտել էինք Աստծուն ու չար ոգիներից պաշպանված էինք զգում: Այո փնտրում էինք Նրան՝ մեր Տիրոջը, բայց ոչ մաքուր սրտով, հակառակ դեպքում մեղքի մեջ չէինք ընկնի: Մենք չենք գիտակցել, որ մեղավոր ենք ու չենք ապաշխարել, թեև ամբողջ սրտով փնտրել ենք Աստծուն:

Հավատում էինք, որ Աստված գիտի մեր

փնտրտուքների մասին, ու այստեղ, այս բնակարանում կհայտնվի մեզ ու կասի, թե ինչ ուժի միջոցով է, որ շարժվում է գավաթը: Բայց մեզ վիճակված էր այդ մասին այլ միջոցով իմանալ, քան թե կարծում էինք: Մի անգամ ես ու կինս փորձեցինք մենակ հարցում անել: Կատաղի պայքար սկսվեց: Մենք մերժում էինք բոլոր եկած ոգիներին ու ցանկանում էինք պարզել, թե ով է մեզ հետ խոսում: Այդ ժամանակ բաժակը սկսեց կատաղի կերպով պտտվել, շրջաններ անել, այնպես, որ ցրում ու նորից հավաքում էր տառերը: Մենք հրաժարվեցինք խոսել խավար ուժերի հետ ու կանչեցինք ճշմարտության հոգուն: Իսկ եթե դա սատանայից է սկիզբ առնում, ավելի լավ է, թող չպատասխանի: Ի վերջո կարդացինք. «Աստծո պատգամաբերը»:

Ոգին նույնիսկ չտրված հարցերին սկսեց պատասխանել: Մեր մտքերում քանի դեռ կասկածում էինք, թե իսկապե՞ս ոգին Տիրոջ պատգամաբերն է. մեզ ասվեց. «Համարձակորեն հավատացեք, որ Աստված է ինձ ուղարկել: Նա ուզում է բացվել ձեր առաջ, որովհետև իր ճշմարիտ փնտրողներն եք: Աստված ում կամենում, հայտնվում է»:

Հետո հասկացրեց այն մասին, որ մենք Աստծո գործի վկաները պիտի լինեն, ու պետք է վկայեն իր գալուստի մասին, քանի դեռ չի եկել մեծ դատաստանի օրը: Մենք հավատացել էինք, որ Ինքը՝ Հիսուսն է խոսում: Շատ օրեր ու շաբաթներ այս խոսքերի ազդեցության տակ էինք գտնվում: Երեք ամյա աղջնակի ոգին իրենց որպես Աստծու պատգամեր էր ներկայացել և խոստացել իր հետ վերցնել նրանց այն բանից հետո, երբ ավարտեն վկա-

յությունները: Ամուսինները այնպես էին ընկել այդ ոգու ազդեցության տակ, որ մոռանում էին ուտել, կամ կերակրել իրենց երեխաներին: Վիճակը հետզհետե ավելի էր վատանում: Ոգին կնոջը ստիպում էր սարսափելի հիմարություններ դուրս տալ ու նրանց թվում էր, թե իրենց սրտից են բխում: Մեկ անգամ էլ այդ տանջանքների մեջ ասաց. «Եթե սրտումս ինչ-որ վատ բան եք գտել, սատանան է դրել այն, ես այսպիսին չեմ»: Այս խոսքերից հետո բաժակը հանգստացավ...

Ի վերջո մենք հասկացան, որ սատանայի հետ ենք կապված ու խաբված ենք եղել դեռ սկզբից: Հրաժարվեցինք այդ ամենից: Հետաքրքիր է, որ այդ պահից հետո մեր բնակարանը լցվեց ինչ-որ տհաճ հոտերով ու ստիպված էինք փոխել սպիտակեղենը: Հաջորդ օրը սպասքը նույնպես փոխեցինք, որովհետև հնարավոր չէր դրանցից օգտվել: Մի քանի օր անց կինս դիվահարվեց: Սարսափելի վախեցած նա բացականչեց. «Հիսուս, Դավթի Որդի, ողորմի՛ր ինձ»: Այդ ժամանակ դևերն խուսափեցին անհետացան:

Հիմա ամուսիններն ասում են, որ ազատվել են սատանայից:

Ահա թե որքան «անմեղ» զբաղմունք է գավաթ պտտելը:

Ոգեհարցությամբ զբաղվողների հետ սարսափելի բաներ են կատարվում: Մի երիտասարդ բուժքույր գրում է. «Մի անգամ երիտասարդի էի խնամում, որը երկար ժամանակ ոգեհարցությամբ էր զբաղվել: Երեկոյան նրա սնարի մոտ նստած Աստծո խոսքն էի կարդում: Ամբողջ գիշեր այնտեղ

մնացի, չգնացի քնելու: Անսպասելիորեն հիվանդի անկողնուց կրակի բոցեր դուրս ելան: Հետո վառվածի հոտ առա ու տեսա, որ ինչ-որ կերպարանք հանգցրեց կրակը: Այդ պահին ես Աստծուն էի աղոթում: Հաջորդ օրը, Տիրոջից օգնություն խնդրելուց բացի, ուրիշ ոչինչ չէի կարող անել»:

Իսկ մեկ ուրիշը ինձ պատմեց մարդկանց մասին, որոնք նախկինում զբաղվել են ոգեհարցությամբ և մագնետիզմով, իսկ հետո վերջ են տվել:

ՄԱԳՆԵՏԻԶՄ

Ոգեհարցությամբ զբաղվելուց բացի այդ մարդը տրվել է նաև մագնետիզմին: Դրա դիմաց ոգիները մեծ եկամուտներ էին խոստանում: Եվ ոգեհմաների շրջապատում նրա կինը որպես միջնորդ դարձավ:

Երբ ամուսնու մոտ հիվանդ էր գալիս և ցանկանում էր կողմնորոշվել, թե ինչ պետք է անել, նա հարևան սենյակ էր մտնում ու կնոջ միջոցով ոգուց իմանում էին հարցի պատասխանը: Վերջինս «ախտորոշում էր» ու ասում՝ նա կարող է բուժվել, թե ոչ:

Այդ մասին նա ասում էր, որ հիպնոսացնողը իր մագնիսական դաշտի միջոցով կարող է ընդունել օրը 3-4 հիվանդ: Ընդսմին վերջին եկողը ավելի քիչ ազդեցություն է կրում, քան առաջինը: Նրա ուժը գնալով պակասում էր:

Ավելի շատ հիվանդներ սպասարկելու համար, ոգիներից պետք էր ուժ ստանալ: Հենց դրա համար էլ օրական այնքան հիվանդ էր ընդունում, որքան

կամենում էր: Նա երբեք մագնիսական ուժի պակաս չի զգացել, որովհետև «ղեկավարը» տալիս էր այնքան, որքան կամենում էր:

Երբ կնոջս հետ այցելեցինք այդ ընտանիքին ու նրանց հետ միասին աղոթեցինք Աստծուն, այդ կինը նույնպես ջեռմեռանդորեն մասնակցում էր: Այդ օրից սկսած նրա ամուսինը այլևս հաճախորդներ չուներ: Դրանից հետո այդ կնոջը հեռացրեցին ոգհարցուկների խմբից: Դա տևեց 14 օր: Կինը մեզ հրավիրեց ոգեհմաների իրենց հավաքին, որ բացատրենք կատարվող երևույթի էությունը: Փառք Աստծո, որ ընկերակցության բոլոր անդամները հրաժարվեցին իրենց այդ զբաղմունքից: Խումբը ցրվեց, ու նրանցից շատերը սկսեցին փրկություն փնտրել մեր հոգևոր հավաքներում»:

Այս պատմությունից պարզ է դառնում, թե որքան վտանգավոր է հիպնոսով ու մագնետիզմով զբաղվելը:

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՓՈՐՁԵՐ

Երբեմն պարզապես այդ հարցերով դասախոսություններ լսելիս կարելի է ընկնել խավար ուժերի ազդեցության տակ: Այդ մասին կարդում ենք հետևյալ նամակում. «Անցյալ տարի քաղաքում մի շարք դասախոսություններ կարդացին հիպնոսի ու ոգեկանչության մասին: Առաջին դասը, որին մասնակցում էի նաև ես, հիպնոսին էր նվիրված: Դահլիճ մտնելիս թողեցի այցետոմսս: «Փորձը» սկսելով, հմայողը խնդրեց, որ ներկաները նայեն իրեն և ամբողջ կամքը տան իրեն, ձեռքը ձեռքի վրա

դնեն ու հետևեն, թե ինչ պետք է ասի: Որոշ ժամանակ անց ներկաները չէին կարողանում ձեռքերը իրարից անջատել: Հետո նա 7 հոգու հրավիրեց ու շարունակեց «փորձը»: Հրամայեց նրանց քնել և որից հետո կատարում էր անթույլատրելի արարքներ: Ես զարմանքից այրվում էի կատարվածից ու որոշեցի տուն վերադառնալուց հետո, ամենի մասին պատմել երեք քույրերիս, որոնք ճշմարիտ հավատացյալներ էին: Վերջիններս պնդեցին, թե դա սատանայի գործն է: Սակայն, ես չհավատացի: Պառկեցի, բայց երկար ժամանակ չէի կարողանում քնել: Հանկարծ սենյակիս դռները ցնցվեցին, կարծես երկրաշարժ լիներ: Ես բղավեցի հարևան սենյակում պառկած քրոջս. «Սա ի՞նչ բան է»: Նա պատասխանեց. «Զգիտե՛մ»: Պատերն ավելի ու ավելի ուժեղ էին ցնցվում: Վեր թռա մահճակալից ու վառեցի լույսը: Բայց դրանից վիճակս չփոխվեց: Այնքան սոսկալի էր, որ բղավեցի քրոջս. «Աղոթի՛ր Աստծուն»: Նա կատարեց խնդրանքս, բայց ամեն ինչ մնում էր առաջվա պես: Հետո բացեց Աստվածաշունչն ու կարդաց այն հատվածը, որ Տերն էր ցույց տվել: Կարդացածից ոչինչ չհասկացա, որովհետև այդ ամբողջ ընթացքում ինչ-որ մեկը դրսում անընդհատ մոլեգնում էր: Հետո քույրս մեկ անգամ էլ կարդաց այն հատվածը ուր, գրված էր. «Զգույշ եղե՛ք, եղբայրներ, չլինի մեկը ձեզ դերի դարձնի փիլիսոփայությունով ու փուչ խաբեությունով» (Կորնթ. Բ, 8): Սա լսելով անմիջապես հասկացա, որ սատանան ինձ խաբել է: Մարմնովս սառսուռ անցավ: Ես պայքարում էի սատանայի դեմ: Այդ պահին քրոջս ձայնը լսեցի. «Հանուն Հի-

սուսի Քրիստոսի, սատանա, հրամայում եմ՝ հեռացի՛ր նրանից»: Եվ խավարի ուժն անհետացավ: Հետո քրոջս ու մի հավատացյալ մարդու հետ աղոթեցինք Աստծուն, որ օգնի ինձ ազատվել սատանայի շղթաներից: Հաջորդ երեկո, երբ միասին նստած էինք իմ սենյակում, սատանան ամպրոպի տեսքով ներս մտավ, ու բռնց ինձ ու սկսեց ցնցել: Հավատացյալ ընկերս, հանուն Հիսուսի թափված Արյան, նորից աղոթքով արգելեց սատանային: Աստված լսեց մեր աղոթքներն ու հիմա փա՜ռք Աստծո, ազատ եմ սատանայի իշխանությունից»:

Հավատացյալներից շատերը կարծում են, թե ամեն ինչին պետք է մասնակցեն, ամեն ինչ փորձեն, ամեն ինչ իմանան: Այս պատմությունից երևում է, թե նման մարդկանց ինչ մեծ վտանգ է սպառնում: «Մատդ տուր սատանային և նա ամբողջ ձեռքդ կվերցնի» - ասում է ժողովրդական ասացվածքը: Դա փաստ է: Սակայն, սատանան ձեռքով չի բավարվում: Նա մարմնի հետ ուզում է նաև մեր հոգին: Ուստի մենք պետք է զգուշանանք տարբեր դասախոսություններից ու փորձերից: Իմացի՛ր, դժոխքի կրակը շուտ է բռնկվում: Եվ շատ արագ կարող ես ընկնել սատանայի շղթաների մեջ:

ՀԻՊՆՈՍ

Սաքսոնիայից ստացված նամակը ցույց է տալիս, որ հիպնոսը բոլորովին էլ անմեղ գործ չէ: «Պատերազմի ժամանակ, սովի պատճառով հիվանդացա ներվային հիվանդությամբ: Ուժերս սպառվեցին և նույնիսկ չէի կարողանում ծառայությունս շարունակել: Շատ բժիշկների դիմեցի, հետևեցի նրանց խորհուրդներին՝ բայց ապարդյուն: Հետո խորհուրդ տվեցին դիմել մի հայտնի հոգեբույժի: Ես չհետաքրքրվեցի նրա բուժման մեթոդներով: Բժիշկը հասակն առած, հաճելի արտաքինով, խելացի մարդ թվաց, որը լավ էր հասկանում տառապանքներս:

Առաջին օրը մոտեցավ մահճակալիս ու խնդրեց, որ աչքերի մեջ նայեմ: Հետո բարձրացրեց աջ ձեռքս ու սկսեց ներշնչել. «Նայում եք ինձ ու հանդստություն է իջնում ձեր վրա: Դուք շատ լուռ ու հոգնած եք, երբ ձեռքս ձեր ճակատի դնեմ, կքնեք: Ամեն ինչ կդադարի ու դուք ձեզ շատ առողջ ու ուժեղ կզգաք: Ցանկանում եք ձեռքը ետ տանել, բայց դա չի հաջողվի: Դուք խորն եք քնած...»: Ես ծիծաղել էի ուզում, որովհետև քնած չէի ու բոլորովին էլ լավ չէի զգում, ձեռքս ցանկության դեպքում կարող էի ետ տանել:

Այն օրից, ինչ բժիշկը սկսեց հիպնոսացնել, չար ոգին ու սարսափելի երազները ամեն առավոտ ժամը չորսին սկսեցին ինձ տանջել ու հանգիստ չէին տալիս: Իսկ մի անգամ առավոտյան, երբ արթնացա, այնպիսի վախ համակեց ինձ, որ կարծես ոգիները միավորվել էին իմ դեմ, թեև անկողնում մենակ էի:

Բժիշկը վիճակս բացատրեց նրանով, որ հիպնոսի պատճառով հիվանդությունս ճգնաժամային պահն է սկսվել և որ շուտով կանցնի: Ըստ նրա, մյուս հիվանդները դրանով չեն տառապում: Բացատրությունը ինձ չբավարարեց: Ամեն նոր օր

սարսափով էի դիմավորում ու աղոթում էի Աստծուն, որ ինձ լուսավորի, թե այս ամենն ի՞նչ է նշանակում ու հետո ի՞նչ է լինելու: Ես խոստացա լրիվ Նրա տրամադրության տակ լինել, միայն թե պաշտպանի ինձ ամեն տեսակ չարիքից: Ամեն հիպնոսից առաջ ջանադրաբար աղոթում էի, որ Տերը բարեգութ լինի իմ հանդեպ: Նաև ահավոր երազներիս ժամանակ կանչում էի. «Հիսուս, օգնի՛ր ինձ»: Դրանից հետո չար ոգիները անհետանում էին: Աստված լսեց աղոթքներս ու շուտով հետևյալ պատասխանն ուղղարկեց.

«Դու խոստովանել ես մեղքերդ ու ցանկանում ես ծառայել Տիրոջը ու հիմա ինչ-որ մեկը փորձում է քեզ իր կողմը շրջել ու իշխել: Աստված այդ չի կամենում ու թույլ չի տա: Բայց վախի միջոցով ցույց է տալիս, թե ինչ դրության մեջ կընկնես, եթե չդադարեցնես հիպնոսը» Աստծուց շնորհակալ եմ այս պատասխանի համար: Զնայած թուլությանս, բժշկին ասացի, որ հավատիս տեսանկյունով կարող եմ բացատրել հիպնոսի վատ հետևանքները: Նա ինձ լսեց, ժպտաց, որովհետև չէր հասկանում, թե ինչ եմ ուզում ասել: Նա ինձ համոզում էր, թե այդտեղ ոչ մի վատ բան չկա: Բայց ես հասկացա, որ խաբում է ու որոշեցի հեռանալ կլինիկայից»:

Աստված ազատությունը բոլորովին նրա համար չի տվել, որ մեկ ուրիշին տանք, որին նույնիսկ չենք ճանաչում ու չգիտենք, թե ինչպես և ո՞ւմ համար նա կօգտագործի իր իշխանությունը: Աստծո զավակները իրենց կամքն ու գիտակցությունը պետք է իրենց Արարչին նվիրաբերեն ու վստահեն միայն Նրան:

Ոգեհարցության ու նրա հետևանքների մասին կարելի է կարդալ Շառլոտենբուրգից ստացված նամակում:

«Պարոն այսինչը այն եզրակացությանն է եկել, որ տարիներ շարունակ չար ոգին խաբել է իրեն: Հետևանքները ընտանիքի համար սարսափելի էին: Կինը ինչ-որ անհասկանալի հիվանդությունից վաղաժամ մահացավ: Նրա մարմինը ծածկված էր կարմիր բծերով, որոնք սարսափելի ցավում էին: Ոչ ոք չկարողացավ նրան օգնել: Այդ հիվանդությամբ նաև մի պարոն էր տառապում, որը ուզում էր ուսումնասիրել ու դասախոսություն կարդալ ոգեհարցության մասին:

Մի տիկին նույնպես տառապում էր հիշյալ հիվանդությամբ, ու ես հարցրեցի նրան, թե արդյո՞ք չի զբաղվել կախարդությամբ: Նա խոստովանեց, որ դա իրոք այդպես է: Փնտրեցի նրա սենյակում, գտա ու այրեցի այդ մասին բոլոր գրքերն: Իսկ աղոթքներից հետո հիվանդը կարծես կենդանացավ, թեթևացավ ու հաջորդ օրը ապաքինված ելավ անկողնուց»:

Բնորոշ է նաև այն, որ ոգեհարցությամբ զբաղվողները չեն կարողանում լսել Աստծու խոսքը, կամ քնում են, կամ հորանջելով խանգարում մյուսներին: Դիվահարների մեջ դևերը իրենց հայտնի են դարձնում տարբեր վայրի ձայներ արձակելով, մարմնի մասերը տենդագին քաշքշելով: Մի անգամ, երիտասարդ մի աղջիկ, նման պահին, ջղաձգվելով մի քանի ժամ կորցրեց խոսելու ընդունակությունը:

Գուշակներ կան, որոնք մեռելահարցուկի մի-

ջոցով կարող են բոլոր հարցերին պատասխանել: Բեռլինում ապրող մի գուշակուհու տան դռան վրա ցուցանակ էր կախված, որտեղ կանչվող ոգիների համար գնացուցակ էր գրված: Աստծո զավակներն էլ նմանների հետ շփվելով նույնպես դիվոտվում են: Այն արտահայտվում է պաղ, անկենդան, մի տեսակ սառած հայացքով, հավատացյալների նկատմամբ արհամարանքով, թքելով նրանց վրա, կամ նույնիսկ ծեծելով:

Այս բոլոր պատմությունները վկայում ու հաստատում են, թե որքան ահավոր կարող են լինել ոգեկանչությամբ զբաղվելու հետևանքները:

Որ սատանան գիտի ու կարող է ընդունել հրեշտակի կերպարանք, մեզ կարող է ցույց տալ հետևյալ նամակը, որ պատմվում է ոգեկանչների հավաքների մասին, երբ, իբր հայտնվում են Պողոս առաքյալի և Լյութերի ոգիները: Սարսափելի է, որ հավաքվածները կարծում են, թե այդ ժամանակ գործ են ունենում միայն մեկի՝ Հիսուսի հետ: Նրանք համոզված են, որ ամեն ինչ Աստված է անում: Ի՞նչ է ստացվում: Զէ՞ որ մեռելահարցությունը արգելված է Աստծո կողմից: Ոչ ոք չգիտե, թե իրականում ում ոգին կհայտնվի: «... Զնայած մի քանի ժամ տևած «աղոթքներին» ու երգերին, ոչ մի ոգի չէր գալիս: Բոլորը պարտավոր են սպասել, թե ինչ է կատարվելու: Ներկաները պետք է «հավատացյալ» լինեն, կասկածողներին արգելում են ներս մտնել: Ոգեմիջնորդը 70-ամյա կին էր: Կյանքում նա սովորական պարզալեզու մեկն էր: Ես միշտ զարմանում էի, թե ոգու թելադրած բարդ նախադասությունները ինչպես է գրում: «Հանուն Աստծո, ձեր Փրկչի ու ձեզ քավություն տվողի, ձեր մոտ է գալիս իմ՝ եղբայր Պողոսի ոգին»: Լսո՞ւմ եք: Այստեղ հոգիներ կան, որոնք ճիշտ պատկերացումներ չունեն: Զգուշացեք, որ ձեր սխալ հայացքների պատճառով չմոլորվեք: Սիրելի հոգիներ, մոտ եղեք Հիսուսի Հոր հետ, թե չէ սարսափի մեջ կընկնեք, քանզի սիրելի եք: Քանի դեռ շողում է երջանկության արևը՝ բարի ենք ու բավարարված, Քրիստոսից գոհ, բայց հենց որ հույսերը խարխլվում են ու նեղության պահին ընկերը օգնության չի գալիս, սկսում ենք կասկածել ու վախենալ ինչ որ բանից: Ուստի, սիրելիներս, եթե ձեր շուրջը երբեմն սև ամպեր լինեն, դուք պետք է ուժեղ լինեք Հիսուսի Հորով ու համարձակ գնաք արևին ընդառաջ: Աստված ձեզ հետ: Ցտեսություն»:

Մի՞թե Պողոս առաքյալը կարող էր այդպես խոսել: Ով գեթ մի քիչ ընդունակ է ըստ Աստվածաշնչի մտածել, կհասկանա, որ այդ ամենը պարզապես կոպիտ խաբեություն է: Ինչո՞ւ է սատանան իրեն որպես լույսի հրեշտակ ներկայացնում ու խոսում Պողոս առաքյալի անունից: Ամեն ինչ պարզ է: Այդ ճանապարհով, հոգիները, որոնք ջեռմեռանդորեն փնտրում են կենդանի Աստծուն, կտրվում են ճշմարիտ քրիստոնեական կյանքից ու Աստծո խոսքի պարզ ու ճիշտ ընթերցումից: Արդեն 15 տարի է ինչ հավաքվում են այդ ոգեկանչները: Այդ ընթացքում որքան բարի գործ կանեին, եթե կանգնեին ճիշտ ուղու վրա ու իրենց կյանքը Աստծուն ծառայելու նվիրեին: Սատանայի կեղծիքի պատճառով նրանք հեռացել են ճշմարտությունից:

ԱՍՏՎԱԾԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Ոգեկանչների պես սատանան մոլորեցնում է նաև այսպես կոչված լորբերականներին, որոնք ասում են, թե լսում են հրեշտակների ձայներն ու իրենց հայր Լորբերի գիրքը Ավետարանի «դատարկ թերթերից» ավելի բարձր են գնահատում:

Մի հավատացյալ եղբայր գրում է. «Սատանան գտնում է նաև այնպիսիներին, որոնք իրենց մտքում խոստանում են Տիրոջը հաճելի կյանքով ապրել: Դրանց նմաններին մատուցում է աստվածիմացության շինծու տեսություն: Ավելին, այդ փնտրողներին, իրենց ծանր ու անձնազոհ պայքարի համար երբեմն պարգևում է «գերբնական երջանիկ» պահեր: Ազատությունն ու ազատագրումը աստվածիմացության գլխավոր նպատակն է: «Գաղտնի պատմությունը» (Իմաստության գիրք) ու Լորբերի աշխատությունները այդ մարդկանց Ավետարանի հանդեպ կույր ու անտարբեր է դարձնում:

Ինձ հետ էլ այդպես պատահեց: Մի անգամ պատահաբար ծանոթացա ոգեմիջնորդության տեսությանը: Համապատասխան գրականության օգնությամբ կապ հաստատեցի պայծառատեսների, մեկնողների, ոգեկանչների հետ: Սկզբից սատանան ինձ այն մտքին հանգեցրեց, որ ես տարբեր հայտարարություններ պետք է գրեմ: Այսինքն՝ ես ձեռքս մեկնեցի, իսկ նա հափշտակեց նաև մարմինս: Սատանան ինձ շողոմ խոսքերով համոզեց առաջնորդ դառնալ: Դևերը իշխեցին ոչ միայն լեզվիս, այլ նաև մարմնիս վրա: Ի վերջո այն վիճակին հասա, որ ինձ հոգեբուժարան տարան: Դրանցից ազատվելու ուժ չունեի, ոչ մի ոգեհարցուկ այլևս չէր կարող ինձ օգնել: Ու եկավ ամենասարսափելի պահը. սրտիս մեջ զգացի սատանային: Ես նրա նման ծաղրում էի մերձավորներիս ու Հիսուսին: Դժոխային տանջանքներ սկսվեցին: Դևերն ավելի ու ավելի էին տանջում: Այդ տառապանքներից նաև մարմնական վնասվածք ստացա: Հոգեբուժարանից ինձ դուրս գրեցին: Դրանից հետո առողջությունս լրիվ քայքայվեց, անտանելի վիճակում էի: Երկինքը ինձ համար փակ էր: Սատանան «իմաստուն» խորհուրդ տվեց. ինքնասպան լինել: Բայց վախենում էի: Որովհետև չնայած ամենօրյա տառապանքներիս, ես սիրում էի կյանքը:

Փա՜ռք Աստծուն, որ Նրա ձեռքը չի կարճացել փրկելու համար: Նա ցույց տվեց մեկ այլ ապրելակերպ: Ես հավատացյալների ընկերակցության անդամ դարձա: Տիրոջ գոտեպնդող խոսքերը լսեցի: Սակայն, այնուամենայնիվ, հենց մտածում էի, որ Աստված նախկին մեղքերս գիտե, ինչ-որ վախ ինձ հալածում էր: Զնայած դրան, սրտումս ավելի ու ավելի էր դրոշմվում Հիսուսի անունը: Ի վերջո, ես հաստատապես հավատացի: Անսպասելի ու աննկարագրելի ուրախություն էր դա: Միայն մեկին էի ցանկանում ծառայել՝ Հիսուսին: Հիմա համոզված եմ ու հաստատ կարող եմ ասել՝ Նա կենդանի է: Շուտով Աստծո Հոգին ապաքինեց մարմինս ու հալածեց բոլոր դևերին: Հիսուսի արյունը ու Նրա Հոգին ազատեցին ինձ դևերի զորությունից, որոնց դեմ երկար ու ապարդյուն պայքարում էի: Հյուծված մարմինս մի քանի օրում ապաքինվեց, թուլությունս նահանջեց ու ես առողջացա: Սիրտս պայ-

թում է, երբ մտածում եմ մեռելահարցուկների, ոգեկանչների, աստվածիմացների, ոգեմիջնորդների, հիպնոսով զբաղվողների ու բոլոր նրանց մասին, որոնք իրենց և ուրիշների փրկությունը Քրիստոսից չեն ակնկալում: Ի՞նչ է նրանց սպասվում...:

Նույնիսկ հիմա էլ սատանան գայթակղում ու չար ոգիները հաճախ հարձակվում են վրաս, բայց նրանք անզոր են, քանի որ գնված եմ Քրիստոսի Արյամբ»:

ՍՊԻՐԻՏՈՒԱԼԻԶՄ

Թյուրինգիայից ստացված նամակում կարդում ենք. «Դեռ աշխարհիկ մարդ էի, երբ արհեստիս շնորհիվ ծանոթացա մի հավատացյալ ընտանիքի հետ: Նրանք աղոթում էին Աստծուն, եկեղեցի էին հաճախում, հանգիստ, խաղաղ ապրելակերպ ունեին ու շատ սրտացավ էին: Այդ մարդիկ սպիրիտներ էին: Սպիրիտիզմը ինձ օտար էր, բայց հավատում էի, որ այնտեղ լավ ու աստվածային գաղափարախոսություն պետք է լինի: Ինձ էլ սկսեցին հավաքների մասնակից դարձնել: Մոտավորապես մեկ տարի սպիրիտիզմի շղթաներում էի գտնվում, մինչև մի հավատացյալ քույր բացատրեց, որ այդ զբաղմունքը՝ մեղք է: Այդ ծանր պայքարը տևեց չորս շաբաթ, բայց փառք Աստծուն, Նա ազատեց ինձ: Այդ չորս շաբաթվա ընթացքում երկակի աչքերով էի տեսնում ու երկակի ականջներով լսում: Հավաքներից հետո, երեկոները, անբացատրելի վախ էր ինձ պատում, մութ անկյուններում տարօրինակ, լույս արձակող էակներ էի տես-

նում: Աղոթում էի Աստծուն, որ ինձ ճշմարիտ լույսը ցույց տա: Շուտով Քրիստոսի եկեղեցու անդամ դարձա: Փառք Աստծուն, իմ հանդեպ Իր ողորմածության ու սիրո համար»:

Սպիրիտուալիզմը սովորական սպիրիտիզմից տարբերվում է նրանով, որ փորձեր չեն արվում: Սրանց հավաքները սկսվում են հոգևոր «օրհներգերով», Աստվածաշնչի ընթերցմամբ ու մեկնությամբ: Ընդմիջումների ժամանակ, երբ բոլորը լռում են, երևում են ոգեմիջնորդները, որոնք 10-30 րոպե խոսում են ընթերցված հատվածի մասին: Մոտավորապես այսպես. «Խաղաղություն ձեզ, իմ սիրելի Աստծո զավակներ: Այն ինչ ցանկանում եմ ձեզ հաղորդել, երկնային Տիրոջ խոսքն է»: Ոգեմիջնորդները սովորաբար խոսում են որպես Աստծու հրեշտակներ, Հին Կտակարանի մարգարեներ, կամ ինչպես Մարտին Լյութերը և ուրիշներ: Սովորաբար այդ հավաքներին վեց ոգեմիջնորդ է մասնակցում, որոնք իրենց անվանում են «ճշմարիտ ուղու օթյակ» կամ «Էմավուսի օթյակ»: Վեցից երեքը հռետոր-ոգեմիջնորդներ են, երեքը՝ պայծառատեսներ: Նրանք ներկաներին պատմում են, թե այդ պահին ինչ է կատարվում ժողովարանում, օրինակ՝ հնարավոր է ոգեկանչողի ոգին լքի նրա մարմինը ու տեղը մեկ այլ, օտար ոգի գրավի ու գործի այդ միջոցով:

Սպիրիտիստների հավաքներ են լինում, որտեղ միայն խիստ որոշակի մարդիկ են մասնակցում: Նրանց վկայությամբ այդ ժամանակ Հիսուսը այցելում է իրենց: Այդ ժամանակ բոլորը ծնկի են իջնում ու մոտենում այդ «պատկերին», որպեսզի օր-

հնություն կամ նոր անուն ստանան:

Պնդում են, թե իբր, սպիրիտուալիզմը զուտ հոգևոր տեսություն է: Ինքը՝ Հիսուս Քրիստոսը ուսուցանում է «եղբայրների», որոնք 12 առաքյալների անուններն են կրում: Ուսումնասիրությունը սովորաբար երեք տարի է տևում, որից հետո նրանք «կատարյալ» են դառնում: Իրենց ուսուցչի՝ ոգեմիջնորդի միջոցով ստացված գիտելիքներից բացի, մնացածը համարվում է ոչ լիարժեք: Պնդում են նաև, որ երկրի վրա Աստված ամեն ինչ թույլ է տալիս մարդկանց, լուսավորելու և ուղղելու համար: Ոգեմիջնորդները համարվում են «լուսավորված ու անբիծ հոգևոր» էակներ: Սպիրիտուալիստների խնդիրներից է նաև ոգեմիջնորդների միջոցով հանգուցյալների ոգիները առ Աստված ուղղելը: Պատահել է, որ ոգեմիջնորդի միջոցով խոսել է 200 տարի առաջ տաճարների կողոպուտով զբաղված մի մարդ: Մեկ ուրիշը պարզապես մարդասպան է եղել: «Եղբայրներին» հանձնարարվում է աղոթքների միջոցով այդ ոգիներին Աստծուն վերադարձնել: Լինում են նաև այնպիսի ոգիներ, որոնք բոլորովին լսել չեն ուզում Աստծո անունը: Հավաքներին միշտ նույն ոգիներն են հայտնվում, որոնք պնդում են, թե իրենք «լուսավոր ուղիներով» են այժմ քայլում: Իրենց հերթին նրանք էլ ուրիշների են հրավիրում: Մի անգամ էլ այնքան չար ու ուժեղ ոգի էր հայտնվել, որ չորս «եղբայր» հազիվ պահեցին դիվոտածին: Դրանից հետո այդ ոգեմիջնորդը 15 րոպե անշարժ պառկած էր: Բոլոր «եղբայրները» ու ներկաները աղոթում էին, որ ոգին ետ վերադառնա: Հենց ոգին ազատեց

միջնորդ «եղբորը», նա վեր կացավ, կարծես ոչինչ չէր եղել: Հայտնվող ոգիներին «եղբայրները» հետևյալ խոսքերով են ողջունում. «Թե մեղքերդ արյան պես կարմիր են, կներվես ու կճերմականաս ձյան պես»:

Մի տիկին ինձ հրավիրեց նման հավաքի: Նա մագնիտիզմով ապաքինել էր հիվանդների, որոնց բժիշկներն անզոր էին օգնել: Կինը անվճար էր բուժում, ու մարդիկ մեծ խմբերով գալիս էին իր մոտ: Այնտեղ մի քրոջ հանդիպեցի, որը նույնպես ուզում էր բուժվել այդ ճանապարհով ու ոչ մի վատ բան չէր տեսնում: Նա պնդում էր, որ այստեղ ամեն ինչ աղոթքներով ու հանուն Քրիստոսի է կատարվում:

Որ սպիրտուալիզմը սկսում է տարածվել, երևում է այն հանգամանքից, որ հավաքների ընթացքը լրիվ սղագրվում է. բազմացվում ու տարածվում: Ինչպես տեսնում ենք սատանան ցանկացած ճանապարհով ձգտում է խաբել մարդկանց: Որպեսզի մարդիկ չկասկածեն, որ իրենց կատարածը մեղք է, Աստվածաշնչից խոսքեր են վերցնում ու աղոթքներ, և խոսում հանուն Սուրբ Երրորդության:

Ինչպես համոզվեցիք սատանան այստեղ շատ նուրբ է գործել. կեղծ խաղաղություն, Ավետարանական խոսք, հուսադրող պատգամներ, անվճար բժշկություն, աղոթք, սուրբ Երրորդության անվանարկում և այլն: Նման դեպքերում անկեղծ սրտով, Աստծուն ուղղված աղոթքներով և Իր խոսքով, կատարվածի մանրակրկիտ քննությամբ է հնարավոր բացահայտել սատանայի նուրբ խորամանկությունները: Ինչպես Գործք առաքյալների մեջ նկարագրված Սիմոն մոգը (8-րդ գլուխ), որի հրաշքնե-

ռով խաբված շատերը բացականչում էին. «Սա՛ է Աստծո զորությունը, որ մեծ է կոչվում»: Բայց Սուրբ Հոգին առաքյալների միջոցով բացահայտեց այդ կեղծիքը, և մինչև իսկ Սիմոն մոգը կամեցավ մկրտվել նրանց ձեռքով:

Տեր Աստված, գթասիրտ եղիր սատանայի զոհերի նկատմամբ ու ազատիր նրանց այդ գաղտնի կապանքներից:

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուզում եմ ձեզ մի նամակ ներկայացնել, որտեղ խոսվում է աստղագուշակության, այսինքն, երկնային լուսատուների միջոցով գուշակության մասին:

«Ութ օր առաջ Բեռլինում բնակվող մի պատմաբանի նամակ գրեցի ու խնդրեցի կանխագուշակել ապագաս: Շուտով պատասխանը ստացա: Նա գրում էր, որ կյանքիս առաջին կեսում երջանիկ չեմ լինի, դրա փոխարեն երկրորդ կեսում մեծ հաջողություն ու երջանկություն է սպասվում: Իսկ ծերության մեջ ամենաերջանիկ մարդկանցից մեկը կլինեմ: Երկու դեպք էր կանխատեսել, որոնց ժամանակ հնարավոր է, որ զրկվեմ կյանքից: Հիմա գիշեր ցերեկ հանգիստ չունեմ: Խաղաղություն եմ փնտրում ու չեմ գտնում: Աստվածաշունչ եմ կարդում, բայց ոչինչ չեմ կարողանում հասկանալ»:

Մի՞թե այդ անհանգստությունն ու վախը չեն վկայում, որ անգամ աստղագուշակին դիմելը մեղք է:

Մի նամակ էլ կարդանք. «Մեզ մոտ շատ շատերն են զբաղվում սպիրիտուալիզմով: 20-ից ավելի խմբակ կա: Նույնիսկ երեխաներն են խմբեր

ստեղծում: Շնորհակալ ենք Աստծուց, որ մեզ ցույց տվեց, թե ինչ սարսափելի հետևանքներ է ունենում այդ զբաղմունքը: Վերջերս մի երիտասարդ զույգ էր հյուրընկալվում մեր տանը: Պատմեցին, որ իրենք ընկել էին սատանայի իշխանության տակ: Խեղճ կինը այն վիճակին էր հասել, որ ուզում էին նրան հոգեբուժարան ուղարկել: Այդ ժամանակ մի քանի անկեղծ հավատացյալներ սկսեցին աղոթել նրա համար ու ներքին երկարատև պայքարից հետո, նա խզեց կապերը սատանայի հետ: Երբ պատմությունը վերջացրեց, աչքերը փայլում էին երջանկությունից: Եվ հիմա, երբ սատանան վատ գաղափարներ է ուղարկում, ես նույնպես Փրկչիս անունն եմ տալիս, ու ամեն ինչ անցնում է»:

Փառք Աստծուն, որ Քրիստոսի անունը բժշկում ու փրկում է ոգեկանչության խեղճ զոհերին: «Եվ ուրիշ մեկի միջոցով փրկություն չկա, որովհետև երկնքի տակ չկա մարդկանց տրված այլ անուն, որով կարելի է լինի որ մենք փրկվենք» *(Գործք.Դ, 12):*

ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ ՍԱՏԱՆԱՅԻ ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ

Սա ամենակարևոր հարցն է, որին անդրադառնում ենք այս գրքի վերջում:

ՄԵՂՔԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Առաջին հերթին ուզում եմ ասել, որ կախարդությունը, գուշակությունը, հմայությունը և այլն, այն մեղքերն են, որոնք երկնքի դռները փակում

են մեր առաջ ու հավերժական տանջանքների են մեզ տանում: Մեկ անգամ էլ հիշեցնեմ, թե ինչ է ասում Աստվածաշունչը այդ մասին: Ղևտացիների գրքում (ԺԹ, 31) գրված է. «Վհուկներին մի նայեք, և հմայողներից բան մի հարցրեք, որ նրանցով չպղծվեք: Ես եմ Տերը՝ Ձեր Աստվածը»:

Առավել պարզ ու ամբողջական պատկերացման համար կարդացեք նաև հետևյալ հատվածները. Ղևտ., Ի, 6-27, Ելք, ԻԲ, 18, Բ Օրինաց ԺԸ, 9-13, Հայտն. ԻԱ, 8-ԻԲ, 15: Այս ամենը մեկ անգամ ևս հաստատում են, որ Աստծո առաջ այդ գարշելի մեղքերով զբաղվողներին մարմնական ու բարոյական պատիժներ են սպասվում ու կարգելվի նրանց մուտքը Նոր Երուսաղեմ՝ Աստծո Թագավորություն:

Ուստի նորից եմ կրկնում. առաջին հերթին պետք է ընդունել, որ դա մեղք է ու այն էլ՝ մեծ: Սակայն, շատերը դա չեն գիտակցում ու կարծում են, թե կատակ է, կամ էլ ժամանց է: Երբ խոսում ես նրանց հետ, ծիծաղում են ու ասում. «Դատարկ բան է, այստեղ ի՞նչ կախարդություն կա»: Մյուսներն ընդունում են, որ հիմարություն են արել ու չգիտեին, թե այդքան ծանր հետևանքներ կարող է ունենալ: Ոմանք կարծում են, թե անմեղ ու անվնաս կամ հետաքրքիր զբաղմունք է, կամ էլ ո՞վ կարող է մտածել, որ այդպիսի հետևանքներ կունենա: Երբեմն էլ՝ «Ինձ մի հավատացյալ եղբայր է խորհուրդ տվել...», կամ՝ «Հանգուցյալ մայրս էր զբաղվում դրանով...», կամ էլ՝ «Այստեղ ոչ մի վատ բան չկա...»:

Նույնիսկ բանն այնտեղ է հասնում, որ ինձ

ասում են. «Դուք պետք է զղջաք, որ կախարդությունը մեղք եք համարում: Մենք այն ընդօրինակել ենք Հիսուս Քրիստոսի առաքյալներից, չէ որ դա բուժման աստվածաշնչային միջոց է»:

Ով այս զբաղմունքը անմեղ կատակ, կամ նույնիսկ աստվածաշնչային բուժում է համարում, բնական է, մի օր խիստ կզղջա: Բայց հիմա ցանկանում եմ ընդգծել՝ <u>նրանք ովքեր չեն զղջա ու չեն դիմի Աստծուն, հավերժ կմնան սատանայի շղթաներում:</u>

Աստծո խոսքով ես փորձեցի ապացուցել, որ գուշակությամբ, կախարդությամբ զբաղվելը մեծ մեղք է, որի համար եթե չզղջաք, կփակվի երկնքի ճանապարհը: Մեղք է նաև, երբ հմայողների կամ գուշակողների միջոցով ձգտում են իմանալ ապագան, երբ օգտագործում են տարբեր կախարդական խոսքեր ու միջոցներ, ինչպես օրինակ, հիվանդ տեղի վրա ձեռք շարժելը և թալիսմաններ կրելը: Մեղք է նաև սուրճի գավաթ նայելով, մեռելահարցությամբ կամ ոգեկանչությամբ ապագայի և անդրշիրիմյան կյանքի մասին հետաքրքրվելը:

Ով ընդունում է, որ կախարդությունը մեղք է, այլևս չի զբաղվի դրանով, չի վախենա 13 թվից ու կկվի կոնչոցից և պատահմամբ գտած պայտը, երջանկության նշան չի համարի:

Դրանք այնքան էլ անմեղ զբաղմունքներ չեն, ինչպես թվում է ձեզ: Զէ՞ որ երջանկությունը ոչ թե պայտից, այլ Աստծուց է կախված: Մի՞թե չենք վստահում Նրա Հայրական հոգատարությանը, որ պայտից ենք հաջողություն ակնկալում:

Կորչի՛ սնոտիապաշտությունը: Չվախենա՛նք

«դժբախտ» թվերից, կենդանական ձայներից, ամպերի ձևերից ու սև կատուներից: Կատարյալ սերը կվանի վախը մեր միջից:

Իրականում հավատացյալների մեջ դեռ շատ կան սնոտիապաշտներ: Նրանք այդ մասին շատ չեն խոսում ու չեն ուզում փորձել, կամ բացատրել սնոտիապաշտության էությունը: Եվ, այնուամենայնիվ սնոտիապաշտությունը կախարդության կրտսեր քույրն է, ճշմարիտ հավատի գաղտնի թշնամին: Ուստի նորից եմ կրկնում, առաջին հերթին պետք է ընդունել, որ այստեղ խոսքը գնում է լուրջ ու ծանր մեղքի մասին:

ԶՂՋՈՒՄ

Երկրորդ քայլը զղջումն է: Ի՞նչ է դա նշանակում: Ափսոսանք կատարածիդ համար: Նշանակում է ամբողջովին փոխել հին մտքերը: Այլևս իրավունք չունես մտածելու, որ այդ ամենը ընդամենը կատակ է, ընդ որում՝ անմեղ: Պետք է ներում խնդրես, որ տխրեցրել ես ու քամհարել Աստծուն, Նրա Սուրբ Անունը:

Շնորհակալ ենք Տիրոջից, որ Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի Արյունը լվանում է մեր մեղքերը: Եթե անկեղծ ենք՝ զղջանք, Նրա Արյունը ի զորու է մեր բոլոր մեղքերը լվանալ:

Գուցե ասես. «Հո ես ինքս չեմ դիմել հմայողին: Երեխա ժամանակ ինչ-որ մեկը ինձ տարել է: Ես ոգի չեմ հմայել ու չեմ ձգտել դրան»:

Հնարավոր է: Բայց միևնույն է, դա մեղք է, եթե ոչ քո, ուրեմն՝ քո ծնողների: Եվ ճշմարտությունն այն է, որ թեև քո կամքից անկախ է եղել, այնուամենայնիվ, սատանայի իշխանության տակ ես գտնվում: Ինչպես որ Ադամն ու Եվան մեղք գործեցին, բայց դրա հետևանքները ամբողջ մարդկությունն է կրում մինչ այսօր: Իսկ դրանից ազատվում են միայն նրանք, ովքեր հավատքով մտնում են Հիսուս Քրիստոսի քավչարար Արյան տակ: Սատանան սարսափելի թշնամի է: Նրան չի հետաքրքրում, քո կամքով ես իր իշխանության տակ հայտնվել, թե՝ ուրիշի, ակամա, թե՝ գիտակցաբար: Նրա համար միևնույնն է, նա լիտիբաբար ծաղրում է նրանց, ովքեր կախարդության մեղքի պատճառով կապվել են իր հետ:

Քանի անգամ է սիրտս դառնացել, որ սատանայի շղթաներում տառապում են մարդիկ, միայն այն պատճառով, որ ինչ-որ մեկը, ինչ որ ժամանակ, խորհուրդ է տվել դիմել հմայողին, ու մանուկ հասակից մեղքի մեջ գցել: Մեր թշնամին՝ սատանան, անողոք է, նա չգիտե, թե ինչ ասել է ցավակցել կամ գթալ:

Նա միայն մի բանից է վախենում՝ Հիսուս Քրիստոսի Արյունից: Հիսուս Քրիստոսի Արյունը ներման ու քավության նշան է: Ով ընդունում է Հիսուսի փրկարար Արյունը, նա ազատվում է ամեն տանջանքից:

Ուստի մեր փրկությունը մշտենջենավոր Զոհի արյան մեջ է: Աղերսիր Աստծուն, որ լվանա ու քավի քո բոլոր մեղքերը Իր թանկանգին Արյամբ:

ՀՈՒՅՍ ԵՎ ԱՂՈԹՔ

Եվ բացի դրանից, որ խնդրում ենք մեզ մաքրի Իր սուրբ Արյամբ, պետք է հավատալ, որ Քրիստոսի Արյունը իսկապես կլվանա բոլոր մեղքերդ: Պետք է հավատալ Աստծո խոսքին. «Որով ունենք փրկություն Նրա Արյունով՝ մեղքերի թողություն Իր շնորհի ճոխության չափով» (Եփես. Ա 7): Մենք հավատով պիտի աղոթենք Հիսուս Քրիստոսին, որ Գողգոթայի խաչի միջոցով ջախջախեց օձի գլուխն ու խլեց սատանայի զորությունը:

Աստվածաշնչում 36.000 խոստում կա: Բայց շատերի համար դրանք ոչ մի ուժ չունեն: Ինչո՞ւ: Եթե սատանան ինչ-որ մեկին ասի. «Դա քեզ չի վերաբերվում, միևնույն է կործանվելու ես» և ապա այդ խեղճ հոգին ավելի շուտ նրան կհավատա, քան Աստծո խոստումներին: Նման դեպքում Աստծո խոստումները մարդկանց ոչինչ չեն տա: Մտածեցեք, թե սատանային հավատալով ի՞նչ եք անում: Դուք ակամա Հիսուսին խաբեբա եք դարձնում: Մի՞թե Նա դրան է արժանի: Արդյոք Նա չի՞ ասել. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը»: Արդյոք ճիշտ չէ՞, որ Աստծո բոլոր խոստումները «այո՛» են ու «ամե՛ն»: Չէ՞ որ սատանան ի սկզբանե ստախոս էր ու կեղծիքի հայրը: Նա շատերին ոսկե սարեր է խոստանում, իսկ հետո ծիծաղում է մարդկանց միամտության վրա ու ասում. «Մեղքդ շատ մեծ է, քեզ ներում չկա»: Սա սարսափելի խաբեություն է: Եվ դու ուզում ես սատանայի՞ն հավատալ: Երևում է, որ այդ անունը քեզ համար ավելին է, քան Տիրոջ անունը: Հիսուսն ասում է. «Ինձ մոտ եկողներին չեմ հեռացնում: Ես նրանց հավիտենական կյանք եմ պարգևում, հավիտյան չեն մեռնի, ու ոչ ոք չի կարող խլել իմ ձեռքից»:

Ո՞ւմ ես հավատում. սատանայի՞ն թե՝ Փրկչին: Թող հայտնի լինի, որ սատանային հնազանդվելով քո Փրկչին սուտասանի դեր ես վերապահում: Մի՞թե այդպես ես ուզում վարվել: Չէ՞ որ հավատում ես ճշմարտությանը, հավատում ես, որ Հիսուսը խաչի վրա ասել է. «Կատարվե՛ց»: Հավատում ես Պողոս առաքյալի վկայությանը, որ մենք փրկվում ենք Նրա Արյան ու ողորմության շնորհիվ:

Ուրեմն, հավատա՛ Փրկչիդ: Նա քեզ չի խաբի: Նա ճշմարտությունն է խոսում: Հույսդ միայն հավերժական Տիրոջ վրա դիր:

Ու այլևս ոչ մի առիթով մի կապվիր սատանայի հետ: Նրա խոսքերին ուշադրություն մի դարձրու: Հակոբոս առաքյալը ասում է. «Հնազանդվեցե՛ք Աստծուն, և հակառակ մնացեք սատանային ու նա կփախչի ձեզանից» (Հակոբ.Դ,7): Երբ սատանան գալիս է քեզ գայթակղելու, հաստակամորեն ասա. «Գրված է, որ...»: Տիրոջ անունը տուր և ասա՛ Նրա խոսքերն ու սատանան ստիպված կլինի քեզանից փաղչել:

Այո՛: Հավատա քո Փրկչին, Նա քեզ հուսախաբ չի՛ անի: Վստահի՛ր Նրան: Մեր Տիրոջ անունը զորավոր զենք է:

ՆԵՑՈՒԿ ԱՂՈԹՔՆԵՐՈՎ

Մի տխուր վիճակ ևս կա, երբ համոզված ենք, որ մեր մեղքերը ներված են, բայց հին «եսը» ետ է կանչում ու նախկին կապերը նորոգվում են:

Նման դեպքում ի՞նչ է պետք է անել:

Հակոբոս առաքյալը խորհուրդ է տալիս. «Ձեր մեղքերը խոստովանեցեք միմյանց ու միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք»(Հակոբ.. Ե,15): Ով ինքնուրույն չի կարող ազատվել սատանայի շղթաներից, թող խոստովանի իր եկեղեցու հովվին, հավատակից եղբորն ու միասին աղոթեն:

Ընդհանուր աղոթքը մի առանձին խորհուրդ ունի (Մատթ. ԺԸ,19-20): Հիսուսն ասում է. «Դարձյալ ասում եմ ձեզ, եթե ձեզանից երկուսը երկրի վրա միաբանվեն որևէ խնդրանքի համար, ինչ էլ որ խնդրեն, կկատարվի նրանց համար իմ Հոր կողմից, որ երկնքում է. որովհետև ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն իմ անունով, այնտեղ եմ ես, նրանց մեջ» (Մատթ. ԺԸ, 19-20):

Ձգտեք հնարավորին չափ միասին ու հաճախ աղոթել: Պատահում է, որ աղոթքը ժամանակավորապես օգնում է, հետո նորից հակառակորդն է իշխում մարդուն: Այդ դեպքում աղոթքը պետք է հաճախակի կրկնել: Սա շատ նման է ծանր հիվանդության, երբ մեկ դեղահաբը չի օգնում: Բուժումը երկար պիտի շարունակվի մինչև հիվանդությունը հաղթահարվի:

ՊԱՀՔ

Որոշ դևերից ազատվելու համար Հիսուսն ասել է. «Այսպիսիններին հաղթում են միայն պահքով ու աղոթքով»: Ասել է, թե որոշակի կերակուրներից հրաժարվելով, երկրպագության աղոթքներով աշխարհից կտրվելով, լռության ու միաբանության մեջ, երկնային ուժ ենք ստանում: Քրիստոնեական անկեղծ չփման շնորհիվ ու Աստծո կամքով շատ շատերն են ազատվել սատանայի շղթաներից: Հնարավորության դեպքում եղեք այնտեղ, որտեղ անկեղծորեն դրսևորվում է Աստծո խոսքը:

ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

Հաճախ սատանայի շղթաները արտահայտվում են պիղծ մտքերի ձևով: Ինչպե՞ս կարելի է դրանից ազատվել: Հենց որ պարուրում են պիղծ մտքերը, որոնք բոլորովին էլ ձեր սրտից չեն բխում, պետք է անմիջապես այլ բանի մասին մտածել՝ Գողգոթայի խաչի, փրկության: Եվ հաճախ Աստծուն փառք տուր այդ փրկության համար:

Սուրբ Գիրքը մեզ միշտ գոհության կոչ է անում: Պողոս առաքյալը եփեսացիներին գրում է. «Ամեն ժամանակ, ամեն բանի համար, գոհություն հայտնեք Աստծուն և Հորը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով» (Ե, 20):

Համոզված եմ, որ այդպես պատնեշ ենք ստեղծում պիղծ մտքերի առաջ: Երբ գովում ու փառք ենք տալիս, թշնամին իր ուժը կորցնում է: Ուրեմն պիտի սովորենք Աստծուց միշտ գոհանալ: Սատանան փախչում է, երբ մեզ խաչի կողքին է տեսնում:

ԿԱՆՉԵԼ ՀԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆԸ

Եթե սրբապիղծ մտքերը անսպասելի են հայտնվում ու չես կարողանում աղոթել, տուր Հիսուսի անունը: Դա ամենակարճ ու ազդու աղոթքն է: Գրված է. «Տիրոջ անունը հուսալի ամրոց է»: Հենց

հոգուդ խորքից Տիրոջ անունը տաս, կպաշտպանվես թշնամու համար անձեռնամխելի ամրոցում: Երբ չես կարողանում աղոթել, Տիրոջ անունը տուր ու կտեսնենս, որ թշնամին կհեռանա քեզանից:

Այս միջոցով որքան արագ ընդիմանաս, այնքան շուտ կխարխլվի հակառակորդի իշխանությունը:

ՍՐԲԱՊԻՂԾ ՄՏՔԵՐ ՄԻ ԱՐՏԱԲԵՐԻՐ

Մի բան երբեք չպետք է մոռանալ՝ Աստված ամեն ինչ գիտե: Գիտե, որ պիղծ մտքերը զզվելի են ու սրտիցդ չեն բխում: Գիտե, որ պատասխանատվությունը քեզ վրա չի ընկած: Ու դու դրանք բարձրաձայն պետք չէ արտասանես: Երբե՛ք: Ոմանք պատմում են, որ իրենց տանջել են այդ գաղափարները, բայց աշխատել են դրանք չմտապահել: Ուրիշները անզգույշ են եղել այդ հարցում: Ես անմիջապես Հիսուսի պահպանության տակ էի փախչում, որ չմտապահեմ դրանք: Թղթի վրա գրված ու բարձրաձայն կարդացված խոսքերը ուժ են ձեռք բերում: Խուսափեք դրանք արտաբերելուց:

ՈՉՆՉԱՅՐԵՔ ԿԱԽԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ՈՒ ԹՂԹԵՐԸ

Մեկ խորհուրդ ևս, կախարդության բոլոր միջոցներն ու գրքերն այրեք: Պողոսի ժամանակ Եփեսոսի բնակիչները սթափվեցին «Հավատացյալներից շատերը գալիս էին, խոստովանում էին ու պատմում իրենց գործերը: Եվ կախարդության հետևողներից շատերը գրքերը բերում էին ու բոլորի առջև այրում» (Գործք, ԺԹ, 18-19):

Եթե ձեր տանը նման բաներ կան, կրակի մեջ նետեցեք: «Մովսեսի 6-րդ ու 7-րդ գրքերը» ունե՞ս: Այրի՛ր անմիջապես: Կամ գուցե մոտդ այսպես կոչված «երկնային գրեր» ունես: Այրի՛ր: Թալիսմաններդ ու հուռութներդ նույնպես ոչնչացրու: Այրի՛ր երազահաններդ: Ազատվի՛ր տանդ մուտքից կախված պայտից: Թե խաղաթղթեր ունես կամ այսպես կոչված «պլանշետ», որի վրա չար ոգիները «գրում» են, կրակը նետիր: Տանը մի պահիր բախտացույցներ, դեն նետիր դրանք: Կախարդության հետ կապված ամեն ինչ ոչնչացրու: Թշնամու հետ կապվող մինչև վերջին թելը պետք է կտրվի: Բայց նախապես այդ բոլորը կատարելուց առաջ աղոթք «Հայր մեր» աղոթքը արա Աստծուն, զղջումով խոստովանիր կատարածներիդ համար և վճռականորեն, առանց երկմտելու ազատվիր բոլոր այդ առարկաներից, ինչքան էլ թանկագին լինեն քեզ համար:

ՄԾՏԱՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԿԱՐԴԱ

Դևի հետ բոլոր թելերը կտրիր: Ու Տերը պետք է մտնի կյանքիդ մեջ: Դրա համար ամեն օր Աստվածաշունչ կարդա:

Պատկերացնում եմ ինչ կպատասխանես. «Աստվածաշունչը անհասկանալի ու փակ գիրք է ինձ համար: Կարդալու ընթացքում հոգուս մեջ պայքար է սկսվում, պիղծ մտքեր են ինձ պարուրում: Դրանից խուսափելու համար ավելի լավ է Աստվա-

ծաշունչ բոլորովին չկարդամ»:

Տեսնո՞ւմ ես, թշնամին ինչի է ձգտում: Ցանկանում է հեռացնել մեր հոգու հացից՝ Աստվածաշնչից: Ով ամեն օր կարդում է այն, մեղքի դեմ պայքարելու համար ուժ է ստանում: Իսկ սատանան փորձում է մեզ համոզել, որ Աստվածաշունչ կարդալու համար ժամանակը չի բավարարում: Թշնամու նենգությունը պետք է հակադրել մշակված ու հաստատուն կանոններով ընթերցանություններ:

Սովորենք Դանիել մարգարեից, որը սովորություն էր դարձրել և օրը 3 անգամ ծնկի էր իջնում ու աղոթում: Ուշադրություն չդարձնելով, որ դրա համար մեղադրում էին իրեն: Աղոթելու սովորությունը նրա պաշտպանն էր: Մեզ համար էլ պետի այդպես է լինի, որ թշնամին չկարողանա խանգարել Աստծո խոսքը կարդալ:

Սովորություն դարձրեք միշտ որոշակի ժամերին Աստվածաշունչ կարդալը: Ամենից հարմարը առավոտյան է: Մինչև կարդալը Սուրբ Հոգուն խնդրիր, որ բացատրի Տիրոջ խոսքը, որ հասկանաս ու պատգամները կիրառես կյանքում: Այդ ժամանակ սաղմոսերգուի պես կկարողանաս ասել. «Քո խոսքը կյանքիս լուսատուն է»: Թող Աստվածաշունչ կարդալը հիմնավորապես մտնի կյանքիդ մեջ:

ԱՆԴԱԴԱՐ ԱՂՈԹՔ

Աստվածաշունչ կարդալուց բացի պետք է աղոթել: Սկզբում դժվարությամբ է ստացվում, թվում է, սատանան փակում է բերանդ, ու մտքերդ խառնվում են: Աղոթելու ժամանակ դևը քեզ մղում է քնելու: Այդ դեպքում, բարձրաձայն աղոթիր: Եվ մի կարծիր, թե պետք է անպայման գեղեցիկ աղոթել: Կարևորը սիրուն խոսքերը չեն, Աստված մեր սրտին է նայում: Ու եթե աղոթքդ սահուն չէ, ոչինչ: Միայն թե սրտանց աղոթիր, ու բոլոր ցավերդ պատմիր Տիրոջը:

Եթե չգիտես ինչի մասին աղոթել, թող Աստծու խոսքը քեզ հուշի: Կարդացածդ նյութը աղոթքի վերածիր: Հարցրու ինքդ քեզ. «Իրո՞ք ես այդպիսի մարդ եմ»: Եվ եթե պարզվի, որ ոչ, այդ պակասդ աղոթքիդ հիմքը դարձրու և օրստօրե կաճես:

Աստվածաշնչի օգնությամբ դու աղոթել կսովորես:

ՇՓՈՒՄ ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Եթե քո բնակավայրում եկեղեցի կա, միացի՛ր նրան, եղբայրներին ու քույրերին խնդրիր, որ քեզ համար աղոթեն: Թե եկեղեցի չկա՝ բոլոր առիթները օգտագործիր Աստծո զավակների հետ խոսքը կարդալու և աղոթելու նպատակով: Կտեսնես, որ այն կաշխուժացնի ու կամրապնդի հոգիդ:

Բայց ամենագլխավորը. Հիսուսին մոտ եղի՛ր: Հիշի՛ր Հիսուսի պատմած առակն այն մասին, որ չար ոգին մարդու միջից դուրս եկավ ու անջուր վայրեր գնաց, հանգստություն չգտավ, իսկ երբ տուն վերադարձավ, այն գտավ մաքրված ու կոկիկ: Այն ժամանակ նա գնաց ու կանչեց յոթ՝ իրենից ավելի չար ոգիների: Ու այդ մարդու համար վերջինը առաջինից վատ եղավ:

Այս առակը զգուշացնում է, որ Հիսուսի կողքին լինենք, միշտ նրա Սուրբ Հոգու պահպանության տակ: Եթե անհոգ մնանք, թշնամին ետ կգա ու նախկինը ավելի վատթար ձևով կկրկնվի:

ԴԱՇԻՆՔ ԱՍՏԾՈ ՀԵՏ

Ուզո՞ւմ ես խպառ ազատվել սատանայի շղթաներից, դաշինք հաստատիր Աստծո հետ ու միշտ նրա հետ մնա: Աղոթիր. «Հիսուս, ես քոնն եմ, իսկ դու՝ իմը: Իմ սրտում մնա, մինչև վերջին շունչս քեզ հետ եմ ուզում լինել»:

Քաջ եղիր, սատանայի կապանքներից հնարավոր է ազատվել:

Շատ վկայություններ այդ են հաստատում: Ահա դրանցից մեկը.

«12 տարի առաջ հետաքրքրությունից դրդված գնացի խաղաթղթով գուշակի մոտ, իսկ 4 տարի առաջ ,,բուժվեցի" ,,կարմիր քամուց": Գուշակությունից մի քանի ամիս անց ինձ այնպես համակեց իքնասպանության գաղափարը, որ քիչ էր մնում չորրորդ հարկից դուրս նետվեի: Դրանից հետո այդ միտքն հաճախ էր վերադառնում ու, երբեմն, այնքան լուրջ, որ վախենում էի կորցնել սթափ մտածողությունս: Ըստ որում, արտաքին բոլոր պայմանները խաղաղ էին, եթե ոչ գերազանց: Ինքնասպանության մտքի հետ վերջին պայքարս անցյալ տարի օգոստոսին է եղել: Այդ ժամանակ կարդացի մութ ուժերի մասին, որ շղթայում են իրենց հետ շփվող ամեն մեկին: Սարսափելի վախեցա ու անհանգստությունս այնքան մեծացավ, որ հոգիս անդորր չէր գտնում ու ես գիշեր-ցերեկ աղոթում էի, հակառակ դեպքում կարող էի կորցնել գիտակցությունս ու ինքնասպան լինել: Մի անքուն գիշեր Փրկիչս այցելեց ինձ, կարծես ֆիզիկապես զգացի, թե ինչպես է կտրվում շղթաներս: Անսպասելիորեն վրաս երանելի հանգստություն իջավ: Ինձ լրիվ ապաքինված զգացի, որին ձգտում էի երկար ժամանակ:

Այդ օրվանից ես այլ մարդ եմ: Ինձ Տիրոջ կողմից պաշտպանված եմ զգում, և ամեն օր զորություն եմ ստանում, որ հաղթեմ անհամբերությանս, դյուրագրգռությանս և այլն: Զգոնությամբ հայացք եմ նետում անցյալին, իսկ հավատով ու հույսով նայում ապագային»:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սիրելի ընթերցող այս գիրքը ավարտելուց հետո ավելորդ չենք համարում որպես վերջաբան, ձեզ ծանոթացնել նաև մեր՝ Հայ Առաքելական Եկեղեցու սուրբ հայրերի դիրքորոշումները արծարծված հարցի վերաբերյալ: Կարծում ենք, որ այն շատերին օգտակար կլինի ազատագրվելու սատանայի չարահնար կապանքներից ու որոգայթներից:

«Բազում գայլեր շրջում են գառների հանդերձներով. գառան հանդերձներ են կրում և ոչ թե՝ մագիլներ ու ժանիքներ, այլ հեզության և հանդարտության հանդերձ առած, խոնարհության կերպարանքի միջով պատրաստվում են խաբել սրտով անմեղներին...: Այսուհետև մեզ պետք է հոգևոր շնորհներ, զգաստ միտք հայեցող աչք, որպեսզի որոմն իբրև ցորեն տգիտությամբ չուտենք և կորստյան մատնվենք, որպեսզի գայլին՝ սատանային, հրեշտակ չհամարենք և նրա կողմից խեղվենք...: Քանզի շատերը կան, որ թալանում և կողոպտում են ճարտար խոսքերով և խաբեության ունայնության պատրանքներով»

(Կյուրեղ Երուսաղեմացի)

«Որովհետև որոշ կախարդներ, խաբելով զգայությունները, բնության օրենքի մեջ հրաշքներ էին գործում, և շատերը կարծեցին, թե դա Աստծո գործն է: Մյուս պատճառը դա սատանայի հպարտությունն ու նախանձն է, որ հենց սկզբից ցանկացավ աստվածանալ, և այժմ էլ ջանում է բոլոր մարդկանց կողմից երկրպագվել: Այդ նպատակով նրանք մտնում են կուռքերի մեջ և ձայն են տալիս մարդկանց, երբեմն հիվանդություն են տալիս և հետո վերցնում ցավը. այս պատճառով ընծաներն ընդունում են իբրև Աստված: Եվ ինչ չարություն, որ կամենում էին կատարել, նախապատրաստվում էին, որպեսզի մարդկանց խաբեն:

Իսկ թե՝ քանիսն են կռապաշտության տեսակները, իմանք, որ բազում տեսակներ ունի,

Նախ՝ դևերի կռապաշտությունը,

Երկրորդ՝ երկնքի լուսատուների պաշտամունքը,

Երրորդ՝ չորս տարրերի պաշտամունքը

Չորրորդ՝ մարդկանց պաշտամունքը,

Հինգերորդ՝ անբան կենդանիների պաշտամունքը,

Վեցերորդ՝ պատկերներն և մարդկանց ուրիշ գործերի պաշտամունքը,

Յոթերորդ՝ ժամանակների և նրանց մեկ մասի պաշտամունքը,

Ութերորդ՝ ոմանց կողմից ծառերի և բույսերի պաշտամունքը: Բոլոր կռապաշտությունները մեծ մեղք են, որովհետև նախ Արարչին զրկում են իր պատվից և արարածներին են տալիս այդ պատիվը, ու Արարչին և արարածներին հավասարեցնում են: Ինչպես ասում է Պողոս առաքյալը Հռոմեացիներին հղած թղթում. «Անեղ Աստծո պատկերը փոխարինեցին եղծված մարդու, թռչունների, չորքոտաններ և սողուններ պատկերի նմանությամբ» *(Հռոմ. Ա. 23): Իսկ աստվածային Դավիթն ասում է.* «Աստծո փառքը փոխարինեցին խոտակեր արջառի նմանությամբ» *(Սղմ. ճե. 20):*

Պարտ է հերքել նախ դևերի կռապաշտությունը, երկրորդ՝ լուսատուների կռապաշտությունը և

ապա, ըստ կարգի, մյուսներինը:

Նախ խոսենք դևերի կռապաշտություն դեմ: Դևերին երկրպագողները խիստ տաղտկալի են չորս պատճառով. նախ՝ որովհետև նրանք թշնամի են Աստծո, և շատ ծանր է Աստծո համար, եթե որևէ մեկը դևերին է պաշտում:

Երկրորդ՝ որովհետև թշնամի են մարդկային ցեղի:

Երրորդ՝ որովհետև շատ ստախոս են, ինչպես Հովհաննեսն է ասում. «Սուտ է նա և նրա հայրը»:

Չորրորդ՝ որովհետև թեպետև բնությամբ աղնվագույն են, քան մարդիկ, սակայն մեղքով՝ անարգագույն, և ոչ միայն մարդկանցից անարգագույն, այլև՝ անասուններից ու բոլոր արարածներից:

Եվ հայտնի է, որ բազում պատճառներով պետք չէ պաշտել այդպիսի հոգիներին:

Նախ, որովհետև չարիք են. և եթե չարիք են, ինչպե՞ս կարող են արժանի լինել պաշտվելու:

Երկրորդ. եթե բարիք լինեին, ապա չէին օգնի պտղնիկներին և կախարդներին, սակայն քանի որ չար են, չար գործը նրանց հաճելի է թվում:

Երրորդ՝ եթե բարի լինեին, սրբերին կսիրեին, որովհետև նմանը նմանին է սիրում, սակայն քանի որ չար են, թշնամի են սրբերին:

Չորրորդ՝ եթե բարի լինեին, մարդկանց կբարձրացնեին դեպի հոգևոր բարձրագույն բարիքները. սակայն նրանք մարդկանց տալիս են լոկ մարմնավոր փոքր բարիքներ, ինչպես գողությունը, հափշտակությունը և նմանները: Ապա ուրեմն նրանք չար են, և պետք չէ չարիքը պաշտել:

(Գրիգոր Տաթևացի)

Հիշեցնենք նաև, որ եկեղեցու յոթ խորհուրդներից առաջինի՝ մկրտության և դրոշմի ժամանակ, մարդը նախ պետք է մաքրվի դևերի կապանքներից ու նրանց զորության ազդեցությունից և նոր միայն իրավունք ստանա մկրտվելու և դառնալու Քրիստոսի եկեղեցու անդամ: Հնում մարդկանց բոլոր տեսակի դիվական կապանքներից ազատելու պաշտոնը կատարել են եկեղեցու հատուկ սպասավորները, երդմնեցուցիչ անունով: Մեր օրերում այդ պաշտոնը կատարում է քահանան:

Այս բոլորը իմանալուց հետո, ովքեր անտեղյակությունից լուսավորվեցին, թող այժմ քննեն իրենց անձերը և որոշեն, թե ում են ծառայելու, քանզի գրված է. «Ոչ մի ծառա, չի կարող երկու տիրոջ ծառայել, քանի որ կամ մեկին պիտի ատի և մյուսին սիրի, կամ մեկին պիտի հարի և մյուսին արհամարհի: Չեք կարող ծառայել և՛ Աստծուն և՛ մամոնային» *(Ղուկաս ԺԶ, 13):*

Իսկ վերջում, որպես օգնություն հավատավոր ընթերցողին, զետեղում ենք սուրբ Մարիամ Աստվածածնի բարեխոսությունը հայցելու աղոթք.

ՔՈ ԱՌԱՋ ԵՆՔ ԸՆԿՆՈՒՄ ՍՈՒ՛ՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵՎ ԱՂԱՋՈՒՄ ԱՆԱՐԱՏ ԿՈՒՅՍԻԴ՝ ԲԱՐԵԽՈՍԻ՛Ր ՄԵՐ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՂԱՋԻ՛Ր ՄԻԱԾԻՆ ՈՐԴՈՒԴ, ՈՐ ՓՐԿԻ ՄԵՋ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ԴԻՎԱՀՆԱՐ ԲՈԼՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ. ԱՄԵՆ:

² Ôà Â ø â² ðÆÐÜ² ðøÜº ðÆ¸ º Ø
(¶ñÇ· áñ Ü³ ñ»Ï³ óÇ. ´³ Ý Ê ²)

ՈՐԴԻ կենդանի ԱՍՏՈ, օրհնյալ ամեն ինչում, ահավոր ՀՈՐԴ անքննին ծնունդ, Քեզ համար չկա ոչինչ անհնար: Քո ողորմության փառքի անստվեր շողի ծագումից հալչում են մեղքերը, հալածվում են դևերը, ջնջվում են հանցանքները, խզվում են կապանքները, խորտակվում են շղթաները, կենդանանում են մահացածները, բժշկվում են հարվածները, առողջանում են վերքերը, վերանում են ապականությունները, տեղի են տալիս տխրությունները, նահանջում են հեծությունները, փախչում է խավարը, պարզվում է մեգը, ցրվում է մառախուղը, փարատվում է մռայլը, սպառվում է աղջամուղջը, վերանում է մութը, հեռանում է գիշերը, տարագրվում է տագնապը, չքանում է չարիքը, հալածվում են հուսահատությունները և թագավորում է Քո ձեռքն ամենակալ, Քավիչդ ամենայնի. ամեն:

² Ôà Â ø ÀÜ¸ º Ø ¸ º ì º ðÆ º ì
Î ² Ê ² ð¸ Üº ðÆ Î ² ä ² ÜøÜº ðÆ

Թագավոր հզոր, ծարավյալների ապավեն, նեղյալների Փրկիչ, որ մեզ համար խոնարհվեցիր հայրական ծոցից և մարմին առար սուրբ Կույս Մարիամից, մեր փրկության համար մատնվեցիր, բռնվեցիր, չարչարվեցիր, խաչվեցիր, թաղվեցիր, հարություն առար մեռելներից և փառքով համբարձվեցիր առ Հայր, արթնացրո՛ւ Քո զորությունը և արի՛ ապրեցնելու մեզ: Տե՛ր, սուրբ Արյունովդ գնվածներին թույլ մի՛ տուր սատանային գերել Քո փրկածներին և չարին՝ բնակվել Քո սուրբ անվան տաճարում: Եվ սուրբ Երրորդությանդ անունով կնքված մարմինն ու անդամը մի՛ թող չարի ոտնահարությանն ու ծաղրին, այլ գթա՛ Քո արարածներին արարչական սիրովդ: Տե՛ր ողորմի՛ր մեզ, քանզի մշտապես պարծեցանք Քո Խաչով, և պահելով թող պահի մեզ երևելի և աներևույթ թշնամուց և պահապան լինի Աստծո ծառա... (հիշատակել նրա անունը, ում համար, որ աղոթում եք). *ամեն:*